



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏՄԵՒ 1966 ՀՈԿԵՐԲԵՐ
digitised by A.R.A.R.©

ԹԻԻ 10

باکین
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارتنيك قزائجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
 ԱՍՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՏԻՍՏԻ

ՎԱՌԶ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՕՍԱԶԵԱՆ, Պ. ԱՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Վ. ՇԵԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban
 Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ
- Ա. ՍԵԻԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
- Զ. ՈՐԲՈՒՆԻ
- Կ. ՄԵՀԵԱՆ
- Բ. ԹԱՇԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Յ. Գ.
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ե ՅԱՐԻ, ԹԻՒ 10

ՀՈԿԵՍՊՈՐ 1966

ՊԵՐՈՒԹ

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՑ

ՄԻ ՄԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ

- Այդ օրուանից է վեր կարծես ամէն
ինչ փոխուել է, - ասաց Ինգրիդը:
- Աւելի շուտ ծերացել, - պատաս-
խանեց Վահէն:
- Այո՛, ա՛յդ էր միտքս: Կեանքը
կարծես ծերացել է:
- Եւ մարել այն լոյսը, որը պիտի
ողողէր աշխարհը, - ասաց Վահէն՝ յի-
շելով եղբորարարու Նախագահի պաշտո-
նակալութեան յայտնի ելոյթը՝ ձմրան
մի օր, երէք տարի առաջ:
- Տակաւին չեմ կարողանում հաշ-
տուել այդ մտքի հետ:
- Կեանքը այլևս նոյնը չէ:
- Նրա մահով ձեր մէջ էլ մի քան
մահացել է, - ասաց Ինգրիդը, իր կար-
միր ձիաթի դեկը դարձնելով դէպի
Քանաթիթիւլըն պողոտայ:
Գարուն էր Ուաշինկթոնում:
Նրանք ուխտի էին եկել ձոն ձիցճե-
րալտ Քենետիկի դերեզմանին:
Նիւ Եորքից յետոյ Ուաշինկթոնը

որտարաց ու սպիտակ մի քաղաք էր:
Սակայն Փրթոմաք պետի միւս կողմում,
բլրի լանջին կար հողաթումբը, որը ճըն-
շում էր Վահէին: Մի հեռաւոր տրամու-
թին էր իջել նրա գունատ դէմքին: Մա-
րաքաղաքում չէր եղել: Այլ պայմաննե-
րում պիտի օգտուէր երեքօրեայ հա-
մալսարանական արձակուրդից եւ աշ-
ցելէր Ուաշինկթոնի պատմական վայրերն
ու համբաււոր ծաղկատանները: Բայց
պայմանները նոյնը չէին: Օրերը սովո-
րական հեղով հրժշտել էին իրար եւ
տարիներ դարձել, իսկ ախտեղ, այն հո-
ղաթմբի տակ ննջում էր իր բարեկա-
մը, իր գաղափարական ընկերը: Վահէն
չէր կարողանում նրան անշարժ վիճա-
կում պատկերացնել: Եւ այդ միտքը
քանդում էր նրա հոգին:

Ու յանկարծ, լուսէ սլաքների պէս,
նրա մտապասկերում դրոշմում էր Ձա-
րենցի դէմքը: Այդ սեւում էր մի սկըն-
թարթ:

- Շատ քշախօսն ես դարձել, - մը-
տերմիկ խտուրթեամբ յանդիմանեց նը-
րան Ինգրիդը, - թերեւս արդէն ձանձ-
րացար իմ ընկերակցութիւնից:

- Ոչ, այդ չէ: Յոգնած եմ, - ա-
սաց Վահէն՝ Հպանցիկ շոյելով նրա ու-
կեպոյն մագերը, որոնք ջրվէժի պէս ի-
ջել ու անհող թափուել էին ուսերին:
Շատ գեղեցիկ չէր Ինգրիդը, սակայն
ինչ որ ասինքնոյ բան կար նրա արտա-
յայտութեան մէջ: Մի քիչ ցցուն այտոս-
կերներէից վեր կապոյտ, խոշոր աչքեր,
ազնուական քիթ եւ լայն, բարի բերան:
Պատեմ էր դերմանական շեշտաւորու-
մով: Վիեննայից էր, դուստրը Նիւ Յար-
քի Բոյլովայի Համալսարանի Հոգեբա-
նութեան ճիւղի դասախօսներից գոկտոր
Ալբերթ Բրուքի:

- Գարունն ու ես պիտի ջանանք
թարմութիւն պարզելու զեզ, - ասաց
Ինգրիդը, - դիտեմ, թէ որքան զեզ տա-
նապնջրեց զո աւարտագիրը: Մակայն
ուրախ եմ, որ երկամեայ ճգնաւորու-
թիւնդ վերջ դուռ: Այլեւս չեմ ուզում
մէկ բառ անգամ Չարենցի մասին լսել:

- Ինչո՞ւ:
- Պանդուռ եմ:
- Չարենցի՞ն:
- Ուզում եմ, որ միայն ի՞մ մասին
խօսես:

- Բայց Չարենցը այլեւս դարձել է
իմ, հետեւաբար եւ զո կեանքի անբա-
ժան մի մասը: Մի անգամ որ ընկնում
ես նրա յորձանուս գետը, այլեւս ազա-
տում չկայ:

- Հենց այդ է ինձ մտահոգողը, -
կատակով աւելացրեց Ինգրիդը, - ես
այլեւս չզիտեմ որտեղ է վերջանում Չա-
րենցը եւ որտեղ սկսում Վահէն:

- Ես վստահ չեմ:
- Ինչո՞ւ վստահ չես:
- Չգիտեմ ի՞նչ կը լինի արդիւնքը:
- Դոկտորայի տխրոս գրականու-
թեան ասպարէզում եւ Փիւլիցերեան
մրցանակ:

- Մոտացար Նորիւեանը:
- Երկուսով ճիծաղեցին:

Սպիտակ էր նաեւ Քանսթիթիւլըն
պոզոսան:


Պետական ծանրամարմին Հիմնար-
կութիւններ, թանգարաններ, նորափթիթ
ծառեր եւ լայնեզր մայթերի երկայն-
քով հոսող ժողովուրդներէի դեռ: Յե-
տոյ կտրոււմ էր յունական ոճը եւ բաց-
ւում հանրային մարզապետին-գրօսայ-
դին՝ իր կրճէին պահած մի անհաւատա-
լի օրելիակ՝ Ուաշինկթոնի յուշակոթո-
ղը՝ մատիտահման դուրսը կապոյտում
խրած:

Ամենուր դրօշակներ: Ամերիկացին
որչափ դրօշակ է սիրում:

Ճիւղը կարծես տեղից չէր շար-
ժուում: Ինքնաշարժերի քառահոս շար-
քեր լայնեզր պողոտայի իւրաքանչիւր
ուղղութեամբ: Ինգրիդը կրկին դուրսը
դարձրեց դէպի Վահէն եւ այս անգամ
զգաց նրա դալուքիւնը: Մի անանուն
ցաւ, կապոյտ ալիքի պէս եկաւ ու ողո-
ղեց նրա սիրտը: Ուզեց իր կրճէին առ-
նել նրա գլուխը եւ շոյել սեւ դանդաղ-
ները: Վահէի մկանուտ, քիչ երկարա-
ւուն դէմքի վրայ տիրական էին սեւ,
թախճոտ աչքերը: Նրա ճակատին գոյա-
ցել էին երեք խոշոր ակօսներ: Բացակայ
հայեացքով դիտում էր քաղաքը եւ ծը-
խում:

- Հեռու՞, մօտիկ ընկերներին, -
աշխարհներին, արեւներին, -
Հրամանս հագններին: -
Բոյլո՞ր նրանց, ում որ հագին
վստում է վառ, -
Բոյլո՞ր նրանց հագններին արեւավառ: -
Կեանքի՞, մտի՞ր այս ամենի
աղջամուղջում՝
Ողջակիզուող հագններին - աղջո՞յնի,
աղջո՞յն: -

Այդ բոլորը տեւեց երկվայրկեան:
Չբացաւ Չարենցը եւ մնաց միայն Ին-
գրիդի ոսկեշաղ կիսադէմը: Ուզում էր
ձերբազատուել Բանաստեղծի գերիշխա-
նութիւնից, վերադառնալ առօրեայի
զիրկը, դառնալ ուսանող-ուսուցիչ եւ
Ինգրիդի հետ բաժանել դարնան խիճը
ու բոլորը: Աւելի քան երկու տարի Վա-
սիլատեւ էր Չարենցի վրայ: Մեծ



ուղևորութեամբ սկսուած դործը հետըզ-
հեակ ուռնացել էր եւ քանդելով իր նա-
խածրադրի ամբարտակը յորդել էր
անզուսպ՝ իր ամենի ալիքներէ տակ թա-
ղելով ամէն սահման ու կազապար: Եւ
որչափ խորատուգուել էր Բանաստեղծի
մէջ, այնչափ զգացել իր տկարութիւնը՝
հասնելու նրան, կառչելու նրա երեսա-
կայութեան թեւին եւ պատասպարուելու
նրա կիպիչ արեւից: Եթէ չլինէր Ինգրի-
դը, ինքը վաղուց հրաժարած պիտի լի-
նէր նման թեպի մէջ միբնտեւուց: Ին-
գրիդն էր, որ օրն ի օրն ստուերի պէս
հետեւել էր, ոգևորել, յորդորել եւ քա-
րոյական կրուան հանդիսացել նրան:
Ինգրիդը զարթել էր նրա սենեակի
անբաժան մի գոյքը: Հինգ անգամ մե-
քենազրել էր ստուար աշխատաբու-
թիւնը եւ ամէն անգամ, երբ պատրաս-
տուել էր իր Վինսուր Արեւելքցու հետ
սօսելու գործի աւարտումը, Վահէն
քանդել էր կառոյցը՝ նոր գլուխներ ա-
ւելացնելով:

« - Թո՛ւյ է, Թո՛ւյ: Լրիւ չի արտա-
ցրում Չարինցի ստեղծագործական
թափն ու մեծութիւնը: »

« - Գո ուզածը գերմարդկայինն է,
Վահէ: Գու չես կարող մեր դարի հան-
ճարներէ մէկին սպառել մէկ հատորով:
Ի մտի ունեցիր, որ այս մի նախաքայլ է,
մի սկիզբ, որը ինքնին նոր լոյս պիտի
սփռի Հայ Գրականութեան վրայ, Ամե-
րիկայումս: »

Վեցերորդ տարեբակը մեքենա-
զրելուց յետոյ Ինգրիդը առաւօտեան
չուտ, սուանց Վահէի դիտութեան, գոր-
ծը առել եւ ուղղակի համալսարան դը-
նալով յանձնել էր փրոֆեսոր Մըքսու-
զըլին եւ թեթեւ սրտով ողջունել դարու-
նը:

Փիտթի կրօնից լուում էր Շոտա-
կովիչի մի համանուագը:

« Պենդինի ծուխի միջից անգամ զգա-
լի էր մայրեան բուրմունքը: Հովը եր-
բեմն փշում եւ ոսկէ թողերի տակ թափ-
ցնում էր Ինգրիդի դէմքը: Վահէն ջա-
նում էր ուշադրութիւնը յառել նոր քա-
ղաքի վրայ, սակայն Բանաստեղծը չէր

հեռանում նրա ներաշխարհի էջրանից:
Նոյնիակ ամենաառարկայական վայր-
կեաններին լոյսի պէս խուժում էր Չա-
րինցը, փոթորկում եւ անկանում: Լինում
էին պահեր, երբ Վահէն ոեւէ մէկի հետ
խօսելիս կամ առօրեայ մեքենական մի
շարժման մէջ ամբողջ դրուագներ էր
սպրում Չարինցի կեանքից:

- Գեղեցիկ է Ուաշինգթոնը, - ա-
սաց Ինգրիդը:

- Աւելի ամառանոցի տպաւորու-
թիւն է թողնում քան մայրաքաղաքի, -
պատասխանեց Վահէն:

- Այստեղ ես ապրել չեմ կարող:

- Ինչո՞ւ:

- Շատ անդորր է: Գերադասում եմ
Նիւ Եորքի ծխորը, - ասաց Ինգրիդը:

Թատիկայանն է իմ հոգիմ հիմա
Ամբո՛ղբ աշխարհի ու մարդկանց
հաճելիք:

- Խաբուսիկ է անդորրը, - ասաց
Վահէն:

- Ինչպէ՞ս:

- Ինձ թւում է ներքին Հրաբուխ է
սպրում այս քաղաքը:

- Որովհետեւ մայրաքաղաք է...

- Թէ՛ այդ եւ թէ՛ այն, որ աշխար-
հի քաղաքական դարկերակներէ մէկն է:

- Ի՞նչ են, Վահէ, քո ապագայ ծը-
րագրերը, - նիւթից նիւթ ցատկեց Ին-
գրիդը՝ միաժամանակ մեղմացնելով
Շոտաակովիչի երաժշտութեան յուզը:
- Իմ ծրագրե՞րը...

- Երբ դոկտորի տիպոս ստանա
Բոլոմպիայից, ի՞նչ պիտի անես:

- Չգիտեմ: Այդ մասին գեռ չեմ
մտածել:

- Ես գիտեմ: Գրականութեան ճիւ-
ղը աչք ունի թո՛ւ վրայ: Մըքսուզը
հօրս խօսել է թո՛ւ մասին:

- Դասախօս են ուզում, - անտար-
բեր Հարցրեց Վահէն մի պահ աչքերը
փակելով:

Ես - Հայաստանցի պոէտ -
Երկիր, ուր մշուշ է ու մտի -
Բոլորի՛, բոլորի՛. համար
Երգում եմ

Նորից
Հիմա:

- Այո՛, արդի դրականութեան: Ուրախ չե՞ս:
- Ձգիտեմ, Ինգրիդ: Իրապէս չգիտեմ:
- Ես ուրախ եմ, - բացականչեց Ինգրիդը՝ գլխի մի արագ շարժումով աչքին իջած հիւսերը յետ շարժելով:
- Ուզում եմ գնալ, - գրեթէ ինքն իրեն խօսեց Վահէն՝ կրկին մտապառկերում ընդունելով Ջարենցի կեանքի սլաքը:

- Ո՛ր...
- Հայաստան:
- Հայաստան...
- Այո՛: Ուզում եմ գնալ Հայաստան՝ տւելի լայնորէն ուսումնասիրելու համար Ջարենցին՝ իր ապրած երկրում:

Ինգրիդը մեքենարար ոտքը սեղմել էր ինքնաշարժի արգելակի վրայ: Ճիւղը կանգնել էր: Աղջկայ աչքերում վախ ու տարակուսանք մերուել էին իրար: Նրա շուրթերը ճեղքուել էին: Հեւում էր Ինգրիդը:
- Իրօ՞ք Վահէ... ուզում ես Հայաստան գնա՞լ...
- Ես կ'ստանամ քեզ:

Ես կ'ստանամ քեզ, ինքնաշարժերից փողերի կակաֆոնիա էր բարձրացել: Մեքենավարներից մէկը, պահպանողական գզնուտով մի պարոն, ինքնաշարժից իջել էր մատը սպաննազին Վահէին ուղղած քաղաքավարութեան եւ քաղաքացիական իրաւունքների մասին բաներ էր ասում:

- Շարժուենք Ինգրիդ, - ասաց Վահէն առանց ուշադրութիւն դարձնելու յուզուած ճառախօսին, - Նիւ Եորքից եկել եւ Ռալֆինկթոնը անշարժութեան ենք մատնել:

Բալո՛ր կողմերից հաւաքուած կլամ-թուրք,
Իտալացի,
Հնդիկ,
Վրացի,
Ռուս,
Շաւրմառացի -
Հայ,

Խուճխուզ,
Թաթար,
Կիրգիզ,
Ջիմացի -
Նիւ-Եորքից եկան,
Թանխի կղզուց,
Հետու Պաղտատից, -
Եկան -
Ո՛ր, եկան -
Բալո՛րը բամուռը,
Մաշա,
Գիւղացի: -

Երբ ճիւղը առաջ շարժուեց, կեանքը փանթիթիւշըն Պողոտայում էր բնականոն հունի մէջ մտաւ:

- Այո՛, - ասաց Վահէն, - ցանկանում եմ Հայաստան գնալ եւ քայլել այն բոլոր վայրերում, ուր քայլել է Ջարենցը:

- Բայց ինչո՞ւ, - գրեթէ աղէկատու վրայ բերեց Ինգրիդը:
- Աւելի լաւ հասկանալու համար բանաստեղծին:
- Միթէ՞ երկու տարին բաւական չէր...
- Երկու տարին մի կաթիլ է ծովում:
- Բայց կեանքը...
- Ուզում եմ շօշափել Հայաստանի հողը, ուզում եմ տեսնել Հայաստանի երկիրը, ուզում եմ լսել Հայ ժողովուրդի ձայնը, ուզում եմ զգալ այն բոլորը, որը յուզել ու ներշնչել է Ջարենցին:

Ինգրիդը դունաառուել էր: Նա ձախ ձեռքը թողեց ղեկից եւ կրծքին տանելով սեղմեց: Վահէն մի այլ գլանակ վառեց:
- Վահէ, ես քեզ այնքա՞ն եմ սիրում...
Տղան դարձաւ եւ շփոթահար նայեց աղջկան: Կարծես առաջին անգամ էր տեսնում այդ էակին:
- Ինգրիդ...
- Հենց սկզբից գիտէի, կանխազգում էի:
- Խնչը:

- Որ կարճ պիտի լինէր երջանկութիւնս :

- Ինչե՛ր ես ասում, Ինչբրի՞շ...

- Ես գիտէի որ քեզ պիտի կորցնեմ : Գիտէի այդ ու սակայն կառչում էի յոյսի շիւղին :

- Բայց Ինչբրի՞շ, դու գիտես, որ քեզ սիրում եմ, - ասաց Վահէն՝ տառապելով աղջկայ տառապանքից :

- Բայց մեր միջև միշտ եղել է անծանօթը :

- Ո՞ր անծանօթը...

- Քո Չարենցի նայրին : Ես գիտէի, որ դու նրան ես պատկանում, որ պիտի գնաս, որ անցողիկ է ամէն ինչ :

■ Բայց չէ՞ որ միասին կը լինենք :

- Մենք երբեք առանձին չենք եղել ու չենք կարող լինել : Դու երբեք իմը չես եղել :

- Ինչե՛ր ես ասում, Ինչբրի՞շ :

Աղջիկը այլևս չխօսեց :

Ճիտօրէն պտտուեց Լինքընի յուշարձանի հրապարակէ շուրջը, ապա ուղղուեց դէպի կամուրջի միւս աին է վեր բարձրացող բլրալանջը :

Գորշ Փրթոմաքը այդ կէտում ըստանում էր բուն մայրաքաղաքը Վերնի-նիա նահանգից : Կամուրջից վար գետի վրայ լողում էին արագընթաց նաւակներ ու առագաստանաւեր : Գիմացում, Արլինկթընի Աղալին Գերեզմանաստան բլուրի կատարի կանաչ Փոնի վրայ փայլում էր Լիի զդեակ-յուշակոթողը : Վահէն գիտէր, որ այնտեղ, այդ բարձունքում հանդում է նախագահ Քենետին : Մերձեցումը ալիկոծել էր նրա հողին : Մտաօցել էր Ինչբրի՞շ : Ինքն էր, Քենետին ու մէկ էլ ամենաներկայ պոէտը :

Որքա՞ն նման է եղել պահմ այդ՝
... ..
... նրա կոպիքը երէկ երբ քարացել եմ
... ..
... Խաղաղ -
... ..
... Գերմուս ուղեղի,
... ..
... նա տեսել է երեւի արեւային
... ..
... սի քաղաք...

Իջան ինքնաշարժից : Գերեզմանաստան վիթխարի մուտքի առջեւ բազմութիւնը ծփում էր : Մարդիկ մրմունջով էին խօսում : Բուրբի դէմքի վրայ մի տարօրինակ թախիծ կար, մի տեսակ խղճի խայթի դրոշմ : Մի ծերունի, որդուն կոթնած, անվստահ քայլերով առաջանում էր : Նա գլխարաց էր : Մանուկներն անդամ լուռ էին՝ խոշոր աչքերով գննելով ծնողների արտայայտութիւնը : Մի խումբ երիտասարդներ զուսպ բերաններով յամբաքայլ հետեւում էին ընդհանուր շարժումին : Գարնան բուրմունքը աւելի էր սրել հողի հանդիսաւորութիւնը : Վահէն նկատեց Ինչբրի՞շի աչքերի խոնաւութիւնը եւ ցուրտ ցաւ զգաց ներսում :

Կանգ առան :

Սպիտակ թառակուտի ցանկապատ, մէջտեղում համեստ հողաթումբ եւ թարմ ծաղկեպտակների դէպ, Հողաթմբի շուրջ մի քանի զինուորական դիւարկներ : Ուխտաւորներից ոմանք լուռ արտասուում էին : Որքա՞ն արցունք է թափուել այն օրից ի վեր, մտածեց Վահէն եւ զերմարդկային ճիշդ դարձը ընդ իր ներքին հրաբուխը զսպելու համար : Իր սատոյցէ ափում զգաց Ինչբրի՞շի ջերմ ձեռքը : Սեղմեց՝ ահռելի մեծնութիւնից փրկուելու միտումով : Ամբարիկան զինեալ ուժերը ներկայացնող շորս զինուորներ ցանկապատի շորս անկիւններում արձանացած հսկում էին :

Ու գլխիւր աղօթեց Վահէն :

«Միեւի Մա՛րդ, եկել եմ յարգանքս մատուցանելու այն բոլորին, որ էի՛ր, որ կա՛ս ու կը մնա՛ս : Եկել եմ քեզ առօրու, որ քո կեանքով հարստացել է կեանքը եւ քո մահով անմահացել մարդը : Եկել եմ քեզ յայտնելու, որ ուժն ու բանաստեղծութիւնը մարդկայնութեամբ են լիցրել մարդկութեան հողին եւ որ առանց բանաստեղծութեան ուժը միայն չարիք է ծնում : Եկել եմ քեզ հետ խօսելու նաեւ այն մասին, որ այսօր, ինչպէս կեանքիս բոլոր օրերում, տառապանքս մեծ է, որ իմ տառապանքը մի կաթիլն է ծովածուփ այն տառապանքի,

որի ալիքներում գալարում է մարդկու-
թիւնը դեռ շատ հին օրերից: Այսօր
տառապանք յանուն ինչի՞ եւ ինչո՞ւ
մարդը վիշտ է պատճառում մարդուն:
Այս բոլորը ստուծ եմ քեզ, սիրելի Բա-
րեկամ, որովհետեւ դու ջանում էիր ա-
մբեկ այդ ցաւը: Ուզում էիր խինդ բե-
րել մանուկների աչքերին եւ երջանկու-
թեամբ ողողել ազադայի ճանապարհը:
Յետոյ ինձ թուում էր, որ դու էլ միշտ
մենակ էիր տառապանքիդ մէջ, ինչպէս
ես եւ ինձ պէս միլիոնաւոր ուրիշներ
աշխարհի բոլոր կողմերում:»

«Դու հիմա խաղաղ հանդիսում ես
այս բոլոր լանջին, սակայն զիտցիր, որ
դու այժմ աւելի քան երբեք կենդանի ես
բոլորի սրտում: Բոլորը յիշում են քեզ:
Ոչ միայն յիշում, այլեւ ապրում քո ան-
վերջ կեանքով, նոր շունչ ստանում քո
բոբր զաղափարներից եւ յոյսի թեւերի
մէջ թաթախում իրենց երազները...»

«Դու սիրում էիր ասել, որ կեան-
քում ամէն ինչ իր ժամանակն ունի: Որ
ժամանակ կայ ծնունդու, ժամանակ՝
աշխատելու, ժամանակ՝ խայտալու, ժամանակ՝
սիրելու, սիրուելու եւ տառապելու
եւ ժամանակ՝ մեռնելու: Քո դէպքում
սակայն, սիրելի Մարդ, անժամանակ
էր մահը, երբ այնքան կեանք կար
ապրելու, այնքան երազներ նուաճելու
եւ այնքան յաղթանակներ պահելու:
Շուտ զնայիր: Անակնկալ եղաւ մեկնումդ
եւ յանկարծ ամայացաւ աշխարհը
եւ անեղբայր մնաց մարդկու-
թիւնը:

«Մի պահ քարացաւ սիրտդ կըս-
կիծի մեծութիւնից: Լճացաւ թախիծը
եւ յամբոցաւ ժամանակը: Ու երբ հա-
մատարած ամայութեան մէջ թուում էր
թէ մարել է կանթեղը, կրկին ցոյաց
կեանքիդ լոյսը, այս անգամ քիւրապա-
տիկ ու յաղթական, որովհետեւ մահ-
ուան մէջ խօսքերդ նոր իմաստ սաացան,
զաղափարներդ՝ նոր թռիչք եւ կեանք՝
նոր խորհուրդ...»

«Այսօր, սիրելի Մարդ, երբ դու

ննջում ես այս պարզ հոգաթմբի տակ,
մարդիկ աւելի մարդացել են եւ բանաս-
տեղծութիւնը ջանում է հաւասարակշռել
ուժին: Հիմա, բարեկամ, հորհրդերը,
թէկուզ եւ որչափ ծարաւ ուժի, գտնում
են, որ պատմութեան ամբողջ հեղեղնե-
րի նպատակը մարդն է եղել, որ մարդն
է սկիզբն ու նպատակը աշխարհի, որ
մարդով է անմահանում կեանքը: Այլ
խօսքով, սիրելի Մարդ, ուզում եմ ա-
սել, որ հողը թէթեւ լինի վրադ, որ քո
կեանքով ուժացել է մեր կեանքը եւ քո
մահով մի բան էլ մահացել մեր բոլորի
սրտում:»

«Հանդիսաւ քեզ»

Համակ լուսթեան մէջ յանկարծ
լսուեց մի մանկան ձայն:

- Մայրիկ, ո՞ւր է նախագահ Գե-
նետին:

Մի յաղթամարմին մարդ թաշկինա-
կը քառակուսի դէմքին տարած աշխա-
տում էր թաքցնել իր աչքերը:

Վահէին թուում էր, թէ այս բոլո-
րը ինչ որ պատրանք է, որ ուր որ է հի-
մա պիտի լսի Գենետիի մի ջիւ սուր, մի
քիչ ողբակոչ ձայնը դէպի վրժարժում ու
սթափում առաջնորդելու մարդկութեա-
նը: «Նա մեղանք էր, - կրկին անցաւ
Վահէի մտքով, - մեր սերունդից, մեր
ընկերն ու եղբայրը, մեր ապրումների
ու իրձերի արտայայտիչը: Ու սակայն
կար հողաթումբը եւ նրա ներքոյ մար-
դը՝ ցուրտ ու անբարախուն: Գլուխը
բարձրացրեց վեր ու հայեացքով շոյեց
Ուաշինկիթոնի սպիտակ-կանաչաւուն հա-
մայնապատկերը: Ու յանկարծ Չարեն-
ցին տեսաւ հորիզոնում՝ Հանճարեզ ու
կեռաքիթ: Յետոյ չքացաւ Չարենցը ու
նրա հետ նաեւ իր բանաստեղծութիւն-
ների հեղեղը: Երազ ու մտորում պաշա-
րեցին Վահէին: Քաղաքը հետզհետէ հե-
ղուկացաւ եւ նրա տեղ բարձրացաւ մի
այլ քաղաք: Մի քանի վայրկեանում նա
վերապրեց ա՛յն՝ ինչ ապրել էր բազմա-
թիւ զիշերներ, բազմաթիւ քաղաքնե-
րում:

Պ

Ամերիկեան Հագուստներով մտաւ Երեւան:

Այստեղ ամէն ինչ վարդազոյն էր, ճիշդ այնպէս, ինչպէս նկարագրուած էր արտասահմանի Հայութեան Համար Երեւանից հասնող Հրատարակութիւններում: Կենտրոնական Հրատարակից ճառագայթի պէս տարածուող կանաչագործ պողոտաներ, նորից հրատարակներ, նորակառոյց շէնքեր, ինամուծ պտուղներ ու արձաններ, ե՛լ կեանք ու եռուզու: Նախ թեքուէց, զհտնից մի բռու շող վերցրեց, նշխարի պէս շոյեց ու տրորեց ափում, ապա հոտոտեց: Յետոյ շուք եկաւ եւ արտասուածքը աչքերով ողջունեց Արարատին, որը զազաթը ամպերի ովկիանում խրած սակի հեղիաթաշին էր, քան իբրևան:

Բիւրաւոր Արարատներ էր տեսել: Տեսել էր լուսանկարներ ու տաղանդաւոր նկարիչների գործեր: Տեսել էր զըծազրութիւններ ու քանդակներ: Իր հոգու աչքերով տեսել էր նաեւ հոյաթեւ գուգաթիւներ, ոսկայն այն, ինչ որ տեսաւ այժմ, անկարագրելի էր: Լեռ չէր, այլ ինչ որ հինաւուրց ոգի, որը իբր ամեհի աչքը տնկած հայում էր Երեւանին: Արարատը այնքան հասանելի էր, որ նրան թուաց, եթէ ձեռքը երկարի, ահա կը գիպէր նրա կաթնամշուշ լանջին: Եւ ապա խոյանքը, իբր յաւիտենական արուկայութիւնը: Երկնքից կախուած մի մշտնջենական պատգամ, քար ու մտքառի երգում եւ զբախտ կորուսեալ եւ երազ մշտաՎառ, որ Հայաստանն է: Եւ ուր որ դարձաւ, զգաց Արարատի շունչը: Կարծես լեռն ահա պիտի բերլիական անդունդով զահալիտէր տանիքների ու մարդկանց սրտերի վրայ: Երանի տունը նրանց, որոնք Մաթիսի շուքի տակ են ծնուած, ստեղծագործում եւ մահանում: Եւ միտամանակ անհուն կսկիծ զգաց այդ նոյն մարդկանց համար, որոնք այդչափ մօտ ու այդչափ հեռու էին Արարատից:

Ձեռքերը տարատի գրպանները խթած քայլում էր մի սեղ հասնելու: Ան-

ցորդները յետ էին դառնում եւ նայում նրա քայլուածքին: Այդ մարդիկ ո՛չ ուրախ էին եւ ոչ էլ տխուր, այլ ասելի շուք մտազբառ: Վահէին թուաց, որ նրանք առանձին առանձին կղզեակներ են: Քաղաքը չէր ճանաչում ու սակայն կարողանում էր գտնել իբր ուղին: Ուզում էր գրկել անցորդներին եւ տակ, որ ինքը նրանց եղբայրն է եւ նման շատ բանիւր, բայց ինչ որ անշուտիւն պատուար էր տեսնում իր եւ նրանց միջեւ: Ու վախենում էր նաեւ, որ իրեն չհասկանան:

Կանգնեց մի բարձունքի վրայ եւ դիտեց Երեւանը:

Այստեղ ժամանակը զանդաղ էր ընթանում:

Երկնքի լաղուրը իջել էր Նորթի, Քանաքեռի եւ Արարիկի կրծքին եւ ապա վիթխարի քօղի պէս արարածուել քաղաքի վրայ, ուր չխնարի, ակացիայի, բարդիի եւ հացենիի կանաչը համադրուելով կապոյտին՝ զոյների շուշխարհիկ ծփանքի էր վերածուել: Նրան թուաց, թէ ինչ որ զիցարանական ոգիներ, ուր որ է, պիտի ցած իջնեն լեռներից եւ գուպարի մտնեն այս գորուտէ կրկէտում: Հեռու՛մ Արաքսից մասն, արծաթէ գօտու նման հոտում էր Հրազդանը:

Վահէն անէացած գիտում էր համայնապատկերը:

Այդքան զեղեցիկ քաղաք չէր տեսել:

Շէնքերն ու բնակարանները ուռուսի տուած՝ կարծես մի պտահ անշարժացել էին մի խենթ շուքաբերի կշռոյթում՝ կրկին տարածուելու, կրկին վեր խոյանալու խոստումով: Երեւանը ծաղկում էր մայիսեան զարթօնքում եւ տնից տուն ու պողոտայից պողոտայ զգայի էր ինչ որ անքակտելի դաշն, ինչ որ հարազատ մտերմութիւն, որը չէր մոռնում էր պարտութիւն վահէի սիրտը:

Քաղաք չէր, այլ մի ընտանիք՝ բիւրբիւրաւոր զուակներով, որոնք խօշ մի նոպայում որոշել էին իջնել հովիտ եւ ծնել իրենց զաւակները՝ աչքները յարած

Մասիններին: Վահէին թուաց թէ իրապէս լսում է հայ մանուկների խայտալի ճիչեր, որ քաղաքը երգում է, արձագանգում եւ շառագունում սիրոյ բերկրանքի ծովում:

Ու մի ակնթարթում, Երեւանի հետ, Վահէն ապրեց հայոց պատմութիւնը եւ հայեացքը Արարատին ուղղած երկար արտասուեց՝ ցաւի ու երջանկութեան յոյլը սրտում:

Նալբանդեանին շատ էր սիրում: Ռոշէց, որ այդ փողոցը լինի Նալբանդեան, ու մտաւ Նալբանդեան: Այդ շէնքերի մէջ հայեր են ծնունդ, մտածեց նա եւ ուրախացաւ, որ այսքան շատ հայեր կան աշխարհում: Տեսնես Չարենցը ո՞ր տան մէջ է ծնունդ, բայց նա ուրիշ տեղ է ծնունդ: Ի՞նչ տարբերութիւն:

Ես եկել եմ հեռու Իրանից:

Հայրենիքս է - Խամի Մակում:
Իմ հագում - արեւմ Իրանի,
Իրանի արեւմ է իմ հագում:
Իսկ արեւմ մէջ երգում է իմ -
Նայիրեան տխրութիւնն անծիր...

Կանգնեց, նայեց: Մի գիւղացի արհամարհելով ինքնաշարժերի երթեւեկը, ճեղքեց փողոցը եւ իր երկու ոչխարներին առած՝ հասաւ գիւղացի մայթը: Նրա կաշեման, արեւախանձ գէճքը վատահոթիւն ներշնչեց:

- Պարոն... եղբայր... խնդրում եմ ասէ՛ք, թէ ո՞րտեղ է դանում Չարենցի գերեզմանը:

Գիւղացին բերանը բաց եւ կիսախուփ աչքերով այնպէս նայեց նրան, որ կարծես լեռնային արձագանգ էր լսում:

- Հը՞րբը...
- Չարենցի գերեզմանը:
- Եղպէս մարդ չեմ ճանաչում, - ասաց գիւղացին, - մի իրիցիային հարցրու:
- Չարենցին չե՞ս ճանաչում:
- Չէ՛: Դու հասեղացի չե՞ս:
- Չէ՛, չե՛մ:
- Մի իրիցիային հարցրու:

Այդ պահին ոչխարները կտրծես խօսք մէկ արած սեւ գնդիկներ շարեցին մայթի վրայ:

Վահէն քայլեց վեր: Իրեն ճնշողը հեւքի, կռոյթի պակաս էր: Ինքը արեւմտեան մեծ ոստանների ծնունդ՝ չէր կարողանում հաշտուել Երեւանի գրեթէ հովուական անգործութեան հետ: Արեւը լաւ էր, տաք ու սպիտակ: Ռոշում էր, որ լինէր ծխոք, ձայն ու աղմուկ, քրքիջ ու տենդ: Մի գերուկ կին, բարձրահունիք ու տիրական, քայլում էր առաջ՝ երկու զամբիւղներ բռնած:

- Ներողութիւն, տիկին, կարո՞ղ էք ասել, թէ որտեղ է դանում Չարենցի գերեզմանը, - ասաց Վահէն՝ աշխատելով աչքերը հեռացնել կնոջ լայնածուփ կրծքից:

- Չարենցի...
- Այո՛: Եղբի՛ն Չարենցի:
- Դուք տուրի՞ստ էք:
- Ոչ: Եկել եմ ուխտի Չարենցի գերեզմանին:

- Ամերիկայի՞ց էք:
- Ինչի՞ց իմացաք:
- Ձեր հաշտուտներից, յատկապէս կօշիկներից:
- Գիտէ՞ք, թէ ո՞ւր է Չարենցի գերեզմանը:

- Դուք գիտէ՞ք Չարենցին:
- Այո՛: Ուսումնասիրում եմ:
- Չարենցը վաղուց է մահացել:
- Այո՛:
- Նա մեծ բանաստեղծ է:
- Իսկ գերեզմանը...
- Գերեզմանը...
- Այո՛, նրա գերեզմանը:
- Ազիտե՛մ պարոն, չգիտեմ: Կը նեւրէք որ չգիտեմ: Գիտեմ իր բանաստեղծութիւնները: Գիտեմ իր անուան փողոցն ու յուշակոթողը, բայց չգիտեմ Չարենցի գերեզմանը:

Վահէն, այն է, պատրաստուած էր շնորհակալութիւն յայտնելու կնոջ բարեացակամութեան համար, երբ գիրուկ հայուհին մայթը թխթխկացնելով գեռացաւ:

Այստեղ արդէն Հրապարակ էր, ամենաչեղր Երեւանի Հրապարակներից: Աւազան, ծաղիկներ, արձան ու շատրուան: Հայկական ոճի շինութիւնները՝

ծանր ու զուսպ, բերդի տպաւորութիւն էին թողնում: Ձեւը շարունակում էր կամարից կամար եւ վերջանում հանդիսաւոր լընութեամբ, պարտադրելով իր ներկայութիւնը: Բաց հրապարակում վաճէն ճնշում զգաց: Ուզում էր առնել այդ ոճը եւ մոգական մի հպումով սրացիկ թախչ տալ նրան, ձերբազատել ինքնակողմացումից: Այստեղ աւելի շարժում կար: Բազմութիւն: Տօնահանդէս լինէր կարծես: Անպատճառ մի բան կայ: Հանրակառքերից մարդիկ էին իջնում եւ անմիջապէս նրանց շրջապատում էին տեղացիները: Մտեցաւ իրարանցումին: Ամերիկահասց գրասարձիկներ են: Վաճէն այդ կուսակց աւելի նրանց զէմքի արտայայտութիւնից: Մաքուր սափրուած փափուկ զէմքեր, փափուկ աչքեր, եւ քարոզչի փափուկ ձայներ: Նրան աւելի հետաքրքրում էր Երեւանի երիտասարդութիւնը: Երիտասարդներից ոմանք նրան յիշեցրին Նիւ Եորքի Գրինվիլ վիլիզի քաղաքացիներին: Այն է, պատրաստում էր նրանցից մէկին մտենալ եւ Ձարենցի մասին տեղեկանալ, երբ մի ալիզարդ մամիկ թոռան ձեռքից բռնած կտրից նրա ճամբան:

- Որդիս, դու մեր Մուկուճին ճանաչում ես:

Վաճէն նայեց մամիկի անհաստալի կնճիռներին եւ սիրտը ճմլուեց:

- Մուկուճին...:

- Ախպէրս ա... յիցցուն տարի ա խաբար չուենեմ...:

- Ազգանունը ինչպէ՞ս է, մայրիկ ջան:

- Մուկուճ Մանգոտարեան, բա ո՞նց ա որ չես ճանաչում...:

- Որտե՞ղ է ապրում Մուկուճը, մայրիկ ջան:

- Բա ո՞նց չես ճանաչում մեր Մուկուճին: Լման աշխարհը ճանաչում ա ախորս...:

Վաճէն ուզում էր ասել, որ այո՛, ճանաչում է Մուկուճին, որ նա կալիֆորնիայում խաղողի մշակութեամբ է զբաղւում եւ նման շատ բաներ, սակայն փոխաբէն անաց:

- Կը ներես, մայրիկ, չեմ ճանաչում: Եթէ հասցէն տաս...:

Յանկարծ ամէն կողմից մարդիկ խուճեցին Վաճէի վրայ:

- Մեր Արմենակը Ռոզ Իսլանդում ֆարրիկա ունի, - ասաց մէկը:

- Իմ ջեռորդին Բոստոնում օտել ունի:

- Բա մեր Բաղդասարը...:

- Համեցէք մեղի...:

- Նամակ կը տանե՞ս...:

- Կալիֆորնիայում...:

- Փլորիդայում...:

- Նիւ Եորքում...:

Վաճէն նայում էր նրանց տառապած գեղեցիկ զէմքերին, անական ակօսներին եւ ուզում էր բոլորին գրկել եւ սեղմել իր կարօտակէզ սրտին, բաժանել նրանց ցաւն ու վիշտը, եւ հողին ափում առած ցանել Երեւանի վրայ՝ ամառային սոթ կրեկոյին մազող անձրեւի պէս: Այսքան վիշտ ու կարօտ, այսքան սպասում ու սէր ինքը ինչպէ՞ս ամփոփէր այս փխրուն անօթում:

Շարժումի մի ալիք բարձրացաւ: Երկու շափրուած Համազդեստաւոր մարդիկ ճեղքեցին խումբը, բռնեցին Վաճէին եւ տարան մի մասլէ շէնք: Բարձրացան մի նեղիկ միջանցք, ապա կալիպատ մի քանի դռներից անցնելով՝ մտան մի ընդարձակ սենեակ, որը յազեցած էր ծխախոտի կծու ծուխով: Համազդեստաւորները հեռացան՝ նրան մենակ թողնելով երրորդ Համազդեստաւորի մօտ, որը միջահասակ, թիկնեղ մարդ էր՝ սեւ խոիւ մազերով եւ սեւ քառակուսի բեխերով:

- Համեցէք, - ասաց բեխաւորը՝ մի աթոռ ցոյց տալով:

- Ես ո՞ւր եմ գտնում, - ասաց Վաճէն:

- Բարեխնամ ձեռքերում, - պատասխանեց բեխաւորը:

- Ինչո՞ւ ինձ բերեցիք այստեղ:

- Բարեկամական զբոյցի, - ասաց բեխաւորը իր լայնանիստ գրասեղանի վրայից ծխախոտի տուփը վերցնելով, - ծխո՞ւմ էք:

- Հայկականն է:
- Այո: Երեւանի արտադրութիւն:
- Շնորհակալու եմ, - ասաց Վահէն՝ ընդունելով հրաւերը:
- Լաւ ժամանակ էք եկել: Գարնանը գեղեցիկ է Երեւանը:
- Այո: Շատ գեղեցիկ, - ասաց Վահէն՝ հազիւ դուրսելով իր հագը:
- Բեխաւորը մի քանի անգամ քայլեց սենեակի երկարութեամբ եւ յանկարծ կանգ առաւ Վահէի զթի տողէ:
- Դուք լրտե՞ս էք:
- Ո՛չ, - պատասխանեց Վահէն:
- Ձեր սնո՞ւնը:
- Վահէ Վահանեան:
- Ձեր տարի՞քը:
- Չէ:
- Ո՞ր էք ծնուել:
- Լորէնս, Մասաչուսեթս:
- Ձեր գրադո՞ւմը:
- Ուսանող:
- Որտե՞ղ:
- Նիւ Եորքի Բոլոմբիա համալսարան:
- Ինչո՞ւ էք եկել Երեւան:
- Ձարեանցի գերեզմանը տեսնելու:
- Բեխաւորը իր ծանր, մազոտ ձեռքը մտերմաբար դրեց Վահէի ուսին եւ ջերմութեամբ խօսեց:
- Սիրում եմ ձեր ճշմարտաստութիւնը: Այդ բոլորը գիտէի: Կը ներէջ որ մի քիչ կողիտ խօսեցի ձեզ հետ:
- Բայց ինչո՞ւ էք ինձ այստեղ բերել, - բողոքեց Վահէն:
- Ասացի արդէն: Բարեկամական գրոյցի:
- Բայց ինչո՞ւ այս հարցաքննութիւնը:
- Ձեր իսկ ազահովութեան համար:
- Ձե՞մ հասկանում:
- Վտանգաւոր է, - ասաց բեխաւորը՝ աչքերում ժպիտ գոյացնելով:
- Ի՞նչն է վտանգաւոր:
- Դուք հրապարակում անկարգութիւն ստեղծեցիք:
- Ի՞նչ անկարգութիւն, - կրկին բողոքեց Վահէն:

- Տեսա՞ք չէ, թէ ինչպէս շրջապատել էին ձեզ:
- Այո, բայց դա խաղաղ գրոյց էր արեւակիցների միջեւ:
- Միեւնո՞յնն է, միեւնո՞յնն է, միեւնո՞յնը, - բղաւեց բեխաւորը եւ գնաց կանդնեց սենեակի անկիւնում՝ երկար լուսթիւն պահպանելով:
- Վահէն չգիտէր անելիքը: Չանձրոյթից ազատուելու համար բարձրացաւ աթոռին եւ սկսեց արտասանել.

Նոր լոյս ծագեց աշխարհիմ.
Ո՞վ այդ արեւը բերեց: -



Ահա ոսկեայ մի արեւ՝
Ճառագումով իր հրէ՝
Այգաբացի պուրպուրէ
Նժոյգների վրայ յեց՝
Նոր աշխարհիմ ու մարդուն
Թղում է լոյս գուարթուն:
Նոր աշխարհիմ ու մարդուն
Ո՞վ բերեց լոյսն այս արթուն,
Օ՛ր, ո՞ւմ ձեռքով վառուեց, ո՞ւմ
Հրակարմիր, հրավարս,
Աղամանգեայ լոյսը այս: -



Կեանք կեանքի բռնի տակ
Խոր գերութեան ընդերքում,
Իմաստութեան մի գետակ
Յիմարութեան համերգում -
Քանի՞ տարի, քանի՞ դար
Վկայեցիր աններքում...



Ափերին այս խաւարտչիմ,
Ուր հայրենիքն էր մեր հիմ,-
Չկա՞ր արդեօք գետ մի յորդ,
Որ գերութեան անհազարդ՝
Լուրք՝ հասելով դարից-դար՝
Մթութեան մէջ այն յաւառ
Այս այգաբացն էր կրում,
Հո՛ւր այգաբացն այս հեռու՝
Հնուց պահած իր ջրում
Օ՛ր, ըզգական այս հեռու...
Կեանք կեանքի բռնի տակ՝
Վրդի անկոր, հո՛ւր գետակ...

❖

Ահա վառոււմ է մեր մօր
Յաղթանակի լռելի բարբ.
Լւանում է նա երես
վառոււմ ոգին մեր անմահ,
Զքնազ արեւն այդ արի,
վառոււմ հրով աշխարհի...
Զկա՛յ ուրիշ արեւ է՛լ.
Նա է միայն, որ դարեր
Ամմար՝ պիտի արեւէ...

❖

Լռյալ վառոււմ օակայն այդ՝
Նժարներից կիմա մեճ
Յիմարութեանը չթափեմէ
Իմաստութիւնն այն արար.
Մեր անցեալի խորամիտ
է՛ջն այն արդար ու օամիկ՝
Մեծանանար ու վարար...

- Բռու՛, բռու՛, - ծափահարեց
բեխաւորը արդէն տեղաւորուած իր կաշ-
ուէ բազկաթոռում: - Կարգին պոէտ էք
եղել ու ինձ բան չէք ասում:
- Ես պոէտ չեմ, - ասաց Վա՛հէն:
- Բա էք ոտանաւորը...:
- Չարենցին է՛ նրա «Պատգամը»:
- Ո՞ր պատգամը, - անհանգիստ բե-
խերը շոյեց բեխաւորը:
- Չարենցի «Պատգամը»:
- Ես «Պատգամում» պատգամ չտե-
սայ:
- Ասում է՛ «Հայ ժողովուրդ, զո
միակ փրկութիւնը զո հաւաքական ուժի
մէջ է»:
- Իդպէս բանե՛ր ա ասում հա՛...:
- Այո՛, - ասաց Վա՛հէն, շիժանա-
լով թէ արդեօք բեխաւորը իր հետ կա-
տուի եւ մկան խա՞ղ է խաղում, թէ իրօք
ապուշի մէկն է:
- Ինչո՞ւ էք եկել Երեւան, - յան-
կարծ բղաւեց բեխաւորը:
- Երեւա՞ն, - անակնկալի եկաւ Վա-
հէն:
- Ինչո՞ւ էք եկել Երեւան:
- Ասացի արդէն: Չարենցի մասին
ուսումնասիրութիւններ կատարելու:
- Չասացիք: Կեղծում էք: Տեսնո՞ւմ
էք, թէ ինչպէս էք ստում:

- Չե՛մ ստում:
- Նո՛յնն է, կեղծո՞ւմ էք:
- Չե՛մ կեղծում:
- Դուք ասացիք, ուզում էք Չարեն-
ցի գերեզմանը տեսնել:
- Այդ ճիշդ է:
- Տեսնո՞ւմ էք, նորից էք կեղծում:
- Չե՛մ կեղծում:
- Չարենցը նացիոնալիստ էր թէ
կոմունիստ, - միանգամից շրջապոյտ
կատարեց բեխաւորը:
- Չարենցը հայ բանաստեղծ էր:
- Բայց զաղաքական դի՞ժը, - ձայ-
նը կրկին բարձրացրեց բեխաւորը, - զա-
ղաքական ի՞նչ ուղղութեան էք հետե-
ւում:
- Բանաստեղծ էր:
- Բանաստեղծ լինելը հասկացանք:
Բայց ի՞նչ էր Չարենցը: Նացիոնալիստ
թէ կոմունիստ:
- Երկուսն էլ:
- Այդպիսի բան անհնար է: Դուք
նորից ստում էք:
- Չարենցը հայ բանաստեղծ էր:
- Դուք ինչո՞ւ էք հետաքրքրուած
Չարենցով:
- Որովհետեւ մեծ բանաստեղծ է:
- Իսկ զուք ի՞նչ էք: Նացիոնալիստ
թէ կոմունիստ:
- Ո՛չ մէկը եւ ո՛չ էլ միւսը:
- Կեղծո՞ւմ էք:
- Չե՛մ կեղծում: Ես հա՛յ եմ:
- Դա անկարելի է:
- Ինչո՞ւ:
- Կամ մե՛ղ հետ, կամ մե՛ր դէմ:
- Ես հայութեան հետ եմ:
- Ուրեմն նացիոնալիստ էք:
- Եթէ հայութեան հետ լինելը նա-
ցիոնալիստ նշանակել է, ապա ես նացիո-
նալիստ եմ:
- Չլսեցի: Մնդրեմ կրկնէք, - ապա-
հակի զծնող շնչով գեղգեղաց բեխաւո-
րը:
- Եթէ հայութեան հետ լինելը նա-
ցիոնալիստ նշանակել է, ապա ես նացիո-
նալիստ եմ:
- Ափից ըուրն ընկած ձուկի պէս սկսեց
խայտալ բեխաւորը: Այնպիսի երջանկու-

թիւն էր եկել վրան, որ ակամայից սկը-
սեց ցատկոտեի, երգել եւ մանր քայլե-
րով պահարանից պահարան վազվզել։
Ապտ երբ իր փնտռած թղթերն ու հար-
ցարանները դասաւորեց գրասեղանի վը-
րոյ եւ հեռախօսով քաղցր թէյ պատուի-
րեց Վահէի համար, ձեռքը սիրալիրու-
թեամբ նրա ուսին դրեց եւ քաղաքակիրթ
արտայայտութիւն տալով դէմքին այս-
պէս խօսեց.

- Ես մեծապէս զնահատում եմ ձեր
ազգասիրութիւնը։ Արդէն մենք բոլորս
էլ ներքուստ նացիոնալիստներ ենք։ Ես
բազմաթիւ գրողներ օւ մտաւորականներ
գիտեմ, նոյնիսկ կուսակցական պատաս-
խանատու պաշտօնեաներ, որոնք ձեզ
պէս են մտածում Հենց այստեղ Երեւա-
նում։ Մաքուր Հայ լինել նշանակում է
նացիոնալիստ լինել՝ Հայութեան շահե-
րը դերադասել այլոց շահերից։ Ես հա-
րիւրին հարիւր տոկոսով ձեզ հետ եմ,
սակայն ձեւակամութիւնը պահանջում է,
որ զրանցուի ձեր այդ խոստովանութիւ-
նը։ Խնդրեմ այլ կերպ չմեկնարանէք։
Այս բոլորը լող ձեւակերպութիւններ
են...

- Ի՞նչ խոստովանութիւն, - հար-
ցրեց Վահէն։

- Որ վուք նացիոնալիստ էք եւ ա-
պօրէն կերպով էք Երեւան եկել։ Ման-
րամանութիւններ պէտք չեն։ Ձեր ստո-
րապատկերը բաւական է։

- Բայց ես օրինաւոր կերպով եմ Ե-
րեւան եկել։

- Հա՛, հա՛, հա՛, հա՛, շատ դուրս
է գալիս ձեր այդ յայտարարութիւնը։

Շատ եմ սիրում ձեր այս պաղարիւն
պահուածքը՝ ճիշդ նացիոնալիստի վայել
պահուածք։

- Բայց ես օրինաւոր կերպով եմ Ե-
րեւան եկել, - կրկնեց Վահէն։

Միանգամից կարծրացաւ բեխաւորը։

- Օրինաւոր, - թերահաւատու-
թեամբ վրայ բերեց նա։

- Ինչո՞ւ։ Միթէ կասկածո՞ւմ էք։

- Քուղթ ունէ՞ք։

- Այո՛։

- Մե՞ք իշխանութիւններից։

- Ձեր իշխանութիւններից։

- Ստորագրութեամբ։

- Ստորագրութեամբ։

- Փնջատո՞վ։

- Փնջատով, կնիքով։

- Կեղծո՞ւմ էք։

- Բնաւ չեմ կեղծել։

- Ձեր նմանները մի՞շտ էլ կեղծում
են։

- Դո՞ւք էք կեղծը, - բղաւեց Վա-
հէն։

Բեխաւորը քայլեց մինչեւ պատու-
հանը, ձեռքով շոյեց վանդականման ձո-
ղերը, ապա նոյն հանդարտ քայլերով
մօտեցաւ, ոտքերը շոյեց եւ հրահանդեց։

- Տոյց տուէ՛ք։

Վահէն ծոցից մի երկար հրովար-
տակ հանեց եւ փոսեց գրասեղանի վրայ։
Հրովարտակի վրայ աշխարհի բոլոր լե-
զուներով գրութիւններ կային եւ բազ-
մաթիւ ստորագրութիւններ։

(Վերջը յաջորդով)

Յ. Կ.

**ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ
ԵՐԳԸ**

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ա.

Ահառասիկ կը ֆազցրամայ այգն հեռուն,
 Ինչպէս կ'ըստի մը ժպիտը երազուն.
 Հովե՛ր կ'անցնին, դռե՛ր կ'անցնին բնութեան
 Ղնդեքէ՛ն՝ ուր կ'եռայ խռովքը վազուան.
 Ու կը մըխան ակօսները շարէ շար,
 Կը մըխայ մեծ սիրտը հողին անդադար.
 Ձիւնին մէջէն ձիւն ծաղիկներ կը ժպտին,
 Իրենց մանուկ աչուրներով երկինքին
 Լեռներուն սիրտը կը փզճկի ֆազցրախօս,
 Կը փրփրքի հովտին ջրվէժն յարդաեռ.
 Բոյներուն ծոց թռչունները կ'արթնան,
 Սիրտէ ի սիրտ կ'անցնի սարսուռը գարնան.
 Այ կ'արթնայ բնութիւնն իր երազէն,
 Որ իր գիրկը ծառ ու ծաղիկ երազեն:
 Կեա՛նքն է, կեա՛քն է սոքի ելիք կը կանչէ,
 Տիեզերք մը պիտի ծնի ոչինչէ...:

Ո՛ր, տիեզերք մ՛այ անդռնիս մէջ կ'եռայ
 Ու կը կանչեմ հարիզուններն հեռակայ.
 Կը բամամ սիրտըս երկինքի կապոյտին՝
 Որ իր լռյալ գիշերներըս ծաղկոտին:
 Գեղեցկութեան կ'որոնեմ ակը անմահ,

Կուգեմ թռչիլ անհունին գիրկը անահ-
 Կը պաղատիմ աստուածներու անհուն-
 Բարձունքներու՝ աննշուան, քոյրն աստղերուն-
 Սիրոյ, սիրոյ, սիրոյ համար եմ գիմով,
 Մերթ փոթորի՛կ եմ ռոնացոյ ու մերթ՝ ծով-
 Մըրկահաւուն եմ մերթ, խռով ալեաց մէջ,
 Մերթ ծիածան՝ լեռնէ ի լեռ փողփողէջ-
 Ես կարօտի սահանք մըն եմ հրեղէն՝
 Որ հեղեղի կ'ուզէ աշխարհն համօրէն-
 Կուգէ գրկի իր թեւերուն մէջ հգօր,
 Ողջ մարդկութիւնն՝ իր գուպարին մէջ անգօր:

Վարգե՛լ կ'ըզձաւ կատարներէ ի կատար,
 Կ'ըզձաւ սիրոյ իրոն ջրվէժ մը վարար,
 Լուալ մըռայլը մխացոյ սիրտերուն,
 Ծագէ ի ծագ, մերձաւորին թէ՛ հեռուն-
 Գեղեցկութեան զի մեհեաններ գիտեմ ես,
 Ուրտեղ սիրոյ քրտուհիներ վարդերես,
 Մեղեդիներ կ'երգեն քնքայլ, երկնային,
 Որունց հագույս աչքերն անս կը նային-
 Ու կը յորդի գիմովութեամբ իմ հագիս,
 Բարբառներով շուշանի, վարդ ու նարկիս:
 Ալ հազն հիմա ռուքերուս սակ կը կէի,
 Ալ ընկե՛րն եմ աստուածներուն երկինքի-
 Աստուածներուն՝ որ կը նային աշխարհին-
 Ուր ջամբեցին իրենք եւ շարն՝ եւ բարի՛ն-
 Աստուածներուն՝ որ եզան միշտ համր ու կոյր,
 Հէ՛ք մարդերուն տառապանքին, հագա՛ր, բի՛ւր:

Ո՛չ, ես ասպետն եմ աննաւան երազիս,
 Եւ անդադար աշխարհը կը կանէ գիտ-
 Ես հ'ուրանում բոլոր գահերն երկինքի,
 Գահ՝ որ իր ծով մեղքերուն տակ կը կէի-
 Աստուածութիւնը կ'որոնեմ ես սակայն,
 Բազմախորհուրդ այս հազին մէջը միայն-
 Կ'որոնեմ գայն ընդմէջ շուշան ու վարդի-
 Կեանքին մէջն իսկ՝ որ դառնութեամբ կը յորդի,
 Որ կը գեղու եւ շնորհով ու սիրով,
 Որ կը լեցնէ հագիմ անմահ սարսուռով-
 Ես մեծութեան քահեր գիտեմ անկասկած-
 Ուր կը նստի մարդը՝ ինքը, զերթ Աստուած:
 Ես ալօսներ գիտեմ պարարտ ու բեզում
 Ուր՝ քրտինքն է նման գոհար աստղերուն,
 Ուր՝ պատմութիւնն ամբողջ համգոյց մ'է յրթիմ,
 Յունրժական պայքար՝ լոյսին ու մութին:

Պէտք է մեկնի՛ր. առագաստները կ'առնին
 Բոց համբոյրին տակ կարօտին աւ սէրին.
 Երէկն ոսկի հեքիաթ մըն է մոգական՝
 Որ կը ճետէ մոխիրքներում տակ գուժկան,
 Վէմերս'ն տակ՝ ուր վեհերը կը պատկին,
 Մտիկ կ'ընեն սրտին տրտիւր մեր դարին,
 Այսօրն ըսես գուպար մըն է անկասկած
 Ուր՝ կը վիճին ժողովուրդներն ու Աստուած.
 Ու երկիւմէն շատուածները կ'իջնեն վար,
 Թափո՛ւր. ձգած իրենց գահերը խաւար.
 Ու վազը, որ իրքեւ արեւ պիտ' ծագի,
 Բոլո՛ր կուտփերը պիտ' համուին վաճառի՛.
 Ո՛ր վ դար, ո՛ր վ դար, ահա քեզի՛ կը սպասեմ
 Ու կը ձայնեմ ես ոգիները վսեմ:

Պէտք է մեկնի՛ր. հարիզոններն հեռուոր
 Կը քաղցրանան շարշուներու մէջ աղաւթ.
 Մշուշներու մէջ լեռներն են ձիւնափայլ,
 Յախտեցին գերք կոթողներն անայլայլ.
 Պատմութիւնը կ'երգէ անունց գլխուն վրայ
 Ուր՝ նստեր է ձիւնը իրքեւ շափուղայ.
 Ու ծովե՛րը, ծովե՛րը որ կը ծփան
 Իրենց գմբախտ կոհակներով անխափան,
 Որ կը լուան իրենց անհուն ծոցին մէջ
 Դէմքը լուսնին եւ աստղերուն աչքն անշէջ,
 Ու ձայններն՝ որ կը բարձրանան դաշտերէն,
 Անտառներէն՝ ուր կ'արածի յայր երէն,
 Պլպալին երգն՝ որ կ'անուշնայ վարդին վրայ,
 Քերթողներուն սիրտն՝ որ սէրէն կը սարսույ,
 Բոլորը մէկ ստէի՛ ելած կը կանչեն,
 Աւերակներն ու ոստաններն հողաշէն:

Պեգա՛ս, Պեգա՛ս, աստուածայի՛ն երիվար,
 Դե՛մ է որ զիս պիտի տանիս վեհափառ
 Բարձուցներուն իտէպին սրբագան,
 Մինչ կ'անհետին վարձ անդունդներն ու կածան:
 Ու մերկ ես դուն. աստուածային մերկութեամբ.
 Քեզ համար չեն ոչ սանձն ոսկի, ոչ ալ՝ թամբ.
 Բոց մարմինըդ գերք հայելի կը շողայ
 Ուր կը ցոլան երկնի աստղեր շափուղայ
 Նաւիդ վրայ պիտի տարամ անբաժան՝
 Ինչպէս կ'իյնայ արծիւն շրտի՛ն վրայ դաժան.
 Պեգա՛ս, Պեգա՛ս, բաշերդ պիտ' փրփրերին
 Եւ հրդեհեն սատափ կուրծքը երկիւմէին.
 Լուսնի ոսկին ճակտիդ վրայ պիտ' փայլի,

Կեանքին խորհուրդը ցուցնող գերք հայլի.
Մինչ արփաշող աղանձնողը ասողերուն
Պիտ' կայծկլտայ իրքնս պայտ քու ոտքերուն:

Պեզա՛ս, Պեզա՛ս. դուն քաջարշաւ պիտ' սուրաս
Երկնի կարպոյտ տարածութեան մէջ անհաս.
Պիտ' նարակիս ծեր Բարշաւին յարդը հուր,
Ջոր վանագնը ցանկց այնտեղ լիսբուն:
Կը կայտըռես անա առջեւն իմ սեմիս.
Բոց կը շնչես, կը շնչէ բոց եւ հոգիս:
Պիտի մեկնի՛նք եւ առաւօտն է բարի,
Կարօտը մեր էութեանը մէջ կ'այրի.
Հովե՛րն անա, հավերն անա բեւարաց,
Բարսումնաւտ, կը սուրան դէպի Աստուած.
Կը կանչէ կեանքը ձայներով հազար, բիւր,
Սիրոյ երգը կը թրթրոայ համասփիւս,
Սէ՛րը, սրով մեր երազը կ'առնէ թեւ,
Սէ՛րը, սրով մեր հոգին է անդեղեւ,
Ա՛ն կ'ընէ մեզ աշխարհին սէր ու Աստուած.
Մինչ կը մնանք մենք իր գերին անկասկած...:


Ու մեր սէրը հիւսիսայգի մ'է համգոյն,
Որ կը ծագի սառայցիմ վրայ սիրտերուն.
Ու կը գնդուն ագրիւրները բարութեան,
Անապատներն իրենց քունէն կ'արթննան,
Անգններուն մէջէն ծարաւ հոգիին
Կանաչ ծիւրը երկինքին կը նային:
Ու ճառագայթն որ անդամդին մէջ կ'իյնայ,
Յոյսին ակօսն հոն ծաղիկներ կը բանայ.
Մենք ճառագայթն ենք՝ երկինքէն իջած վա՛ր,
Լայսին շողն՝ որ կը վանէ մութն ու խաւար:
Մեր շրթները լուսնին մեղրով են օծում,
Մենք՝ դիեցած լոյս կաթովը աստղերուն,
Պիտի երթանք հզօրին ու սկարին
Հոգիներուն լուծել խորհուրդը խորին,
Պիտի բախենք հիւղակներուն դուռը ցած,
Սեղանն սրուն կը պաղատի շերտ մը հաց...:

Պիտի երթա՛նք, երկվարս երավարս.
Պիտի անցնինք մենք սահմանները անհաս.
Տարածութիւնն ու ժամանակը անհուն,
Մեզի համար խորհուրդներ են ամառուն:
Զքացած են նանապարհներն ու կամուրջ
Այսօրը կայ՝ ու երէկն այ է անուրջ,
Մինչ աչքերս լուսապայծառ կը կարոյան

Մշուշներուն մէջէն ծագող ապագան:
 Պիտի երթանք մենք. լեռներէն, ծովերէն.
 Դամբաններն ալ ոգեկոչենք պիտ' նորէն,
 Ու մերք սրբենք պիտի փաշին գարեբուն,
 Պիտ' խռովենք ոսկորները եայրեբուն,
 Անգիտանանք պիտի մարմար եւ ռալի,
 Որոնց ներքեւ յանախ ոչինչը կանգչի.
 Պիտ' համբարենք հողակոյտեր նոր ու հին'
 Ուր կը հանգչի նառագայթը հանճարին:

Հովերուն հետ պիտ' հառաչենք մենք խորին,
 Բարաստանին մէջ գեղին ու շնորհիմ.
 Պիտի շնչենք գեղեցկութիւնը վայրի
 Կատարներուն՝ ուրտեղ արեւը կ'այրի.
 Պիտի խօսինք մայրիկներուն հետ լեռան,
 Պիտի քաջինք անդունդներէն անվարան,
 Ունկընդընենք պիտ' պլպուլները անուշ.
 Վարդենիին վրայ գինով ու անյուշ.
 Քերթողներուն յուսանշոյլ բաժակին
 Պիտի հեղունք արեւահամ մեր գինին,
 Ոգեկոչենք պիտ' սրայթարներ նոր ու հին,
 Մենք՝ գորավիզը միշտ արդար բազակին:
 Տառապանքի զի կայաններ գիտեմ ես,
 Ուր հերոսները կը մեռնին յա՛ւ, անոնս.
 Ուր կառափնատ կ'երթան մարդիկ երգելէն.
 Ատելութիւն համակ, վըրէժ, մազն ու էէն...:

Պեզա՛ս, Պեզա՛ս, ու մեր նամբան վերջ չունի...
 Եւ ինքե՛րըք թեւեր չեն բռնուի,
 Պիտի նախքեւ դուն հրաշքին թեւերով.
 Հար նետ մ'իբրեւ տարածութեան մէջ խոռով.
 Վազիդ առջեւ կատարները պիտ' կ'էին.
 Դուն նամբարդն եւ յուսալքսակ երկինքին.
 Մինչ սմբակները պիտ' լուսյ ծովն անհուն,
 Պիտի հպի նակատը ջինգ աստղերուն.
 Պիտի լսես դուն հեծեծանքը նկուն,
 Անօգնական, շփոթահար մարդերուն,
 Քառուղիի մ'առջեւ որոնք կը սպասեն
 Որ ուղեցոյց լոյս մը ծագի երկինքէն,
 Որ գտնեպինդ ելլեն կեանքին դէմ առ դէմ.
 Որ բազուկի դէմ բազուկ մը կարողեն.
 Զի ապրիլը այլեւս շնորհ մըն է գա՛ւր՝
 Երբ չի շողար ակիդ սուր մը սայրառար:



Պիտ՝ սաւառկիւնք լռյս գագաթէն Մասիսի,
 Խորհրդանիշն անմահութեան եւ յայսի.
 Պիտի մեկնիւնք հայրենիքէն հայութեան՝
 Ուր, մարդ, Աստուած կը գուպարին յաւիտեան.
 Ուր ժամհան է միշտ վեհակը բախտին,
 Հաւատքի լռյս գամբայ մըն է Միր-Կաթին:
 Ու Զակրուքը կատարներով երկնանքն,
 Տէրազէնտը, անդունդներովը զժխեմ
 Պիտի իրենց առասպելները պատմեն,
 Պիտի խօսին Ֆերիտունէն, Ռուսթւմէն,
 Վսեմ երգեր պիտի երգեն գարնայնի.
 Սէրէ գիտնով էերթողները իրանի՝
 Որ կրօնքին լքած գիրքերը ամէն,
 Ծունկի եկած, արդ կը կարդան Շահնամէն...:

Ու ծագէ ծագ մեր արշաւը անդադար
 Պիտի ճանչնայ կեանքն ու մահը դարէ դար.
 Պիտի ոգեմէ անբակնեմն՝ հոռ ու հոռ.
 Պիտի կանչեն մեզ Նիմուէն ու Բարեւան,
 Պիտի պեղենք գերեզմաններ խաւարտչին՝
 Ուր երբեմնի մեծութիւններ կը հանգչին,
 Ու կործանուած կոթողներէ դէպի վեր
 Պիտի նային մեզի Ակկատն ու Սումէր.
 Իրենց վազքին մէջ յըռով ու յուսահատ
 Պիտ՝ ունկնդրենք հայոց Տիգրիսն ու Եփրատ.
 Պիտի կանգնի մեր դէմ Հարուն-էլ-Բաշիտ.
 Փշուտ վարդն այդ, անապատին անժպիտ.
 Իրենց գանձերը պիտ՝ բանան ուղիսահաս,
 Հին շատանները՝ Պաղտատն ու Դամասկոս.
 Եւ Արարիան պիտի պարզէ մեր առջին
 Անյայտութեան մէջ երազող իր հագին:

Պեգա՛ս, Պեգա՛ս, լռյսն երբ վարդին վրայ կաթի՝
 Պիտի հասնիւնք մեմէ աշխարհը խորհուրդի.
 Վէտաներուն պիտի տաղերը հնչեն.
 Ինչուէն ու նուիրական Գանգէտէն.
 Հնդկաստանը պիտի բանայ մեր առջեւ
 Լուսածիծաղ արիական իր հոգին.
 Մայլապատիկ այնտեղ նստեր է Պաւտոսն.
 Ու կը բանայ կեանքին առջեւ Նիրվանան.
 Սաֆիա-Մունի, Սաֆիա-Մունի, ո՛րք ես դուն,
 Պղծաբարոյ ու մեմգաւար այս դարուն.
 Ո՛րք երազը սիրոյ վսեմ գարունի,
 Ո՛րք օրէնքները Մանուկն ծերունի.
 Կեանքն է դարձեր անյուսութեան Սանաբա

Բայց ան վսեմ երկունքով կը սարսըռայ .
Պիտի ծնի անկերպարան քառսէն
Նոր ժողովուրդ մ'աշխատանքի ակօսէն :

Արեւելքը, ո՛հ արեւելքը մըքիմ
Ընկզմած խորը իր մշուշ խորհուրդիմ .
Այ կ'արթննայ տակաւ մոռ'յլ երազէն,
Նոր երգ կ'երգեն հիւսա Գանգէսն ու Եակ-Յէն :
Կունկուկիտի հեզ թռները անխօր,
Այժմ հեծեր են չիմ վիշտալը կարմիր .
Մինչ Միքստուն քարձերու վրայ սնդուսէ,
Կեանքի, մահուան, Առ երազներ կը հիւսէ .
Ինտանցիան ծոցն իր կապոյտ ջուրերուն
Կ'երգէ ազատ, նոր կեանքի մը ակէրուն :
Պեզա՛ս, Պեզա՛ս, ովկիաններէն պիտ' անցնինք -
Պիտի կտրեմք ամապատները անհեզ,
Ու հեռուի կապոյտէն մեզ պիտ' նային
Բուրգերն իրենց կատարներով երկնային,
Բուրգերն՝ ուրտեղ փարատներն վեհափառ
Փակեցին օր մ'իրենց աչքերն անբարառ . . . :

Ոտում մըն ալ, ռստում մըն ալ իմ բո՛ց ձիւն
Ջինջ ծովերէն, կղզիներէն ալ անդին,
Որ ռաբունեմք տեսզծըւած Տրովադան,
Լուսապայծառ աստուածներով ելլատան .
Հիլիկունը՝ մուսաներովը իր ցնծուն,
Քերթողները՝ յաւերժօրէն երազուն .
Իմաստանները՝ դափնեգարդ ու բապիկ,
Հեքերաներն՝ իրենց սէրովն երանիկ . . .
Թըռի՛չ մըն ալ, ու շանցած մէկ ակնբարթ
Պիտի կանգնի մեր դէմ Հասմը հայարտ,
Հասմն հզօր, զանձի, փառքի ծարաւի,
Ոտանը՝ որ կ'իրքի հնացիմ մէջ կ'այրի,
Կետարները՝ իմաստուն կամ խելագար,
Աստուածներուն հետ մրցումն մէջ անդադար,
Աւերակներ՝, ավերակներ յաղթակուն՝
Ուր անցեալին առջեւ՝ ծուռկի՛ է ներկան :

Պիտի տեսնեմք փառքերը որ կը փքլին,
Աւերակներ՝ որ նոր կուտքեր կը ծընին .
Մոխիրներէն անոնց ահա կ'առնէ թեւ
Գեղեցկութեան նոր փիւմիկ մը արփաթեւ,
Ու կը փայլի իր արեւիմ տակ շէնդ
Լայս երկունքով Իտալիան թխագեղ .
Ուր դարէ դար, ջահն արուեստի ծիրանի

Սրտին ճանաչ կը փնտռէ գարունի :
 Աստու մըն ալ կեանքի սեւին իբր հսկայ ,
 Կ'աշտանակէ իր հասակը Եւրոպա :
 Ժողովուրդներ իրենց ճանձն կ'արքննան .
 Խռովայն՝ յգ մեծ երազովը վազուան ,
 Նոր աստուածներ կ'որոնեն ու նոր բազին .
 Կը գրկէ մին՝ մանր , միւսը՝ դափնին ,
 Եւ արիւնի ու աւերի ընդմէջէն ,
 Արժաները իրենց գահէն վար կ'իջնեն . . . :
 Թռի՛չք մըն ալ , քռի՛չք մըն ալ ու նարէն
 Պիտի տեսնենք աշխարհ մ'ելած քառսէն ,
 Նոր մարդկութիւն , նոր ցաւերով երկունքի
 Ուր՝ ամբոյններն հզօր կեցնը են ստի .
 Երկու աշխարհ սպառազէն դէմ դիմաց .
 Բարին ու չարը կը վիճին իբր Աստուած . . . :
 Մինչ բարառի մին շանթերովը Ջեսին ,
 Կ'երկարէ միւսը՝ սիրոյ սուրբ ճիթեկին .
 Խաղաղութեան խաբխուլ նուր կը ծփայ
 Յոյսին պատռոց ալիքներուն կարծիքն վրայ :

Ահա՛ նամբան՝ ուրկէ պիտի դուռ սուրաս ,
 Իմ արփաքել , աստեղածուփ վեհ Պեգաս .
 Բարձունքներէն , կատարներէն երկնանքն ,
 Պիտի անցնիս հրաշքի մը պէս վըսմ .
 Թող քու վագրիդ առջել նսնմ անհետի .
 Անաստուր գերք բարաստան ծաղկատի ,
 Թող լոյս ծագի հագիներուն մէջ մթին ,
 Տոյսին սերմերը ծաղկի պէս քող փթթին .
 Աշխատանքի եւ սիրոյ երգը անուշ ,
 Թող բրբըռայ հոգիներուն մէջ քննոյշ .
 Արդարութեան քող ծագի այգը փարփառ .
 Թող հագնի դարմ՝ իր ծիրանին վեհափառ .
 Ողջ մարդկութիւնը քող նստի խնջոյճի
 Առանց վշտի , առանց մաշող տանջանքի
 Ու մեռն ալմտեղ կոչնական ու մատուակ՝
 Հեղձնի գինին յաղթանակին , շինջ , յստակ :

ԱՐՄԷՆ ՍԵՒԱԿ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Դ.

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՄՐՐԻԿԸ

1903-ի ամառն էր:

Մըքիկ մը կու գար հիւսիսէն, կ'անցնէր Բասենէն եւ Խնուսի բարձունքներէն, ու փոթորկալի հովի մը վերածուելով՝ կ'իջնէր Մշոյ Գալտա «ՄՐՐԻԿ» խումբն էր, որ Յորդոմի ղեկավարութեամբ կը ճեղքէր բոլոր պատուարները ու անվտանգ կը մտնէր Բիւրակնեան լեռները, անսահման խանդավառութիւն բերելով Խնուսի Կոմիտէներուն եւ մարտիկներուն:

Սուրհանդակը առաջին րոպը պիտի տար Աբուսի Հրաչին, որ Խնուսի շրջանի պատասխանատուն էր: Յուզումնահար եւ շնչասպառ կը խօսէր լրարբերը.

— Եկա՛ն, հասան մեր սպասած հերոսները: Ձիւսըր են բոլորն ալ: Իւրաքանչիւրը մէկ-մէկ ափիւծ եւ ի՛նչ գէնքեր: Երջանիկ եմ որ այս պարտականութիւնը ինձի վիճակուեցաւ: Ես զանոնք առաջնորդեցի Բիւրակնեան բարձունքներէն: Հիմա արդէն կը մտնեն գիւղ. զանոնք տեղաւորելու մասին մտածեցէք: Հիմա եթէ Աստուած հոգիս առնէ, երջանկութեամբ կը մեռնիմ... Սուրբ Գործին մասնակցեցայ:

Սուրհանդակի լեզուն բռնուեցաւ, սրտի այրքները կոկորդը հասած էին:

Հրաչ Մրրիկը դիմաւորեց գիւղի մուտքին ու խումբը առաջնորդեց թաքստոցը: Ձիերուն խրխիւնջն ու սմբակներուն տրոփիւնը ամբողջ գիւղը ոտքի հանեց: Անանուն ուրախութիւն մը կը ծաւալէր հայրենական հողին իր գլուխը հակած այս բազմութեան մէջ: Ու գիշերը հարսանիքի կը վերածուէր, ազատագրական հարսանիք մը, ուր փեսան Փետայիմն էր, ու հարսնցուն պիտի գար ազատութեան արեւագալով...:

Ձիւսըր խումբը ցերեկները կը հանդատանար եւ գիշերները ճամբայ կ'ելլէր:

Այդ ցերեկը Խնուսի յեղափոխական խումբերու սիրտը կը թրթռար ի տես այս Ֆեռասյիներուն, որոնք բանակ մըն էին ուժանակ:

Խումբին մէջն էր Տուրպախը, որ ասար տարի առաջ Խնուսի շրջանին մէջ կը գործէր ու ծանօթ էր միջնադարին: Խումբին կը մասնակցէին Քուլթար Արշակը, որ ապագային նշանաւոր Քեօֆին պիտի դառնար, Բարերդցի Արշակը, որ յայտնի Սեպուհն եղաւ, Սերաստացի Մուրաթը, Մաշատի Աւետիսը, Կուճուշխանեցի Աւօն, Կարսեցի Նիկոլը, Զինուոր Գրիգորը, Որսորդ Գէորգը, Առաքել Աղան, որոնք, բոլորն ալ, մարտական շարժման առաջին սերունդին կը պատկանէին:

Երբ մութը կոխեց, անոնք Խնուսէն ճամբայ ելան դէպի Մշոյ Դաշտ: Անոնց կ'ընկերանային Խնուսցի կտրիճները, ճանապարհներուն ծանօթ: Թորգոմի խումբը մըրիկի պէս անցաւ Եփրատի մէկ ճիւղը, Բիւրակնեան գետակներէն կազմուած, ու մտաւ Տարօնի դաշտը: Արածանիի գետակէն կ'անցնէին անոնք՝ Մամիկոնեան ասպազներու աշխուժով ու խուլ տրոփիւնով: Արդէն Մշոյ Դաշտի կակուղ հողն էր ձիերու ամբակներուն տակ, բայց մարտիկները անհուն հրճուանքն ունէին որ սոք կը զննն ազատագրական արիւնտս կուռի փոթորկալի այն աշխարհին մէջ, ուր Ազատութեան դրօշակը կը ծածանէր:

Առաջին գիւղը, Մշոյ Դաշտին, որ զանոնք պիտի ընդունէր, Մխաւուս գիւղն եղաւ: Տարօնի մարտիկները զանոնք գիմաւորեցին անսահման խանդավառութեամբ ու հիացմունքով: Յեղափոխութեան հաւատքը ամբացաւ իրենց մէջ, տեսնելով մըրկաբեր այս ամբակուռ խումբը, մարտական վճռականութեամբ, գեղեցիկ հաղուած, սպառազէն, մանաւանդ ձիատորի թափով, որ մըրիկի պէս անցը կը բանային իրենց արշաւին, հեռաւոր Կարսէն մինչեւ Տարօնի աշխարհը:

Մխաւուսի Յարութը, գիւղին մեծը, յեղափոխութեան կազմակերպիչը, Մշոյ Դաշտին ոգին, որ իր ամբողջ հարստութիւնը արամադրած էր Ազատագրական սրբազան գործին, զանոնք գրկեց եղբայրօրէն եւ այնքան շնորհակամբ, որ իր հաւատքով ու խանդավառութեամբ վարակեց անձնուրացներու այս խումբը: Թորգոմի մըրկաբեր խումբը կը զգար թէ մուտք գործած էր յեղափոխական մեհեանէն ներս, ուր մոլեռանդ քուրմեր կային, որոնք ընդունակ էին սուսով ու տեղով գոհուելու ազատութեան բազինին:

Յերեկն ամբողջ տօն էր Մխաւուսի մէջ: Դաշտեցի մարտիկները, իրենց գիւղական տարագրով, շրջապատեցին Մըրիկ խումբը, որ լազերու տարազը հագած՝ իրենց ղէնքերով ու դաշտյններով խոր տպաւորութիւն կը ձգէին Մշոյ Դաշտի ժողովուրդին վրայ: Մըրիկի մարտիկները, իրենց կարգին, հիացումով կը գիտէին գիւղական տարազներու մէջ ամփոփուած այս ամբակուռ Դաշտեցիները, որոնք ղէնքին փարած՝ ալբերին ամէն կողմ՝ պահակ կեցած էին անձնուրացներու նոր ժամանած լեզէնին:

Մըրիկ խումբը, ամբացած իր հաւատքին մէջ ու խանդավառ Տարօնի ժողովուրդի գիտակից անձնուրացութեամբ, գիւղերը ճամբայ կ'ելլէր դէպի Փեթար, որ Կուրտիկի կողերուն վրայ վերջնական կայան էր, Սասուն մտնելու համար:

Այս ճամբորդութիւնը գիւղերային գինուորական փառասօնի մը կը վերածուէր, թունդ հանելով բոլոր մարտիկներուն սիրտը: Մխաւուսէն երբ խումբը կը շարժէր, տեղական խումբերէ կազմուած յառաջապահ եւ յետ-

նապակի ձեռքերը զանոնք կ'առաջնորդէին լուսնեան մէջ, սիրտերը լեցուն, Մրրիկը կը յանձնէին մօտակայ գիւղի մը դիմաւորողներուն ու կ'անհետանային: Մարտիկները իրենց ճամբան շարունակած ժամանակ կը լսէին հեռացող ձիւղերու սմբակներուն տրոփը, որուն հետ կը արժոյթէր իրենց սիրտը: Այսպէս, զիւղէ գիւղ, իրենց ընկերացող ձիւղերուն տառ-նորդութեամբ՝ անոնք կը մազլցէին հուրտիկի կողերէն վեր, ու շքախումբով կը մտնէին Փեթար, որ ազատ Սասունի սահմանազիծը կը կազմէր:

Մրրիկ խումբը գիւղերնէրը կը ծանօթանար կազմակերպական հսկայ ցանցի մը, կ'ըզրայրանար տեղական մարտիկներուն, որոնք հաւատքով ու անձնագրհուսով սպասուածքները իրենց ուսերուն առած էին ու ամբողջութեամբ էին իրենց լեռներուն պէս:

Այն ցերեկը որ անցուցին Փեթար, այս անգամ Բարձրաւանդակի եւ Տարօնի բնութիւնն էր որ կը հմայէր այս մարտիկները, որոնք իրենց արիւնք դրած էին հայրենիքի ազատութեան կշիռն մէջ: Ու իրենց անցքը հուրտիկի բարձունքներէն լեռնաշխարհը մը կը ցցէր անոնց առջեւ ու Բարձրաբերձ լեռներով շրջապատուած Մշոյ Դաշտը մեհեանի մը կը վերածէր, իր հարիւրաւոր գիւղերէն բարձրացող խնկարկումով:

Մարտիկները այս անգամ, ազատ ու անկաշկանդ, արեւի տակ փար լեցնելով իրենց զէնքերը, ազատ Սասունը կը մտնէին: Զանոնք դիմաւորողը, այստեղ, Ֆետայիներու փաղանդն էր: Հոն ներկայ էին Պատասխանատու Մարմինը եւ Սասնոյ իշխանները:

Առաջին անգամն էր, որ այսպիսի կատարեալ սպառազինութեամբ մարտական խումբ մը կը մտնէր Սասուն, ու հաւատքը կ'աւելնար անոնց մէջ, թէ ազատագրական շարժումը բանակներ ունի, որ պիտի նետէ դժ-շամարտին մէջ, Ազատութիւն կտալ մահ նշանաբանով:

Մրրիկի ժամանումը Սասուն, ցնծութեան վրթորիկ մը կ'առաջացնէր Բարձրաւանդակին մէջ: Այս ժողովուրդը որ զէնքին կը հաւատար, եւ հեքիաթներուն մէջ Թուր Կէնտակիին կը սեւեռէր իր աչքը, ուրախութեամբ իր գրկին մէջ կ'առնէր այս ընտիր մարտիկները, որոնք հեռաւոր աշխարհ-ներէն կու գային իրենց արիւնք նուիրելու ազատութեան սուրբ զործին: Ու իրենց հետ երգը կը հասնէր ամէն տեղ, Կովկասէն մինչեւ Սասուն:

Ոսկեգօծ պաշտօններով, լազի շորեր քանկազիմ,
Գնում էին Սասուն, օգնելու Անդրանիկին...

Սասունը կը դառնար Ֆետայիներու բանակատեղին ու Պատասխանատու Մարմինը կը զգար թէ մեծ պատասխանատուութիւն մը կը ծան-րանար իր ուսերուն՝ կառավարելու եւ համադրելու բոլոր ուժերը: Շար-ժումը արդէն համահայկական բնոյթ ստացած էր: Սահմանները ջնջուած էին Հայութեան համար, ու Կովկասէն մինչեւ Սասուն Ազատութեան ծա-րաւ այս ժողովուրդը հոգեկան նոյն բարախումբ ունէր:



Ազատութեան արիւնտ ճանապարհին վրայ այս ընտիր անձնուրաց-ները մահը արհամարհելով հասած էին Սասուն: Ֆետայիներու համախում-բումը երկաթեայ բանակի մը անխորտակելի կամքը կը բերէր այս բարձ-րաբերձ լեռնաշխարհին:

Մովսատի եւ Անտոքի դազաթները հպարտ էին:
Առաջին համախումբումներուն մարտիկները իրարու ծանօթացան:

Հին ծանօթները իրար կը դռնէին եւ գրոյցի կը սկսէին մարտական օրերու յուշերով: Ողբերգական դրուագներու հետ՝ կատակն ալ մեծ տեղ կը զբաւէր անոնց խօսքերուն մէջ: Սասունցիները զմայլանքով կը դիտէին այս ինքնախառուկ տարագրով անձնուրացները, որոնցմէ ամէն մէկը արձանի մը սպաւորութիւնը կը ձգէր լեռնական այս բազմութիւններուն վրայ: Իսկ Մրրիկը հիացմունքէ աւելի բան մը կը զգար ժայռի պէս այս պարզ Սասունցիներուն ի տես: Իրենք ռեխտաւորներ ազատութեան ճանապարհին՝ Սասունցիները իրենց կը ներկայանային որպէս Երկաթէ մարդ ու Քարէ հոգի, վրէժխնդիր արեւնարբու թուրքին:

Վահան ու Հրայր մանրամասն զեկուցումներ ստացան թորգոմէն ու հաստատի եղան, թէ նոր խումբեր կան պատրաստ, որոնք ճամբայ պիտի ելլեն դէպի Սասուն:

— Պարոն Հրայր, — ըսաւ թորգոմ, — Կարսի մէջ Ներուզի խումբը արդէն պատրաստ է Բասէն մտնելու: Այդ խումբի մէկ մասին խմբապետ Նշանակուած է Խանը, որ Տէլի Պապայի վրայով պիտի անցնի: Անոր խումբին մէջն է Առիւծ Սերոբը իր կորիւններով, որոնք Սասունէն եկան Կարս քանի մը ամիս առաջ: Երկրէն բազմաթիւ տարագրներն ալ խումբերուն մէջ մտած են ու լաւ մարզուած: Արարատեան Դաշտի մէջ, Մրզաստանի Կեղրոնական Կոմիտէի նախաձեռնութեամբ, երկու խումբեր կազմուած են Արտուազը եւ Մասիս անուններով, ու անոնք Բազրեւանդի ճամբան պիտի բռնեն ու անցնին Ախլաթ, ճիշդ այն ճանապարհով, ուրկէ անցան Առաքել Մուշեղը եւ Զուլումաթը: Եթէ անոնք Մրրիկի յաջողութեամբ Սասուն հասնին, ազատագրական բանակը պատկանելի ուժ մը կը դառնայ, մանաւանդ իր զէնքերով եւ ռազմամթերքով:

— Յաջող ու քաջախիբական եղաւ Մրրիկի անցքը դէպի Սասուն: Ասիկա բարտաւորութիւն մըն է, որ ամէն խումբի բաժին չ'իյնար, — ըսաւ Հրայր, — Խումբերու կազմութիւնը քիչ մը շատ աղմուկ հանած է Կարսի նահանգին մէջ եւ ես կը կասկածիմ, որ ռուսական բանակը գաւաճանօրէն կռնակէն հարուած է մեր խումբերը: Այդ փորձը ունինք 1895-ին, երբ մենք Բասէն կ'անցնէինք, մեծ զոհուածութեամբ:

— Յուսուից են լուրերը, Հրայր, — ըսաւ Վահան, — սահմանի վրայ դռնուած մարտիկները ամէն ճիշդ կը թափեն ռազմամթերք եւ մարտիկներ հասցնելու մեղի: Թորգոմը յաջողեցաւ իր փորձին մէջ ու իմ կարծիքով պէտք է ետ դառնայ Կարս եւ ընկերանայ այդ խումբերուն, որպէսզի յաջողութեամբ անցնին Բարձրաւանդակ:

Թորգոմ, որ այնքան խոնդալատութեամբ հասած էր Սասուն ու կ'ուզէր մարտին մէջ մկրտուել որպէս Ֆետայի եւ մարտական ղեկավար, տիրութեան կը մատնուէր, գիտակցելով թէ պիտի զրկուի իր անձնուրաց զոհացումին զոհացում տալու մարտադաշտին վրայ: Բայց Պատասխանատու Մարմնի մտահոգութիւններուն ինքն ալ կը մասնակցէր, որպէս պատասխանատու այն մեծ շարժումին, որ վարարուն հեղեղի մը պէս, այլք կու տար Երկրէն մինչեւ Կովկաս, ոտքի հանելով արի արանց զաւակները, որոնք խենթի պէս փարած զէնքին՝ մոլեռանդ ու մաշը արհամարհող, ամէն կողմէ կ'ուզէին օր առաջ հասնիլ ազատութեան դրօշակիր Բարձրաւանդակը, ուր ազատամարտը այնքա՛ն հերոսներ անուանի դարձուցած էր, եւ այնքա՛ն հերոս նահատակներ զոհած ազատութեան ճանապարհին:

Ազգ մը ամբողջ, ազգ մը ոտքի ցցուած էր, եւ կ'ուզէր կատաղօրէն

փչրել բռնակալութեան շղթաները, ստրկութեան ամօթանըը սրբելու հայ արի ժողովուրդին ճակատէն.

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին,
Ազատութեան դրօշակ...

Երգը կը հնչէր Սասնոյ բարձունքներէն մինչեւ Վանանդ, Արարատէն մինչեւ Վասպուրական, եւ ամէնուն աչքը յարած էր ազատութեան այդ դրօշին, թօթափելու համար լուծը վատթար բռնակալութեան, որ հարիւրաւոր տարիներէ ի վեր այնքան անպուժ ու անմարդկային եղած էր աշխատաւոր եւ լուսապաշտ հայ ժողովուրդին հանդէպ:

- Թորգոմ, դուն պիտի վերադառնաս Կոյկաս, եւ այն գործը որ դուք պիտի կատարէք այնտեղէն, դերականց օգնութիւն մը կ'ըլլայ մօտալուտ ապստամբութեան համար: Մենք մարտիկներու պէտք ունինք, ինչպէս կը տեսնես, ու մարտիկներէ աւելի՝ կանոնաւոր զէնքերու: Քաջակրօնով ժողովուրդ մը տէրն է այս լեռներուն, ամուր է իր ժայռերուն պէս, ապստամբութեան դրօշակներն է տարիներէ ի վեր, զլուխ չի խոնարհեր թուրքին, ապաւինած իր շախմատի չրացաններուն, բայց անպարտելի կ'ըլլայ Սասունցին, եթէ կանոնաւոր զէնք ունենայ իր ուսին:

Հրայր զգուշութեան քանի մը թելադրանքներ ըրաւ, նոր քանի մը ճամբաներ մատնանչեց Թորգոմին եւ թելադրեց, որ խումբերը փոքր թիւով ճամբայ ելլեն, վտանգի մը պարագային՝ ամբողջը չկորսնցնելու համար:

Թորգոմ կը պատրաստուէր մէկ երկու շաբաթէն վերադառնալ Կոյկաս, ու այդ առիթէն օգտուելով, Հրայր ու Վահան կ'որոշէին անոր հետ ճամբայ հանել Վաղարշակն եւ Աշոտ Երկաթը, որոնք Դուրան Բարձրաւանդակը պիտի ներկայացնէին Հ. Յ. Դաշակցութեան երրորդ Ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենար 1903-ի վերջերուն, Սոփիայի մէջ:

Այդ օրերուն մարտական խումբերը երբեմն կը համախմբուէին, ու երբեմն ալ խմբական այցելութեան կ'ելլէին Սասնոյ զանազան շրջանները: Իրարու կը ծանօթանային, անցեալի դժգոհքեր կը լսէին, ու համախումբ այս բանակը, առանց ամէնօրեայ կռիւններուն, կը ձանձրանար զօրանոցային այս կեանքին մէջ, ու իր ժամանակը կը լեցնէր կատակով, հրճուողներով, խաղի մրցումներով, երբեմն ալ խանդավառ պարերով: Ու այդ պահերուն էր, որ Սասունցի ձեռագիրները Բոչարին կը պարէին, ապա Սարխուշտան (ձափզարկը) կը փոթորկէր, պատերազմի բանակներու բաժնուած: Հոն էր, որ Մշեցի մարտիկները Մշոյ ԽԵՐԸ բեմ կը նետէին՝ Հեթանոսական օրերու մոլեռանդ կռուի մը պատկերը ցուցադրելով պարի ընթացքին: Ու հոն էին նաեւ Մշոյ Դաշակի թիկնեց ու ծանրաշարժ ձեռագիրները, որ պարի կ'ելլէին Եարբալ կորանին դարձնելու, ահու ու դուռնալի ծանր հրեշուներուն տակ:

Հեքիաթ ու կատակ, զրոյց ու հերոսական գովք իրարու կը հիւտուէին սպառելու համար եռանդը այս առիծներուն, որոնք անհամբեր էին մարտի դաշտ իջնելու դարաւոր թշնամիին դէմ: Մըրիկ խումբի ժամանուածէն հագիւ քանի մը օր անցած՝ հին ու նոր ձեռագիրները համախմբուած էին Կիլիկիոյան ու անցեալ զէնքերու պատմութեան հետ, դեր կատարող զէնքերու ծանօթութիւնը տեղի կ'ունենար խումբէ խումբ:

Սարհրու Ասլանը նոր վերադարձած էր Տաւրերկէն:

Այդ օր, փոսակցութեան պահուն, Մուրատ դարձաւ Անդրանիկին.

– Անդրանիկ, ամէն բանի մասին խօսեցանք, ամէն օր պիտի հարցնեմ, զրոյց մը կու գայ խօսքին թեւը կտրելու. ո՞ւր է Սարերու Աւլանը, որուն անունով կ'երգնուն բոլոր անոնք, որոնք մատաղցու կ'արձանագրուին անձնագրահերու բանակին: Երկու օրէ ի վեր Ծնտայիներու մէջ աչքով փրնտըտուք կ'ընեմ զանելու համար Գէորգը, որ չ'երեւար:

– Տնաչէ՛ն, ա՛հա այստե՛ղ, պատին տակ, տղաներու հետ հրմշտուք կը խաղայ:

Աւ Անդրանիկ մատով ցոյց տուաւ Գէորգը, խորհրդաւոր ժպիտ մը դէմքին:

Դէպի մատնանշուած կողմը դարձան միաժամանակ Մուրատի, Սեպուհի եւ Գեորգի աչքերը: Անոնց քով նստած էր Կոտոյի Հաճին:

Կոտոյի Հաճին աւելցուց.

– Ան է մեր Գէորգը. չ'երեւար, բայց անոր ուժը ամէն տեղ է:

Մուրատ կատակով.

– Ծանրմ, այդքա՞ն մեծ անուն, այդքա՞ն գովք Սարերու Աւլանին մասին, ու հիմա կ'ըսէք պատի տակ նստածն է: Զեռքս զրգանս նետեմ՝ Հինգ հատ այդպիսի Գէորգ դուրս կը հանեմ...

Աւ Մուրատ տեղէն ելլելով դնաց Գէորգին մօտ, անոնք իրարու փաթթուեցան, եղբոր պէս, մարտական անկեղծ եղբայրութեամբ:

Այս գիրկընդիսանումը ոտքի հանած էր Մըրիկի խմբակետները: Թորգոմ, Գեորգ, Սեպուհ, միւսները Սարերու Աւլանին գիրկին մէջն էին, այնքան զեղուն ուրխութեամբ: Գէորգ լուռ էր ու ճնշուած: Այս բոլորը շատ կը թուէր իրեն, ինք որ ժայռերու դրացնութիւնը միայն վայելած էր տաննակ տարիներէ ի վեր:

Գովքն ու զուրգուրանքը շատ ճնշել էին: Գէորգ կատակի տուաւ.

– Թմբուկի ձէնը հետուէն անուշ կու գայ...

Ոնդացին բոլորն ալ: Մուրատ եւ Սեպուհ Գէորգի վիզը փաթթուած էին:

Այս ծանօթացումը առանց միջազգայի շանցաւ: Կոտոյի Հաճին, Հին մարտիկ, խորամանկ ու կատակասէր, վայրկեան շանցուց, ու երբ Մշեցի եւ Սասունցի Ծնտայիները առանձին էին, Մուրատի կատակը աւելի զարդարելով՝ պատմեց Գէորգին, կատակի շեշտով: Գէորգ համեստօրէն կատակը սրբեց կատակով.

– Մուրատը իսկապէս առիւծի կը նմանի, եւ իր կազմով, Հաճի՛, զեզի եւ ինծի պէս երեք հոգի կը կշռէ: Լաւ մարտիկը միշտ լաւ գովքի արժանի է:

Աւ բոլորն ալ կատակը մոռցան ու դարձան իրենց սովորական զրոյցներուն:

Ճ

Թորգոմ կը պատրաստուէր վերադառնալ Կովկաս, նոր խումբեր առաջնորդելու ազատութեան Բարձրաւանդակը:

Սարերու Աւլան ու Թորգոմ ջերմօրէն կապուեցան իրարու: Շատ յաճախ անոնք առանձնացան եւ զալիք օրերու յոյսերով բոցալառեցան: Կութնած կազմի մը բունին, անոնց հայեացքը ամբողջ հայ ժողովուրդը կ'ընդգրկէր, ու անոնք աներկ հաւատքն ունէին ազատութեան սրբազան ուխտին, որ հորիզոնէ հորիզոն կը կայծկւտար:

Թորգոմ Սարերու Աւլանին մէջ կը տեսնէր անվեհեր կուռուղը, Ծե-

տայական շքերթին սխմալը, ազատութեան զբօշակէրը, որ իր խոյանք-
ներով անձնազոհներու բանակ մը ոտքի հանած էր:

Իսկ Սարգիսը Ասլանը կշռած էր թորգոմը իր գինուորական ընդու-
նակութեամբ, մարտական խումբեր վարելու անվիճելի կարողութեամբ եւ
մանաւանդ այն խանդավառ զաղտփարուպաշտութեամբ, որ Մրրիկի խմբա-
պետը կը դարձնէր սիրելի բոլորին:

Թորգոմի եւ մէկ քանի ընկերներու մեկնումի օրերը մօտեցած էին,
ու Գէորդ աջ բազուկ մը կորսնցնելու տիրութիւնն ունէր:

Երբ Ֆեռաշինները զրոյցի ու կատակի կը բացուէին, Գէորդ եւ թոր-
գոմ քով-քովի կու գային անկիւն մը, կամ զուրս կ'ելլէին ժայռի մը կըտթ-
նիքու:

- Թորգոմ, շուտ վերադարձիր ընտիր խումբով մը: Ճակատամար-
տը մօտալուտ է: Տարօնի բոլոր շրջանները Հերդէնի պիտի բռնուին: Ձին-
եւլ ուժերու եւ ղեկավարի պէտք ունինք ճակատազրական այս մարտին:
Կ'ուզենք որ դուն անձամբ մասնակցես: Մահը ամէն տեղ մէկ է, բայց այս
բարձրաբերձ լեռներուն վրայ, ազատութեան զբօշին տակ մեռնիլը անմա-
հուօթիւն է:

- Անմիջապէս պիտի վերադառնամ, Սարգիս սիրելի, Քանի եւ Նեւ-
րուզի խումբերը արդէն պատրաստ են: Ձեզմէ կը բաժնուիմ սիրտս կո-
տոր...:

Այս խօսակցութենէն քանի մը օր անց, Թորգոմը ճամբայ ելաւ դէ-
պի կողմաց:

Բարձրաւանդակի ղեկավարներուն աչքերը յառեցան ինտուի եւ Բա-
սէնի Բարձրաւանդակներուն, ուր մութ գիշեր էր եւ լուսին չկար...:



Տառը հազարէ մեկի թրքական զօրքեր դէրք զբաւած էին Մուշ Գա-
ղաքի բարձունքներուն եւ դէպի Սասուն մագլցող ճանապարհներուն վրայ:
Ու կառավարութիւնը դիտէր թէ ֆեռաշիններու բանակը տեղաւորուած է
Սասուն ու օր աւուր կ'աւելնայ:

Ոսկեգօծ պաշլըմներով երգը, որ թուրքերն ալ կը լսէին շատ յա-
ճախ, հեքիաթային յափաղանցութեամբ կովկասահայ բանակ մը կ'ուրուա-
ղծէր Մովսսարի բարձունքներուն վրայ: Այդ Համեմատութեամբ,
բռնակալութիւնը աւելի ուժեր կը համախմբէր: Դրամի ու պաշտօնի առատ
բաշխումը քրտական կարգ մը ցեղախումբեր ոտքի կը հանէր դէպի Սա-
սուն արշաւելու:

Աշունը կը մօտենար եւ եթէ չաճապարէին թափը կոտրելու հայ
խոնդին, այդ տարին Սասուն պիտի մնար անհպելի: Ու, բնականաբար,
հայկական զաւառները, աւելի մեծ խանդով՝ ըմբոս կեցուածք մը պիտի
ունենային կառավարութեան եւ քիւրտ ցեղախումբերուն դէմ:

Թուրք հրամանատարութիւնը, Սեպտեմբերի առաջին շաբթուն, ոս-
տիկանական շոկատի մը առաջնորդութեամբ, երկու վաշտեր ճամբայ հա-
նեց Կուրտիկէն դէպի Սեմալ եւ Շէնիկ: Այս գիւղերը Սասնոյ դիմադրու-
թեան առաջին գծերու վրայ էին: Թուրք հրամանատարութիւնը կը մտա-
ծէր խաղաղ մուտք մը գործել Շէնիկ եւ Սեմալ: Վաշտերը տեղաւորելէ
ետք, ձմեռուան ընթացքին զօրքերը կ'աւելնային եւ կը ջլատէին ազատ
շարժումները Բարձրաւանդակին մէջ:

Սակայն բանը բանէն անցած էր, ու խոհեմութիւնը չէր, որ կրնար

դեր մը խաղալ: Ազատութեան ու բռնակալութեան բանակները դէմ-դէմ դիրք պրաւած էին: Թուրք զէնքերն կը մնար:

Երբ Թրքական զօրքերը մօտեցան Հայ դիւղերուն, երկու մղոն հեռաւորութեան վրայ, Հրայրի կարգադրութեամբ Գէորգի խումբը կրակ բացաւ անոնց դէմ, որպէս ազդարարութիւն: Թուրք զինուորները մարտական դիրքերու բաժնուած՝ սկսան տռաջանալ դէպի Սենալ, եւ Համազարկ բացին դիւղին ուղղութեամբ: Գէորգի խումբը շեշտակի հարուածներու տակ առաւ զանոնք ու Սեմայցիները, զինուած ու Համախումբ, զանազան դիրքեր գրաւեցին: Կռիւք անակնկալ մը եղաւ Թուրք զօրքին համար: Արդէն քանի մը տասնեակ դիակներ ինկած էին ձորերուն մէջ ու անոնք զգացին, թէ կրնան շրջապատուիլ Շէնիկի եւ Սեմալի զինեալ ժողովուրդէն:

Կորուստներ տալով Թրքական վաշտերը նահանջեցին դէպի աւելի բարձր դիրքերը Կուրտիկի: Բայց Ֆետայիներն ու Սառուցիները բազմաթիւ ձորերէ վեր բարձրացան, զանազան ժայռոտ դազաթներ գրաւեցին ու փոխուստի մատնեցին Թրքական ջոկատները:

Թուրք Հրամանատարութեան առաջին փորձը ձախողեցաւ:

Ձմեռը արդէն մօտալուտ էր ու Հրամանատարութիւնը խոհեմութիւն համարեց ընդհանուր արշաւանքը եկող զարնան յետաձգելու: Թուրք իշխանութիւնը փախստական խումբի մը հետ չէր, որ գործ ունէր, այլ իր դէմ ժայռացած էր անյայտ բանակ մը:

Արիւնոտ ճակատամարտ մը մղելու ստիպողութեան տակ կը գտնուէր Թուրք Հրամանատարը:



Այդ օրերուն, Հրայր Հարուածող խումբով մը իջաւ Մշոյ Դաշտ, պաշարի եւ ուղիւմթերքի պատրաստութիւն տեսներու: Անոր հետն էին Կորիւն, Սէյաո Պօղոս եւ տասնեակ մը ընտիր Ֆետայիներ, որոնք դիւղերէն անցնելով՝ գաղտնի մարմիններուն պիտի Հրահանգէին մեծ քանակութեամբ պաշար փոխադրել Սասուն:

Երբ Հրայր Յունան դիւղի մօտակայ Կոմիտէներուն եւ սուրհանդակ խումբերուն իր թելադրանքները կ'ընէր, այնտեղ թաքնուած Ֆետայիները բախում մը կ'ունենային Թուրք ձիաւոր ոստիկաններուն հետ:

Առաջին ձիանը արդէն իջած էր լեռներուն վրայ ու նստած դաշտին մէջ: Թուրք ոստիկաններու ջոկատը, որ Յունան կը գտնուէր, տան մը մէջ կը տեսնէ Կորիւնը իր երկու ընկերներով: Կարծելով թէ անոնք մինակ են, անմիջապէս սուրը կը պաշարեն ոչնչացնելու համար Ֆետայիներու այս փոքրիկ խմբակը: Բայց խումբին միւս անդամները, զուգուրութեամբ արդէն երկու այլ դիրքեր գրաւած էին: Ու երբ անոնք տեսան ոստիկաններու յարձակումը Կորիւնի թաքստոցին վրայ, հրեք կողմէ կրակ բացին թշնամիին դէմ: Առաջին հարուածին հինգ-վեց ոստիկաններ տապալեցան: Քանի մը վալրիկեան տեւող ընդհարումէն ետք, երբ ոստիկանները տեսան թէ իրենց շարքերը կը հնձուին, դիւղէն դուրս փախան ու բռնեցին Մշոյ ճանապարհը: Անոնց ձիերը կը մնային դիւղի ախոռներուն մէջ: Հիմա այդ ձիերը Ֆետայիներու արամազրութեան տակն էին: Հոն կը հասնէր նաեւ Հրայր քանի մը ընկերներով: Մութը չկուած՝ Ֆետայիները ոստիկաններու ձիերը հեծած՝ դաշտը կտրելով՝ անցան Կուրտիկի ստորոտները, դէպի Սասուն բարձրանալու համար: Բայց ձիանը շատ էր ու լերան ճամբան անանցանելի: Ձիերը այլեւս օգտակար չէին ըլլար իրենց:

Յուճանի կոիւր, մէկ ժամ չանցած՝ արձագանգ կու տար Մուշ քաղաքին մէջ: Հրացաններու խուլ ձայնը Դաշտէն կը հասնէր Մուշ, ու թըրքական թաղերուն մէջ իրարանցում կար: Ջորքը կը պատրաստուէր ճամբայ հլլելու զէպի Յուճան: Կառավարական շրջանակները մտահոգուած էին, տեսնելով որ կոիւր Սասնոյ լեռնէն կը փոխադրուէր Մշոյ Դաշտ: Սակայն մութը չկոխած՝ այդ մտահոգութիւնները կը փարատուին՝ երբ հայրենական մագրով թրքական թաղերը կը մտնէին ոստիկաններուն ձեռքը: Բոլորին պոչը կտրած...

Պուշտ ձիերու ցուցահանդէսը ապտակ մըն էր ոստիկանութեան եւ կառավարութեան երեսին:

Թուրք թաղերուն մէջ խօսակցութեան նիւթը ոստիկաններուն պարտութիւնն էր: Յուզումի մատնուած Թուրքերը իրենց խօսքը կ'ուղղէին կառավարութեան.

- Ձիերու վրայ նստած՝ առիւծ կը կտրին, ու երբ Ճետալի տեսնեն, ձիերը թողած՝ մինչեւ Մուշ կը փախչին: Պետութեան ապաւէնը զօրքն է, նոր բանակներ պէտք է բերել տաք, որպէսզի Ճետալիներու հետ կարենանք յափուիլ թնդանօթով:

Արդէն առասպելի կարգ անցած էր մասին գերազանցութիւնը թըրքական բանակի ղեկին դէմ: Իսկ տասնոց ատրճանակը, իր արագ հարուածներով, Թուրքի աչքին սատանայական գործիք մըն էր, որ մահ կը սփռէր քանի մը երկվայրկիսանի մէջ:



Դաշտի եւ դաւառներու դիմադրութեան ոգին բարձր էր ու ամէն տեղ հարուածին հարուածով կը պատասխանէին, զգետնելով այն անգութ բռնակալները, որոնք, ատկէ առաջ, անասնձ կը գործէին ամէն տեղ ու կը մնային անպատիժ:

Թուրքեր ու Քիւրտեր զուսպ էին, ու երբ տեղ մը շարժէին, դիտէին, թէ բռնի արարքները արիւնով պիտի վերջանան:

Գիւղական խոնարհ աշխատաւորը ըմբոստացած էր, ու այլեւս չէր կրնար հանդուրժել անմարդկային արարքները, որոնց գլուխ ծուած էր այնքան տարիներէ ի վեր: Ըմբոստ Հայը, որ սկսած էր բռնակալութեան ձեռքը կտրել, դիտէր թէ ապաւէն մը ունի հոն, Սասնոյ Բարձրաւանդակին վրայ, ու իր ղէնքը առած կամ լուկ դաշոյն մը, կրնայ բարձրանալ լեռ, միանալու համար անձուրացներու բանակին:

- Ըմբոստները, մահը աչք առած՝ երբ լեռ կը բարձրանան, ազատութեան կռուի յոյսը ունին, - կ'ըսէր Գէորդ, խօսքը ուղղելով Մուրադին եւ Քեռիին, որոնք ընդհանուր կացութիւնը կ'ուղղէին ըմբոստի, - բայց բանտերը կը լեցունին Տարօնի ընտիր զուակներով, որոնք կազմակերպութեան գլուխը կանգնած էին: Այսօր հազարէ աւելի գործիչներ կան բանտին մէջ ու շատ յաճախ անոնց թելադրանքով կը շարժին իրենց դիւղերը: Ընկճուած չեն ու հաւատացած են, թէ օր մը մենք զինու զօրութեամբ զստնք բանտէն պիտի ազատենք:

- Դժբախտութիւնները իրարու կը յաջորդեն, սիրելի Սարհատ, - ըսաւ Մուրադ, - պարոն Վահան եղբրական լուրը հաղորդեց մեզի: Թանի եւ Նեւրուզի խումբերը, որոնք կ'ուղղուէին զէպի Մասուն, կռուի բռնուած են: Անոնք Բասէնի եւ Տէլի Պապայի մէջ չորս օր անընդհատ դիմադրելէ

և թրջական բանակին մեծ կորուստներ պատճառելէ ետք, ամբողջովին նահատակուած են:

- Ուրեմն մեզի օգնութեան եկող այս երկու մեծ խումբերը ոչնչացած են, - Հարցուց Գէորգ մեծ յուզումով: - Անձնուրացներու մեծ բանակ մը ոտքի հանած էին, և մենք յոյս ունէինք, որ անոնք, ձեր ձիաւոր խումբին պէս, Հոս պիտի հասնէին: Ի՞նչ ընտիր մարտիկներ էին անոնք, հաղար ափսոս՞ թորգոմին: Օգնութեան յոյսը կը ժարի:

Գէորգ ակնյայտի խոռվելով մտաւ Վահանի եւ Հրայրի սենեակը, ուր կը կեդրոնանային բոլոր տեղեկութիւնները: Գէորգ Անդրանիկի, Քեռիի եւ Մուրատի հետ միասին զինուորական մարմնի անգամ էին, ու անոնք, շատ յաճախ, Պատասխանատու Մարմնին հետ խորհրդակցութիւններ կ'ունենային:

- Մուրատ դժբախտ լուր մը յայանկց ինձ: Խանի եւ Նեւրուզի խումբերը զէպքի բռնուած են: Մենք այս աշնան անոնց ժամանման կը սպասէինք: Ի՞նչ ժանրամանութիւն կայ զէպքին շուրջ, և որո՞նք մասնակցած են այդ արհեսալի կռուին: Հրայրը դիտէ, որ այստեղէն Մուլուխի Սեւորը իր երկու կորիւններով ճամբայ հանեցինք զէպի Կարս, որպէսզի զինակն խումբ մը հետը առած՝ վերադառնար մեր լեռները:

- Մերորը իր կորիւններով մասնակցած է Տէլի Պապայի կորիւններուն, - ըսաւ Հրայր, - Խանի ձիաւոր խումբէն մէկ քանի հոգի միայն ազատուած են, իսկ Նեւրուզի խումբը, որ իննիսուն հոգիէ կը բաղկանար, Եռազ վերանի եւ Նազանի դաշտին մէջ շրջապատուած՝ չորս օր անընդհատ կռուի մղած են թրջական բանակներուն դէմ, մինչեւ որ իրենց վերջին փամփուշտը հասած է: Թրջական բանակէն հարիւրաւոր զիակներ մնացած են պատերազմի դաշտը: Կը թուի թէ կուրծք-կուրծքի անողոք կռուի մը տեղի ունեցած է անառիկ դիրքերէ գուրկ այդ ասփատանին մէջ: Նեւրուզի ստուար խումբէն միայն քանի մը մարտիկներ ազատուած են, որոնք վերաւոր ու յոգնաբեկ՝ կրցած են վերադառնալ Կարսի շրջանը: Թուս բանակը իսկական ոճրագործի դերը ստանձնած է և առաջին վայրկեանէն կը նստակէն հարուածած է արշաւախումբը: Թորգոմ նահատակուած է առաջին ընդհարումին: Թուսերը լուր տուած են թրջական բանակին՝ մասնանշելով ճանապարհները, ուրկէ կ'անցնէին Տեատայիները: Մեր խումբերը երկու բռնակալ պետութիւններու բանակներուն կրակին տակ ինկած են: Անոնց հետ նահատակուած են Մուլուխի Մերորը իր կորիւններով: Անոր հետն էին երեսունէ աւելի Տարօնցի մարտիկներ, որոնք յոյս ունէին Սասուն հասնիլ ու մասնակցիլ դոյաժարտին:

- Ողբերգութիւն մըն է Մերորի նահատակութիւնը, - ըսաւ Վահան, - Հոս հասնելուն առաջին օրերուն ան ալ բարձրացաւ լիւս, երկու զաւակներուն հետ: Մուլուխի առիւծը այն բացառիկ ուխտեալներէն էր, որ Աղբիւր Մերորին պէս իր ամբողջ հարստութիւնը յատկացուցած էր ազատագրական սուրբ գործին: Տարօնի այս անձնուրացը տասնըօթը անգամ թրջական բանտը նստած ու կաշաւքի ուժով կրցած էր ազատիլ բանտէն: Բայց թուրք կառավարիչներն ու ռատիկանապետները շահու աղբիւր մը գտած էին, այս մեծ օճախի հարստութիւնը հայեցնելով: Պարբերաբար կը բանտարկէին՝ կաշառքը ապահովելու համար: Ու Մերոս, ստիպուած, զիչեր մը գիւղի ժողովուրդը և քահանաները Մուլուխի եկեղեցին հրաւիրեց և յայտնեց, թէ երկու երիտասարդ զաւակները պիտի պսակէ... Հրացաններու հետ: Օրհնութեան արարողութիւնը վերջանալէն ետք, ինք և երկու կորիւնները

մեկնեցան գիւղէն, յուզումի մասնելով Սուլուիքը, երբ Ֆեսայի դարձած երիտասարդներու նշանածները կը հեծկլտային եկեղեցիին մէջ:

— Աղբիւր Սերորէն ետք, ահա Սուլուիի Սերորի մեծ օճախն ալ կը մարի, — ըսաւ Հրայր, — Սերոր իր կորիւններով իմանի ձիաւոր խումբին հետ անցած էր Բասէնի սահմանը: Խումբի բոլոր մարտիկները առիւծաբար կտուած են մինչև վերջին փոստուշտը, ու հիմա, երգերու մէջ, Աղբիւր Սերորէն ետք, կ'երգուի Սերորի երգը: Հերոսներու ճակատագիրը կարծիք արիւնով գրուած է, — Ազատութիւն կամ մահ...

Սուլուիի Սերոր, որ կոնզի պէս մարդ մըն էր, անձնուրաց ու հայ ազատագրութեան հաւատացող, իր հարուստ տունը մոխրի կը վերածէր, ու ազատագրութեան պատմութեան մէջ կը ձգէր շքեղ ու պանծալի անու՛մ մը: Առիւծ Սերոր և իր կորիւնները արձանի պէս կը դրոշմուէին «Երօջակոյ՛ի մէջ, յախտենական փառքը Տարօնի այս խնթ ժողովուրդին, որ անսահման բռնութեան շուկալով՝ իր կեանքը կը մաշէր բռնութեան մէջ կամ լեռնե-րուն վրայ:

Սարերու Ասլանը որ այնքա՛ն կրուստներու ահանտես եղած էր, կռիւն ու նահատակութիւնը ամէնօրեայ ճակատագիր մը կ'ընդունէր, խո-րագպէս յուզուած էր Առիւծ Սերորի եւ իր կորիւններուն անհետացումով: Մշոյ եւ Պիթիիսի բանտերուն մէջ առիթը ունեցած էր ծանօթանալու Սու-լուիի Սերորին ու շատ յանախ անոր քաջալերանքներուն արժանացած էր երիտասարդ Գէորգը եւ յուսահատութիւնը իրմէ վանած՝ անոր հաւատա-ւոր թելադրանքով: Առիւծներու մէջ անվեհեր Սարերու Ասլանը կը յուզ-ուէր Սերորի, իմանի, Քորդոմի եւ Նեւրուզի նահատակութեան լուրը առ-նելով, մտածելով թէ Տարօնի աշխարհի սիւները կը կբին:

Ֆեսայիները երբ առիւծաբար կը կռուէին Մոզասարի եւ Անտոքի բարձունքներուն վրայ, անխախտ յենարաններ ունէին Տարօնի գիւղերուն մէջ, ու Սերոր այդ ամուր յենարաններէն մէկն էր:

Ձիհուորական մարմինը կը խորհրդակցէր կռուի ճակատներու դա-սաւորութեան մասին, աշխատանքի բաժանում կը կատարէին, նոր խում-բերու ժամանման կը սպասէին զարնուն: Գիտէին թէ դարունը բացուելուն պէս ճակատամարտի պիտի բռնուէին թրքական ստուար բանակներուն դէմ:

Ու մարտի ելած ժողովուրդը, գալիք օրերու խոսվածով կ'երգէր.

Լաւիմ չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ արագ...

(Շար.)

Կ. Մ.



ԱԼԻՍԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Այս տարի Պուլժնո-Այրեօի մէջ լայն տեսաւ սպաներէն լեզուով գրող Ալիսա Կիրակոսեանի «Օր մը Հինգ ժայներ» քանոնագրութեան հատորը, որ մեծ ազմուկ հանց լատին Ամերիկայի մէջ:

Կիրակոսեան ունի բանաստեղծական անտիպ չորս հատորներ, որոնցմէ մէկը՝ «Կուսիսի եւ Կետաղրութեան», արդէն իսկ սկսած է քարգմանուի իտալերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի եւ հայերէնի: Գրած է նաեւ հատոր մը շարժանկարի համար, իսկ Օնրկայի կ'աշխատի քանոնագրական երկի մը վրայ:

«Օր մը Հինգ ժայներ»ը Օկարազարդուած է Ոկարչական աշխարհիմ ծանօթ չորս դժմերու կողմէ՝ Ուուայուա, Կըրամտի, Պրուսովէ եւ Պօլիկաստրօ:

Ստորեւ «Օր մը Հինգ ժայներ»ու մասին քերթերու արտայայտութիւններէմ քանի մը քաղաւածներ եւ քերթուած մը:

EXTRA

Ալիսա Կիրակոսեանի «Օր մը Հինգ ժայներ»ը Հարցականի մը առջեւ կը դնէ մեզ: Ան առասպելներու սկզբնաւորութիւն մը կ'աւետէ, երկընտրանք մը կ'ուրուագծէ եւ ցոյց կու տայ Հանգրուան մը: «Օր մը Հինգ ժայներ»ը կը խորհրդանշէ այն՝ որ Ալիսա Կիրակոսեան «Օր մը» ինքզինք փոքր զգաց Հոգեկան թրթուածներու յարձակման տոկալու համար եւ տուաւ յուզումի աշխարհներէն առաջացած իր պատգամը: Իր քերթուածները Հետաքրքրութիւն կ'արթնցնեն եւ մտածելու կը մղեն ընթերցողը: Հատորին մէջ կայ ընտիր զգայնութեան մը խորհուրդը եւ յոյսի թարմութիւն մը: Ոճը թափանցիկ է ու զննար, ինչպէս Հոսոյ աղբիւրին ջուրը, որ կ'ընթանայ ապաստաններու ընդմէջէն, անհուն հըրճուանքով մը կամարելով իր համբուն վրայ ինկող ամէն ինչ:

DIARIO EL MUNDO

Ներքին աշխարհի մը զբօսը համար ինքզինք ազատազրկու յոյսէն մղուած՝ Ալիսա Կիրակոսեան կը գրէ արտակարգ յատկութեամբ, սպասուածքով միաժամանակ, որ զրեւը միակ միջոցն է, որով ազատաբար զգացում մը կը ծլի իր մէջ: Ան կը պեղէ իր Հոգեկան աշխարհը եւ կը դրսեւորէ իր ազրուածները իբրեւ ընդդէմ արուեստական ու մեքենայացած ընկերութեան մը դէմ, որ շատ յաճախ կամայական ու անհեթեթ արժէքներ կը ցուցադրէ:

Ալիսա Կիրակոսեանի ստեղծագործութիւնները պարզ պատմութեան լին: Անոնք կ'արտայայտեն իր ներքին յուզումները: Այս մեծով քերթուածը զարժած է նեթալանդին կական կորիզը, իրազորելով զայն իբրեւ բանաստեղծ եւ էակ: Կիրակոսեան համոզուած է, որ բողբ եւ մեքենայութեամբ մը զարգացող սովորական տարրեր չեն, քանի որ իրենց հունին մէջ անոնք կը լուսնակներն բանաստեղծութեան իմաստին ու-

ժը: Բարին եւ ձեւին յորինուածքը հարուստ է
 թելադրականութեամբ, եթէ զայն դիտենք փի-
 լիստիայական կամ հողերանական անկիւնէն:
 Կիրակոսեան բանաստեղծութիւնը պարզ երևոյթ
 մը չի նկատեր, իրեն համար բանաստեղծութիւ-
 նը բանաստեղծին էութեան մաս կը կազմէ, կը
 ձեռքազատուի նոյնիսկ բանաստեղծէն ու կ'անց-
 նի անհատականութեան սուհմաները: Անոր հա-
 մար, ինչպէս նաեւ զերկրապաշտներուն համար,
 բանաստեղծութիւնը անհատին իրական պոթ-
 կումն է:

EL TRABAIO

Այնքա Կիրակոսեանի զՅր մը Հինգ ձայները
 հրեան կը բերէ ոչ միայն տառապանք, այլ
 նաեւ սպասութիւն: Ան իր հատորին մէջ զայինք
 մը կ'ըբած է արվարտութեան հետ, զաշնակցու-
 թիւն մը՝ զեղեցկութեան հետ եւ անոնցմէ հո-
 վանաւորուած՝ կ'ընթանայ զէպի իրականու-
 թիւնը, մանուկի մը անփութութեամբ:

Այնքա Կիրակոսեան ներքին ճիշդէն կ'անց-
 նի զէպի զարմացնող խաղաղութիւնը եւ իր լու-
 սեղէն բուսցող կ'իջեցնէ բանաստեղծութեան
 խորհրդաւոր ու բիւրեղիայ սալին, զառնալով
 հմայիչ, թարմ եւ սովորելի:

Երբեք Կիրակոսեանի անհատական յիրակոս-
 եանի քերթուածներէն եւ անոնցմէ կը յատնէ
 ուրիշ բան մը, ցոյց տալու համար քաղաքական
 սահմաններէն ալ անարդարութիւնը, որոնք
 ընթացքին, հազումով հայ այս երիտասարդ
 բանաստեղծուհին մինչեւ իսկ մանկական սերոյ
 նուիրուած բանաստեղծութիւններէն մեջ կը փո-
 խազրէ զէպի սոսկում, արհաւիրք, զէպի ան-
 սահման յուսահատութիւնը եւ իր նախնիքնե-
 րուն սպրած զարուար տառապանքը:

ԲՈՎՈՏՆ ԱՍՏՈՒԱԾ

... Ու Տէրն, առանց
 Հոգաբափի,
 Ննջարաւէտ
 Սանցաւ ներս,
 Հեռոնքում վրայ
 Պատգամն իր վեհ
 Փանդակով...:

Եւ պաղտուեանն
 Իրեն կախնց
 Պատուաճէտ-
 Աստորէն
 Հարտութիւնն իմաստութեամ
 Այնտեղ պարպեց...:

Ծանօթ էր ան
 Այ իմ հազոյս...:

Պատմած էին
 Արգէն իրեն
 Կոնիստանթին,
 Հեքիաթներէն
 Այն Կոյր Ազգին,
 Որ հաւտաց
 Անուաւորէ
 Երբ չէր համած
 Կոշիկն իրեն...:

Բայց կը ժամյնար
 Տէրը արգէն
 Իմ քիւսմէին
 Ու կոմակին
 Վրան ճնշող ետեքը խոր
 Թիքս մքքիկին...:

Արդարաբար ըմբի ուղեց
 Ամ զազոմապէտ,
 - Աժամապէտ -,
 Իմ իցիկէն, - որպէս իքը, -
 Լիտնիւմ ներս...:

Եւ քոյնտն էր
 Տէրն երկնէն-
 Ձայն մանիւս մէջ
 Ընդունեցի...:

Ա.ԻՍԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ԶԱՐԵՂ Մ. ՈՐՐՈՒՆԻ

Անգլոսոստի կտեն աստիճանի վեր մէջ կը գտնուի ծանօթ գրագետ եւ «Բազմեթի աշխատակիցներէն Զարեկ Որրուկի: Պիտի մնայ ատեն մը եւս, մեր հոծ գաղութը մտնէ ճանչնալու եւ իր գործերէն շարք մը կրտսարակութեան տալու համար:

Անցեալ տարի, «Բազմեթ» Որրուկիի «Եւ Եղի» մարդը վերջին մասին գրութիւններ կրտարակելով եւ ճայն գործը իր կերպով գրայցներէն մէկուն միւր զարմանալով՝ անագին հետաքրքրուիւն ստեղծեց գրագետին մասին: Որրուկիին գրականութիւնը մեծ ընդունելութիւն գտաւ ի մտնաւորի երիտասարդութեան մօտ:

Առաջին մեծ պատերազմին հալածուած ու իր հոգիին սեւաբար «Հալածուածներ» կրտակելու հրտասարգը եղաւ Որրուկի, որ, իրեն տարեկից ու ճակատագրակից ուրիշ երիտասարդներու հետ, կրտանակալ Քուտականներուն, Փարիզի մէջ հիմը գրաւ գրական ճար շարժումի մը, որ անկրկնելի մնաց Սփիւռքի մեր գրականութեան

մէջ: Կը պատկանի «Մեմօ» սերունդին, այն անհանդարտներուն, որոնք պատասխանատու յայտարարութիւններ ըրին, կործանումներու ձեռնարկեցին, այս ստանձնելով իրենց հետանկարներէն զրդուած յայտարարութիւններուն պատասխանատուութիւնը՝ ցցեցին իրենց հասակը գրական երապարակին վրայ, իրեն ներկայացուցիչները որոնման ճար տեղի մը:

Տագնապներ ունեցող եւ լռելի մը ի խղիւղի մերթիւն քասներուն մէջ միջոցով սիրող գրագէտն է Որրուկին եւ իր մշտաւոյց ներկայութիւնը արդիւնք է մշտաճարաւ իր մտքին:

Մարզն է իր գրականութեան տանցեղը, առանձին ու անկալից մարդը, աշխարհի մարդերէն անփական կրտանով մը անբատուող հա՛յ մարդը ընդհանրապէս, որ ինքնինքն ու արտաքին աշխարհէն տեսարար կը հալածուի, այլ կը շարունակէ մնայ, վերջուծել, կը ճգնի հասկնալ իր հագին մուր եւ լուստար կողմերը, շրտպատը, կը ջանայ ճշդի տիեզերքին հետ ունեցած իր յարաբերութիւնը եւ կը տնէ սփռաբար յայտի մը կատարած:

Երկրորդ պատերազմէն ետք, Որրուկի տեսն մը էէն ըրաւ հայ գրականութեան հետ: Գրեթէ ամբողջ տասնամեակ մը գրիչը կտարած պահեց, առջ չգրեց, ինքզինք մոռցուած կտարծեց, ու մեծ եղաւ գարմանքը, կրտ տեսաւ թէ երիտասարդներ կան, որ չեն մոռցած զինք, կը սպասեն իր խօսքին, ստորագրած էջերուն շարունակութեան: Ու վերջին ձեռք առաւ գրիչը եւ վերջին տասնամեակին, առայտան կորովով հակեցաւ տեղանին վրայ, գիրք հրտարակեց, թերթ հրտարակեց, ներկայ եղաւ համարտարար թերթերուն մէջ:

Ներկայիս «Սեւան» հրտարակչակալը ձեռնարկած է հրտարակել տաղանգաւոր գրագետին գործերը, ուրը հատորով: Տարակոյս չկայ, թէ հայ ըմբեցողը, երիտասարդութիւնը մանաւանդ, լրջութեամբ պիտի հետեւի այս տաղանգալից գրագէտին իրագործումներուն:

Մեր հրտարակած ներկայ պատմաւածքը մաս կը կազմէ հատորի մը, որ քանի մը օրէն հրտարակ կ'ելլէ:

Խ Ե Ն Թ Ը Ը Ս Ա Ի, Խ Ե Լ Օ Ք Ը Հ Ա Ի Ա Տ Ա Ց

ԳՐԵՑ

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ

Մայրիկս իրաւունք ունի, հօրքուրիս
պորտը փողոցն է մնացած, Տունը նստիլ
լի դիտեր, Գործերը լմնցածն, անպայ-
ման դուրս պիտի ելլէ: Միշտ ժամադրու-
թիւն ունի, երթալիք տեղ մը ունի, ա-
մէն անգամուն ալ ուշը մնալու պայմա-
նաւ: Տեղը կը հասնի հեւ ի հեւ, քայլերը
մեծ մեծ բանալով, ինչպէս փայտահատ-
ները անտառին մէջ: Արդէն քաղաքը ի-
րեն համար մեծ անտառ մըն է: Անտա-
ռին մէջ ծառէ ծառ պտտելու պէս կը մօ-
տենայ խանութներուն, կը ծոխ, գիթը
սպրանքներուն քեւու շափ, գիները կը
հարցնէ ու երբ իրեն գոհացում կը տրուի,
ճակատին խորշոմները ամփոփած կը հե-
ռանայ «չունչանորդինն»-ը, մարդ պիտի
կողոպտեն» մտաւայով: Մինչեւ գետինը
հասնող ծանր փէշերը ստոթած, զրեթէ
կը վազէ, այն վախով որ հանրակառքը
ճիշդ իր կայան հասնելու վրայ եղած ա-
տենը պիտի անցնի: Եւ այդպէս ալ կ'ըլ-
լայ: Կարծես գրաւի եկած է ու ամէն ան-
գամ գրաւը կը կորսնցնէ: Այն ատեն խո-
րպակս անարգուած զգալով ինքզինք,
կը կանգնի երկու լայն բացած ոտքերուն
վրայ ու փախչող հանրակառքին ետեւէն
կը պոռայ:

— Եունչանորդի՛... :

Տակաւին անգամ մը դուռը զարնելու
հաճոյքը չեմ ունեցած, քանի որ գինքը
միշտ դրանը առջեւ կը գտնեմ, մէկ սա-
քը մայթին, միւսը միակ սանդխամատին
վրայ ու ձեռքը՝ գուռը քայած ստեն: Ի-
րականութեան մէջ այս տեսարանը բա-
ռերով չեմ տեսներ, Բառերով անոր եր-

գիծանքը տալու յատկութիւնը չէ աըր-
 ւած ինծի, մանաւանդ անոր համար որ
 լայն գիծերով կը տեսնեմ: Իսկ գիծ քա-
 շել, ո՛ւնք, ձեռքս վարժուած չէ: Ինչ լաւ
 պիտի ըլլար եթէ գիծ քաշել սորված ըլ-
 լայի, մինակ հօրքուրս նկարագրելու
 համար: Քանի մը գիծով աւելի նպատա-
 կայարժար կերպով կրնայի հօրքուրիս
 պատկերը ձեզի տալ— դրանք առջեւ
 կանգնած, ահա այսպէս, մէկ ոտքը սե-
 մին, միւսը մայթին վրայ, աջ ձեռքը
 դրան բռնելիքին վրայ ու ձախը՝ արդէն
 պատրաստ փէշերը վեր քաշելու: Այս
 կրկնութիւնը հարկաւոր կը տեսնեմ անոր
 համար որ առաջին քացատրութիւնը զիս
 գոհ չձգեց: Կ'ուզեմ որ դուք ալ տեսնէք
 հօրքուրս իր այնքան ծիծաղ շարժող
 դիրքին մէջ: Կարելի չէ արդէն անոր հետ
 տխուր ըլլալ, միշտ լեզուին ծայրը ծի-
 ծաղ պատճառող բառ մը կայ: Գիտես որ
 եթէ բերանը բանայ, անպայման պիտի
 խնդատ, մանաւանդ իր ամէն մէկ պատ-
 մածին եղբակացութիւնը՝ որ կ'ըլլայ
 «չունչանորդի» մը, նետելով զայն տար-
 բեր շիտով մը ուսն ի վար, եւ որ իր
 ընդզուգին արտայայտութիւնն է: Ամէն
 բանէ տեղեակ է, ինչ որ կ'անցնի կը դառ-
 նայ զարուստի մէջ, դեռ աւելին՝ ինչ որ
 տեղի կ'ունենայ իւրաքանչիւր տունէ
 ներս: Եղբակացութիւն՝ աղէտ: Ամէն ինչ
 վերեւի մը է շրջուած: Ոչ մէկ բան իր
 տեղն է:

— Աս ուրտեղնե՞րը ինկանք,— կ'ըսէ
 խոր մտածման մէջ ինկած ու ցած, փըս-
 փըսուող մը, կ'աւելցնէ «չունչանոր-
 դի»...

Այս անգամ յայտնի է, թէ որուն
 կ'ուղղուի վերջին բառը: Մեր բոլոր ձա-
 խորութիւններուն պատճառը եղող
 թուրքին: Վա՛յ անոր որ կը համարձակի
 ըսել թէ թերեւս, ո՛վ գիտէ, եթէ մենք
 ալ...: Անմիջապէս գէժքը սեփ սեւ ե-
 դած, այնպիսի մայն մը կը հանէ կողոր-
 դէն, որ տեղն ու տեղը կը սառի: Հապա
 նայուածքը: Դէ՛մքին սեւութեան մէջ եր-
 կու խոշոր ճերմկացներ:

— Սո՛ւս, ծօ, դո՛ւն ալ նորածեւո-
 թեան ելեր ես:

Ես միայն մէկ անգամ համարձակե-
 ցայ այդ «թերեւս»ը արտասանել: Շատ
 սարիներ առաջ: Անկէ ի վեր, եթէ պա-
 տահած է որ այս բանը միտքս զայ հօ-
 քուրիս ներկայութեան, մարմինէս սար-
 սուտ մը կ'անցնի:

Հանրակատար կը ճանչայ իր երկա-
 թագիծերուն վրայ ու մէկէն կը կենայ:
 Վար կը ցատկեմ ու կը վազեմ: Կը վա-
 դեմ: Հօրքուրիս տունը ճիշդ դիմացն է,
 հազիւ յիտուն մեթր: Առտուան այդ պա-
 հուն, ի հարկէ, ան տունն է: Գոհ սրտով
 կը քալեմ: Փողոցը պարապ է, դրան տու-
 ջեւ չեմ տեսներ հօրքուրիս պատկերը:
 Փողոցը իր երկայնքին երկուքի է բաժ-
 նուած, կէսը արեւ, միւս կէսը շուքին
 մէջ է: Ենդաղ է փողոցը: Կարճ փողոց
 մը, որ կը սկսի երկար ու խճողուած փո-
 ղոցէն՝ ուրկէ կ'անցնի հանրակատարը:
 Փողոցին շափ ես ալ խաղաղ եմ, կէս շու-
 քին, կէս արեւին մէջ, այսինքն՝ կէս
 տխուր իմ հոգիին պէս, կէս դուարթ ու
 չկնոող՝ հօրքուրիս հոգիին պէս: Պէտք
 չեմ զգար քայլերս արագացնելու: Զրո-
 դած եմ քեզ վերջը հօրքուրէս դալիք բա-
 ուերը մտքիս մէջ ծածմելով: Ահա ար-
 դէն տասը թիւին դիմացն եմ: Թիւր,
 զուար եւ զբան բռնելիքը՝ որ երկաթէ
 դոց ձեռք մըն է, ամէն բան տեղն է,
 բայց շունին այն առաքինութիւնը, զոր
 ունին երբ հօրքուրս կանգնած է անոնց
 առջեւ: Երեւակայութեանս մէջ ձեռքս
 կը տանիմ զբան զարնելիքին ու, չը-
 բա՛խ, տունը ներսի սանդուղներուն
 պարապութեանը մէջ կը թնդայ: Ու յան-
 կարծ ներսի մութին մէջ կը զգամ ծանր
 մարմին մը՝ որ կը շարժուի, կը մոզը-
 տայ:

— Մօ՛, մարդ Աստուծոյ, հասկը-
 ցանք, իշտէ պիտի բանանք, համբերու-
 թիւնդ հատա՛ւ:

Կը խնդամ քթիս տակէն, երեւակայե-
 լով ծանր մարմինն դժուարաւ իջնելը
 սանդուղներէն, հողոցներ հանելով, մա-
 նաւանդ գիտեմ որ դուք զարնող ով ըլ-

լալը դիտէ, քանի որ անպայման մէյ մը նայած է պատուհանէն, վար իջնելէ առաջ, Բայց երբ մայթին եզերքէն մէկ ոտքս փողոցին սայարկին վրայ կը նետեմ— մէկէն կանգ կ'առնեմ, ինքնաշարժ մը կու գայ արագ ու երբ կ'անցնի դիմացը, արեւին տակ, Հօրքուրիս ստուերն է գրան վրայ: Ստուերը, բայց ո՛չ, Հօրքուրս ինքն է, միշտ նոյն դիրքին մէջ, մէկ ոտքը մայթին, միւսը սեմին վրայ ու ձեռքով դրան բռնելէր կը քաշէ եւ արդէն դէմ դիմաց ենք: Դուռը խնթնեցնող աղմուկ մը հանելով կը գոցուի ու Հօրքուրս կը նետուի վզին, երեսներս կը համբուրէ, կը խածոտէ, կը թրջէ:

— Ծօ՛, առ ինչ աղէկ եղաւ, ակամօղջ խօսքացաւ կ'երեւայ, շո՛ւտ, շո՛ւտ, հիմա թրամուսը կու գայ, ուշը մնացինք:

Ես պէտք չունիմ հարցուփորձի: Արդէն արիթ չի տար: Դադար չունի: Քառասուն պատմութիւն ունի պատմելիք: Կը կենայ, կը խօսի արագ, թեւէս կը քաշէ, քանի մը քայլ կ'ընենք, նորէն կանգ կ'առնէ, կը նայի երեսու ի վեր:

— Ա՛խ, պոյրդ ձեռնիմ, տղաս, հայրիկէ ըլլար ու տեսէր: Գացին չէօլերը մնացին, առոնք ալ մեծցան, մարդ եղան ու Հօր երես չտեսան: Ծօ՞, ինչո՞ւ վարսենիկը հետը չբերիր: Խեղճ մայրդ, մէյ մը բեր, սանկ օր մը անցընենք միասին:

Հետուէն հանրակառքին ձայնը կ'ելլէ ու մենք դեռ դրան առջեւ ենք:

— Հօրքուր, հանրակառքը:

— Լռէ՛, ծօ՛, ինչէ՞ն դիտես որ թրամուսը պիտի առնենք:

— Ի՞նչ դիտեմ, դուն միշտ հանրակառք կ'առնես:

Յանկարծ տեղէն կը ցատկէ երազէ արթնողի պէս ու թեւէս քաշելով կը վազէ: Կը մոռնայ փէշերը ստաթելու, ոտքերը անոնց կը խառնուին վազած տան ու ինչալու վրայ կը փաթթուի ինծի: Հանրակառքը հասնի է կայան ու կը պատրաստուի մեկնելու: Ծի՛ն, ծի՛ն, գանգը կը զարնէ ու երբ մենք կայանն ենք՝ թռչունի պէս կը թռչի մեր ապշած

աչքերուն առջեւէն, ուրախ ու զուարթ՝ իր թոխիքին մէջ: Հօրքուրս փէշերը կը ձգէ, ձեռքը կ'ուղղէ փախուող հանրակառքին ու կը պոռայ զայրացած.

— Ծուռչանորդի՛...:

Հազիւ թէ կրնամ ինչուքս գտնել: Հօրքուրիս հետ կարելի չէ խնդալ դժբախտութեան վրայ: Աժօթ է: Կրթուած մարդու վայել չէ: Դժբախտութեան մէջ պէտք է արտում դէմք ունենալ, խնջոյթի մէջ՝ ուրախ: Բայց չեմ կրնար գտնել ինչուքս՝ որ կը կլկլայ կոկորդիս մէջ, սյնքան ծիծաղաշարժ է կեցուածքը ու կ'ըսեմ ինչուքս չպոթեկացնելու համար:

— Բայց ո՞ւր կ'երթանք այսպէս, Հօրքուր:

— Սո՛ւտ, ծօ՛, քեզի ի՞նչ, ես ուր՝ դուն հոն:

Ու ձեռքով օդը կը ծծէ:

Կը նայիմ Հօրքուրիս: Միտքս կը բանի: Հանրակառքը կ'ուռնայ, որովհետեւ անհամբեր ենք: Մէկէն, ալ Հօրքուրս չի խօսիր: Տեղն ու տեղը կը շարժի, կը շարժուի անդադար: Կը խորհիմ, կ'ուզեմ ըսել, անպայման պիտի ըսեմ, բայց մարմինս կը սարսուսայ: Ահապարհ օրինակ մըն է ասիկա: Յանցանքը մերն է եւ ոչ թէ հանրակառքինը, ինչպէս թիրեւս... բայց ո՛չ, չեմ ուզեր Հօրքուրիս երեսներուն սեւնալը տեսնել, մանաւանդ անոր աչքերուն խոշոր ճերմկուցները, դէմքին խաւարին մէջ: Բարեբախտաբար հանրակառքը կու գայ երկարածիդ ճրոխչներով ու կապաւուն կայծեր արձակելով ճիշդ փողոցին այն մասը՝ որ կ'որ մը կը դառնայ հասնելու համար կայան:

Հօրքուրս թեւէս քաշելով ու հրժեշտը կելիով ճամբորդները, կառք կը բարձրանանք: Երկու նստելիք տեղ կայ միայն: Կը նստինք: Գոհ է Հօրքուրս որ նստելիք տեղ ունինք: Գոհ է ոչ թէ միայն նստելու համար, այլ մանաւանդ տնոր համար որ ըստ իրեն յաղթանակ մըն է ըրածը: Իր նստելու ձեւէն յայտնի է: Ամբողջ մարմնին կշիռովը նստած

ըլլալուն վիզը ուսած է, իբրև գոհու-
նակութեան նշան: Բայց մէկէն զէմքը
կը տրամի, յօնքերը կը պոստին: Տեղս
տուած եմ պառա կնկայ մը: Քիչ մը
Հեռու եմ իրմէ: Ա՛լ Հետս պիտի չկրնայ
խօսիլ: Կը Հասկնամ, ըսելիք ունի: Յան-
դիմանութիւն կայ աչքերուն մէջ: Հեռ-
ւէն կը նայի երեսիս, աչքերը կը յառէ
աչքերուս: Հանրակառքը կը սուրայ ան-
հասնում փողոցին երկայնքին: Յետոյ
կը դառնայ ալ ու կրկին երկարապատում
փողոց մը: Պատու կինը դուրս կ'ելլէ
զլիսու թեթև հակում մը ընելով դէպի
ինձ: Անմիջապէս Հօրքուրս ձեռքը նըս-
տարանին վրայ կը դնէ, ձեռքովը նստա-
րանը ծեծելով:

- Եկո՛ւր, ծօ՛, նստէ:
Հանրակառքը իրապէս կը սուրայ
Հիմա: Բառին իսկական առումով: Ծի՛ն,
ծի՛ն:

Արդէն քաղաքին ծայրամասն ենք:
Ճամբան նուազ խճողուած է: Ծփոթ ա-
րեւ մըն է որ փռուեր է փողոցին վրայ
ու անոր տուեր՝ երազկոտ տեսք մը:
Երկկնքին վրայ, որ սպիտակաուռ կա-
պոյտ մըն է ու ցած, շոգիի բարակ խա-
մը կայ: Հօրքուրիս Հետ, քով քովի,
լուս, կարծես անվախճան ճամբորդու-
թեան մը ելած ենք: Բայց որովհետեւ
այս աշխարհի վրայ ամէն ինչ վերջ մը
ունի, մեր ճամբորդութիւնն ալ վերջա-
պէս կը Հասնի իր վախճանին ու մեր բն-
դարմացած վիճակէն դուրս կը ցատկենք,
ճիշդ ջուրէն դուրս նետուող ձուկերուն
պէս: Խոշոր, ամայի Հրապարակի մը ե-
ղերքն ենք՝ որուն ալ կողմը երկար պատ
մըն է: Բարձր պատ մը, քարալէն: Պա-
տին մէջտեղը մեծ դուռ մը, պատկա-
ռապղբո՛ւ՝ որմէ անդին ծառաստաններու
տակ կը աննուրի գերեզմաններ՝ ըստ-
ուերներով շրջապատուած:

- Ծո՛ւտ, ի՞նչնեք, - ըսաւ Հօրքուրս,
- թրամուայը չմեկնած:

Գերեզմաննոցին առջև խումբ մը
մարդիկ կան: Ձաննք տեսնելով Հօր-
քուրս շուշ մը կը քաշէ:

- Օ՛Ք, պէ՛, ուշը չենք մնացեր:
Այն ատեն կը Հասկնամ որ յուզար-

կաւորութեան եկած ենք: Ու կը սրտնե-
զիմ:

- Ինչո՞ւ ինծի չսիրած տեղերս բե-
րիք, Հօրքու՛ր:

- Սո՛ւս, Հապա մինս՞կս դայի:

Կը մօտենանք յուզարկաւորներու
խումբին: Հօրքուրս քթին տակէն բարեւ
կու տայ ասոր անոր: Բոլորին զէմքերը
կախ են, վշտոտ ու սգաւոր: Մերթ ընդ
մերթ բառ մը կը փոխանակեն իրարու
Հետ ու կրկին լռութիւնը կ'իջնէ արտաբ
դէմքերուն վրայ: Բոլորն ալ տարեց են,
այր ու կին, Հաւաքուած դազադի մը
չուրջ՝ որ դըրուած է գեաինը, ինչպէս
Հասարակ սնտուկ մը: Ժամ մըն է այդ-
պէս գերեզմանատան դրան առջև կը
սպասեն: Մեռելատար կառքը դաջեր է
երկար սպասելէ ետք: Պատաս պատաս
լուրերը քաղելով Հօրքուրս կը փսփոսայ
ականջիս, յետոյ կ'երթայ, օտքերը
քաշքշելով, դազադին վրայ աչք մը կը
նետէ:

- Վա՛յ, ծօ մարդ, ասա՞նկ պիտի
ըլլար:

Այդ պահուն անոր զէմքը իսկապէս
ողբերգական է, բայց եբբ ինծի կը մօ-
տենայ, նայուածքին խորքը շարաճնի
կայծ մը կը պլպլայ ու գլուխը փարտե-
լով:

- Վա՛յ ջլթիկ, վա՛յ, - կ'ըսէ, - այս-
պէս գետինները պիտի ձկէր էրիկդ:

Ատենը անգամ մը, խօսք մէկ ըրա-
ծի պէս, յուզարկաւորներ քաղաքին կող-
մը փողոցն ի վար կը նային: Հանգուց-
եային այրին կը սպասեն: Այլրին չ'երե-
ւար: Խումբին մէջ անախորժ շարժում
մը տեղի կ'ուենենայ, աչքերը կը մէկ-
տեղուին գետինը դըրուած դազադին վը-
րայ եւ կուրծքերէն դժուարին շունչ մը
դուրս կ'ելլէ, կ'երկարի օդին մէջ՝ ուր
ան մտահոգութիւն մը կ'ըլլայ: Ո՞վ պի-
տի դայ, կի՛նը, թէ...

- Քա՛ծն է դալիքը... չէ նէ՞... -
կ'ըսէ մէկը:

- Ո՛ւ, կի՛նն է, - կը պատասխանէ
միւսը, աւելցնելով, - ո՞վ գիտէ, դային
Համոզելու:

Այն ատեն է որ ինքնաշարժ մը կը

Հասնի արագավազ ու կանգ կ'առնէ խումբէն քիչ մը հետու: Մեւ շարժանքու մէջ կորսուած կին մը դուրս կ'ելլէ անկէ երկայնահասակ ու երկար դէմքով նիհար ծերունիի մը հետ եւ անմիջապէս կը նետուի դազաղին վրայ, առանց ներկաներուն վրայ աչք մը նետելու: Յետոյ կը սկսի վայրցներ հանել, երեսները ուղղուած արցունքներու մէջ:

- Ա՛խ, աս էր ընկիւթը, հա՞, աս ինչ բաներ քերէր գլխուս, մարդ, ուրտեղները դացիբը, որո՞ւն ձգեցիր Շուշանիկը, շուշանի պէս կնիկդ ու դացիբը, ես ի՞նչ ընեմ հիմա աս անտէր աշխարհիս վրայ, հող դնեմ գլխուս, հող ու նստեմ, մոխիր ցանեմ աչքերուս...: Գուն դացիբ, ալ ես ի՞նչ ընեմ այս տեղումքը, մարդ, ըսէ՛, աչքերդ բաց մէյ մը, նայէ Շուշանիկիդ, որո՞ւն ձգեցիր, որո՞ւն յանձնեցիր միս մինակ կնիկդ աս անտիրական աշխարհիս վրայ, ես ի՞նչ ընեմ հիմա, գլուխս ո՞ր քարերուն զարնեմ, երկինքը սեպուցիբ, մազերուս մոխիր լեցուցիբ, տունս քանդեցիբ, աւերակ բրիբ աշխարհը, վա՛յ, վա՛յ ինծի...:

Գլուխը, փոխանակ քարերուն, կը զարնէ դագաղին, ձեռքերով մազերը կը քաշէ: Կիները, սրտածմբիկ, կը նետուին վրան, կ'արդիւնն:

- Խե՞նթ ես, աղջիկ, ի՞նչ կը վնասես քեզի, հայտէ՛, եղածը եղած է, ա՛լ ի՞նչ կրնաս ընել, Աստուծոյ կամքն է, ե՛լ, ե՛լ, մեղք ես:

Հօրքուրս որ պահ մը շէնչող նայուածք մը ունի այրիին եղերերգութիւններուն վրայ, յանկարծ մատը կը տանի աչքին, արցունքի կաթիլ մը սրբելու համար:

- Աչքդ կուրնայ, աղջիկ, սիրտս թունդ հանեցիր:

Պահ մը հանդարտելէ ետք գինքը զրկող կիններուն թեւերուն մէջ, այրին ոռւմբի մը պէս կը պայթի նորէն դադաղին վրայ՝ որուն արդէն կը մօտենան գերեզմանատան պաշտօնեաները ու քահանան, աւելի աղէողորմ, աւելի սան-

ձարձակ կը սկսի գլուխը զարնել զազաղին:

- Ա՛ռ, ինծի ալ հետդ տա՛ր, անտէր մի ձգեր Շուշանիկդ...:

Ու քովը անայլայլ կանգնած երկայնահասակ նիհար ծերունիին դառնայով, ցած ձայնով կը բղաւէ. «Քա՛, ինչո՞ւ կը սպասեն, թող տանին, յոգնեցայ պոռպըռալէն»: Այն ատեն ծերունիին գլխով թեթեւ շարժում մը կ'ընէ եւ հանդուցեալին բարեկամները կը վերցնեն դագաղը իրենց ուսերուն վրայ: Այրին վերջին ճիգ մը կ'ընէ, կը գրկէ էրկանը պաղած մարմինը կրող սնտուկը, կարծես արդիւնու համար որ տանին, բայց իսկոյն խաղաղած կը կենայ, ուքի, գրեթէ անկենդան, կը գրակ իրեն յատկացուած տեղը, ճիշդ դազաղին ետեւը, երբ ասջեւէն քահանան կը սկսի աղօթքը իբր միօրինակ ձայնով:

Ու ահա, փոքրիկ թափօրը ներս կը մտնէ գերեզմանատան մեծ դռնէն, դպրոցականներու պէս, որոնք կարգով դասարան կը մտնեն:

Հօրքուրս արմուկովը կը զարնէ թեւիս:

- Քայլէ՛, տղա՛ս, ահա թրամուսը: Եթէ արհեստով դրող ըլլայի, պէտք էր որ հոս դադրեցնէի պատմութիւնս: Լաւ վերջացած, չէ՞, թռչունի մը նետուած քարին պէս որ իր նպատակին հասած է: Թռչած ատեն: Բա՛ն, բա՛ն: «Քալէ՛, տղաս, ահա թրամուսը»: Բայց անդիմադրելի ուժ մը կը դրդէ դիս հետեւիլ հօրքուրիս, տուն երթալ, սեղան նստիլ, լաւ մը ճաշակել անոր համով կերակուրներէն, անվերջ մտիկ ընել անոր պատմութիւնները, որ իբր կերակուրներուն շափ համեղ են եւ որ ոչ սկիզբ ունին, ոչ վախճան, հնթարկուիլ անոր թաքթաքուն հետաքրքրութիւններուն, հարցուփորձներուն. «Է՞, ըսէ՛ նայինք, վե՞րջը...», այնպէս ինչպէս երբ տղայ էինք, անկողին մէջ կձկուած, ականջներնիս սրած, մտիկ կ'ընէինք հազար ու մէկ գիշերներու հեքիաթները, անհամբերութենէն սպառած, գիշերուան մութ սենեակին մէջ

կը նետէինք նոյն գէ՛, վե՛րջը...», երբ պատմողը պահ մը կը դադարէր պատմելէ, շունչ մը քաշելու համար:

- Հօրքուր, - կ'ըսեմ Հանրակառքին մէջ, - ես ճամբաս շարունակեմ մինչեւ կայարան, կէս ժամէն շոգեկառք ունիմ:

- Հայտէ՛, անանկ բան չըլլար, - կը նեղանայ, - մէյ մը տուն երթանք, բան մը ուտենք, ետքը կ'երթաս:

Հօրքուրիս գրան մը ուտենքը, ի հարկէ, ըսելու ձեւ մըն է: Ես բնաւ անոր մէկու մը հետ ճաշելը չեմ տեսած: Նոյնիսկ երբ իր գաւազնէրը, Արշակն ու Պողոսը հետն էին: Նախ տղոցը ճաշը կու տար, լաւ մը կը կշտացնէր անոնց փորը ու, ապա, ինք կը նստէր սեղան ու կը սպառէր մնացուկները, մատնեքուն ծայրերովը զտտելով կտորները, ճկոյթները միշտ օդին մէջ:

Հիմա ան կը դառնայ եռանկիւնի մը մէջ: Սեղանէն դարակը, դարակէն կրակարան ու սեղանը կը լեցուի ուտելիքներով: Աչքս կը պտտի անոր ետեւէն: Ինչ հոգսածութիւն կայ անոր շարժումներուն մէջ, աշխատանք չէ, կարծես պատարագ է որ տեղի կ'ունենայ: Բայց յոգնէր է Հօրքուրս, ազուտք մը ծերացել է, հաստցեր է, ուսմամբիզմը անզուտրուկ է ծունկերուն եւ ուտերուն մէջ: Կունակը թեթեւ մը կորացած է, սակայն միշտ առօրէ կ'ուզէ ձեւացնել ինքզինքը: Ամէն անգամ որ պնակ մը կը դնէ սեղանին վրայ, երկու ձեռքերովը մէյ մը կը շոքի սեղանին ջիւղ մը ուստեղու համար եւ միեւնոյն ժամանակ ժպիտ մը կը ծնի դէմքէն, կասկածս փարատելու համար: Ու աւելի արագ կը դիզէ կերակուրները սեղանին վրայ, նորեք իր դնէ կրակին վրայ ու պահ մը սենեակը կը լեցուի ոչխարի խորոզածին զգլիթէ բոյրով: Սեղանը արդէն լեւի լեցուն է, պէտք եղածէն աւելի, բայց չեմ համարձակիր ընդմիջել Հօրքուրիս սրտին դեղումները, որովհետեւ անոր համար ամէն ընդունելութիւն հարսանիք է եւ մանաւանդ ան դիտէ իմ բոլոր սիրած կերակուրներս եւ կը սիրէ ինծի համտեսել

տալ բոլորէն ալ: Ա՛հ, անոր տոլման, գաղան, նամանաւանդ կորկոտէ ապուրը՝ որուն համար միշտ անկիւն մը կը տար մը շորթան կ'ունենայ...:

Յետոյ կը նստի դիմացս, ցած անթոսակի մը վրայ, ձեռքերը ծոցը խոթած, դունչը երկարած դէպի ինձ, երբեմն դուրսը ցնցելով վերէն վար, յօնքերը վեր առած, ըսելու համար լռելեայն թէ ինչպէ՞ս է, լա՛ւ է, համո՞վ է: Անուշ ըլլայ:

Ու ինչպէ՛ս դո՛ւ է, կարծես դէմքը լոյսերու մէջ կը լողայ: Բայց այսօր քիչ մը ջղայնացած կ'երևի: Երբեմն կունակէն բեռ մը վար նետելու պէս շարժում մը կ'ընէ, քթին տակէն մրմնջելով:

- Ձլթիկ, վա՛յ ջլթիկ...:

Գիտեմ, կը սպասէ որ իրեն հարց տամ, որպէսզի սկսի պատմել: Միայն թէ, ես չիմանալու կու գամ:

- Հօրքուր, Պողոսէն նամակ առի՞ր:

- Գիտես ես, հիմա Նիւ Եորք Հաստատուած է: Գործերը մեծցուցած է:

- Անցեալ ամիս Փարիզ Արշակին հանդիպեցայ: Անրպապայէն բաժնուկեր է: Գիտե՞ս որ անուն հանած վերաբոյժ է Հիմա:

- Է՛, Արշակս ուրիշ տղայ է: Պօղոսը հօրը ելած է: Աղուոր վանառական պիտի ըլլայ:

Բայց Հօրքուրիս միտքը ուրիշ տեղ է: Կը զգամ որ, ահա, պիտի սկսի պատմել: Առիթի կը սպասէ, մինչդեռ կը բաւարարուի իր կերակուրները զովարանելով:

- Լռէ՛, ծօ՛, - կ'ըսէ, - կէ՛ր, կէ՛ր:

Ըրածը համեստութիւն չէ, անհամբերութեան նշան է: Անշուշտ դո՛ւ է որ այդպէս ախորժակով կ'ուտեմ, բայց կ'ուզէ որ ես լռեմ ու ինք խօսի: Սիրտը լեցուն է, պարպել կ'ուզէ տաքը տաքին: Ու յանկարծ խոշոր բառ մը կը փախցնէ բերնէն.

- Շոտանը, - կ'ըսէ, իրրեւ թէ ինքնիրեն, դուրսը մինչեւ գետինը ծռած:

Այլ համոզուած եմ որ կարելի է գիտագրել հօրքուրիս :

- Հօրքուր,- կ'ըսեմ, դործը դիւրացնելու համար այս անգամ,- ո՞վ էր այս սօրուան թաղածնիդ :

- Տեսա՞ր ընթիկին ըրածը, էրկանը հոգին բերնէն բերաւ, օտար կնիկին ծոցը նետեց : Ո՞րք է մարդը գլուխը կորսնցուց : Օթոյին տակը մնաց առտուն կանուխ, Ֆապրիքային ճամբան :

- Հօրքուր, սա զաղապէ չկայ մը, մէկ հատիկ է, մէկ հատիկ :

- Ա՛ն, ծօ, թուղթին փաթթիմ հետդ տար :

Դիտմամբ խօսակցութիւնը կը շեղեմ, որպէսզի հօրքուրս ուրիշներուն ամկողնի պատմութեան մէջ չմտնէ, որովհետեւ, եթէ սկսի, անանկ իրապաշտութեամբ մը կ'ընէ, բառերու անանկ ընտրութեամբ մը, անանկ մանրամասնութիւններով, որ այս պրածս հրատարակող թերթին խմբագրատան գուռը ողջ չեն ձգեր հայ ընթերցողները : Պիտի ըսեն որ զրպարտութիւն է ըրածս, մանաւանդ սրբապղծութիւն : Հայ կիւն մը իր էրեկը ուրիշ կնիկի ձեռքը չի նետեր, այն պարզ պատճառով, որ էրեկը անձա-

րակ է : Ճնայէ՛, աժեմը չաժեմը մարդ եղան, տուն տեղ շինեցին, Ֆապրիքային կապուէր մնացեր ես : Դուն ի՞նչ անճարակ մարդ ես եղերք :

- Ծօ՛, մարդուն դուրսը կերաւ պէ՛, - կ'կարակացնէ հօրքուրս :

Ա՞հն պարագայի այս էջերը հրատարակութեան համար չեն, ոչ թէ անոր համար որ անոնք կրնան արժէք մը չընելու պատճառով, որոնք մանաւանդ անոր համար որ այս բոլորը սուտ բաներ են : Ա՞հն մարդ զիտէ թէ՛ զես ոչ հօրաքոյր ունիմ եւ ոչ ալ մօրաքոյր : Մեր գերդաստանը ամբողջութեամբ անթաղ է մնացած հեռաւոր Հայաստանի հողերուն վրայ : Եւ թաղանէն միայն մայրս եւ ես խուսափած ենք : Իայց երբեմն այսպէս պատմելու անհուն տենչանք մը կը համակէ հոգիս, պարզապէս պարտանքով մը, ինքնախաբէութեամբ մը չունեցածս պատմելով ունենալու համար : Պարզապէս :

Ինչպէս պիտի ըսէր մայրիկս .

- Ո՞նք էր ըսաւ, խելօքը հաւատաց . . . :

2. Մ. ՈՐԲՈՒՆԻ

4. ՄԵՇԵԱՆ

Հ Ա Յ Ը

(ԷԵՔԻԱԹ)

Հայր Հասա Մասիսի առջեւ եւ, հըմայուա՛ծ, կանգ առաւ:

Մթին ձորերէ ու անկոխ անտառներէ ետք, որոնցմէ անցիր էր ան իր երկար թափառումներու ընթացքին, հարթ ու անծայրածիր տարածութեան վրայ երկխարխիս լեռը կատեցուցեր էր իր քայլերը:

Եւ Հայր, ուղղաճիւղ կանգնած անոր դէմ, ակնապիշ կը դիտէր զայն:

Յոգնաբեկ էր: Կուրծքը կ'նկուկնկէր եւ քրտինքը կը թորէր պղնձացած ճակատէն:

Լոյսը ծորեր էր հարթավայրին վըրայ: Երիցուկներ ու ծնեբեկներ կ'օրորուէին Հովիկին դուռնաքէն: Եւ ամայութեան ընծայած անդորրութեան մէջ ծրդրիկներ լսելի կ'ընէին իրենց երգը: Հետե՛ւն՝ զետի մը մեղմ կարկաչը կու դար:

Արեւը թեքեր էր զենիթէն եւ իր սակեայ ու նրբին շղարչը տարածեր էր Մասիսի սպիտակ կատարներուն ու լանջերուն վրայ:

Հետուն, շա՛տ Հետուն, սարերը կռնակ տուած էին իրարու՝ սպիտակ քողով մը պարուրուած: Գազաթներ, տեղ տեղ, պատասեր էին շղարչն այդ թափանցիկ, որ դեռ կը յամենար, ծուէն ծուէն, յածիլ ու յամենալ անոնց շուրջ: Քմայաբոտ սիւք մը կը խաղար ծուէններուն հետ: Կը բզկտէր զանոնք: Կը տարտըզնէր եւ կրկին կ'ամփոփէր արեւուն

դէմ, որ, յետմիջօրէի այդ պահուն, կ'ազնուէր զանոնք եւ բոցէ երիզներ կամ յակինթներ կը շարէր անոնց վրայ: Եւ իր ոսկիէ թելերը կը խրէր մինչեւ ծերպերն ու խորշերը սարերուն: Իսկ ինք, Հորիզոնին վրայ, Մասիսի ետեւ, անդըր՝ շիրիմեան հերոսի մը ոսկեզօծ վահանին էր նման:

Հայր, որ, իր երկարատեւ թափառումներու ամբողջ տեսողութեան, բարձրացեր էր լեռներու կողերն ի վեր եւ ի վեր մինչեւ անդունդներն անոնց, այժմ անլարժ կը մնար Մասիսի դէմ՝ ապշած՝ անոր տարօրէն երեւոյթէն եւ կախարհուած՝ փառապա՛նծ շքեղութենէն:

Գազաջող լոյսը մթազնեք էր իր աչքերը: Եւ ան է զո՛ւր կը ճշնէր ըմբռնելու էութիւնը իրեն համար անօրինակ այդ երեւոյթին:

Իրեն այնպէս թուեցաւ, թէ բազուկը կ'երկարէ ու կը հպի՛ր անոր, — անիկա այնքան մերձ կ'երեւէր իրեն:

Փորձեց քաշել՝ բոլորովին մօտենալու համար: Բայց Մասիսի դադաթներուն ստթած մերձաւորութեան պատրանքը փարատեցաւ՝ ստորտարին ցոյց տուած Հեռաւորութենէն:

Եւ Հայր կրկին կանգ առաւ:

Եւ, չփոթած՝ անստուգութենէն, ինչպէս նաեւ խոսված՝ անոր վիճութեանէն, — ի՞նչ ես դուն, — պո՛ղեց անդաւարար:

Ու մինչ իր հարցումը դեռ կ'արձա-
զանդէր հետուն :

= Լե՛ռ եմ, — լսուեցաւ բամբ պա-
տասխանը Մասիսի :

Եւ այդ ձայնը, որ որոտ մըն էր,
զգրգացուց շրջապատը :

— Լե՛ռ, — զարմացաւ Հայր՝ լայն
բանալով աչքերը, — բայց դուն ինչո՞ւ
այդպէս առանձին ես ու մեկուսացած
ուրիշ լեռներէ : Այդպէս իրորիտ եւ հմա-
յիչ միանգամայն : Երկինքը բռնե՞ր ես
ուսերուդ վրայ, արջայի պէս թառ ես
դրե՞ր կատարներուդ, եւ աշխարհին կը
նայիս հպարտ ու արհամարհական... :
Եւ ինչպէ՞ս է, որ դուն եղած ես ա՛յդ-
քան վիթխարի եւ այդքա՛ն տիրական եւ
ամուր՝ լեռնացած մարդու մը նման :

= Երկրի ընդերքները սասանեցնող
վերիվայրումներէն ժայթքած ու ցցուած
եմ վե՛ր, — պատասխանեց Մասիս՝ հան-
դարտ ու անայլայլ :

— Եւ այդպէս միշտ կը մնաս ան-
շա՛րժ :

= Անյիշատա՛կ ժամանակներէ ի
վեր :

— Յանուն ինչի՞ եւ ընդդէմ ինչի՞,
— տեյի ճետաբերդուեցաւ Հայր :

= Յանուն տեւականութեան եւ հեպ-
նելու համար տարերքը բնութեան :

— Ըսել կ'ուզես անվարճա՞ն ես՝
հակառակ տարերքին ու արհաւիրքնե-
րուն, որոնք, ինչպէս տեսայ թափառում-
նեքուս ընթացքին, անտառներ կը հրկի-
զեն, բարձունքներ կը տապալեն եւ տա-
րածութիւններ կ'ողողեն՝ իրենց յոր-
մանքին մէջ ընկուղիով ամէն բան : Իսկ
դուն, կ'ըսես, հակառակ այդ բոլորին,
կը մնաս անսասուն ու տեւական :

= Ինչպէս կը տեսնես :

— Տարօրինա՛կ, — բացառանշից
Հայր՝ շժմած այլեւ հիացած, — լեռնե-
րը, որոնցմէ անցայ ես, շղթայուած են
իրարու եւ իրարմով են ամբոցած եւ
իրարմով պաշտպանուած : Լանջք լանջ-
քի՛ մէկը կուտան է միւսին : Իսկ դուն,
լայնախարիսիս ու յանձնապատան,
կանգներ ես առանձին :

= Որովհետեւ, — յարեց Մասիս, —
հզօրանքը առանձնութեա՛ն մէջ է : Ինք
իրմով կանդուս պէտք է ըլլալ՝ փոխա-
նակ կոթնելու ուրիշներու, որպէսզի գո-
յութիւնը ըլլայ ապահով եւ ոչ թէ պայ-
մանաւորեալ :

— Իսկ ատոր համա՞ր, — ուզեց ըս-
տուզել Հայր՝ ակնարկը միշտ սեւեռած
Մասիսի սպիտակափառ դազաթներուն :

= Հարկ է ունենալ աննկուն ինքնա-
վրտաստութիւն եւ անխորտակելի կամք :
Իսկ դուն, ինչպէս կ'երեւի, կը թափա-
ռիս սար ու ձոր... :

— Մնայուն կայք մը ապահովելու
համար, — վրայ բերաւ Հայր :

= Եւ կը փնտռես ապաւէն եւ ապաս-
տան՝ փոթորիկներու եւ հեղեղներու
դէմ :

— Այո՛... կեանքի հարկադրա՛նքն է
ստիկա :

= Բայց չե՞ս անդրադառնար, թէ
այդ փնտռուքի՞դ մէջ իսկ, որ քեզմէ
դուրսի ուժերէն սարսափիչ ծնունդն է,
արդէն իսկ կ'ապրիս հոգեկան պարտու-
թիւն մը :

— Ինչպէ՞ս, — ընդվզեցաւ Հայր
յանկարծ՝ ցցելով դուրսի :

= Անո՛ւշաւ : Այդ փնտռուքը ուրիշ
բան չէ, բայց եթէ սեփական ուժերուդ
հանդէպ անվտաստութիւն մը : Նոյն այդ
հոգեբեկումն է, որ քեզ կը մղէ դար-
մանալու, թէ ես ի՞նչպէս կոթողուած կը
մնամ առանձին ու անխորտակ :

— Նաեւ ցանկութիւնս, — յարեց
Հայր :

= Ի՞նչ բանի :

— Ըլլալու քեզի՛ պէտ... :

= Ինծի պէ՞ս... :

— Այո՛ : Քեզի՛ նման առանձին : Քե-
զի՛ նման ուժեղ : Եւ քեզի՛ նման ինքնա-
վրտաստ :

= Եւ ինծի պէս լե՛ռ մը անշարժ :

— Ո՛չ... Իրբեւ մարդ մը անշուշտ :

= Որքա՛ն միամիտ ես, — հեզնեց
Մասիս, — եւ կ'ուզես ըլլալ ո՞ւր :

— Քեզի մե՛րձ, ըստ ստորո՞տդ իսկ :

= Պայծառ եւ կապոյտ երկնակաթա-
րը իմ ու քու վերեւ, ինչպէս նաեւ ա-

բեւը՝ փէշերուս վրայ եւ սոքերուդ ներ֊
քեւ, քեզի ներշնչեցին, էրեւի, խաղաղ
ու հանգստաւէտ կեանքի մը պտտմանը:

— Այո՛: Գեղատեսիլ է այստեղ: Ան֊
դո՛րք: Եւ խորապէ՛ս ապաւորիչ են վը֊
սեմ ու լուսապսակ կատարներդ:

= Իսկ դուն տեսած չես փոթորիկնե֊
րը, որոնք, սանձազերծ ու ահեղամը֊
ռունչ, կը փորձեն շղթայել զիս՝ հար֊
ուսեմերով լանջերոս: Տեսած չես մթին
ու ճնշող թուխպերը եւ տարափը անձ֊
րեւեմերուն: Տեսած չես շանթերը, որոնք
կը բեկբեկին կողերուս վրայ:

— Այտուհանդերձ կ'ըսես թէ կը մը֊
նաս անսասուն ու անխորտակ, — ընդ֊
միջեց Հայը:

= Որովհետեւ դիմապարուելու եւ տո֊
կալու վճռականութիւնս աւելի՛ ուժեղ է,
քան վայրագ ու անսանձ կերքը ասորե֊
րին: Իսկ դուն...

— Կուզեմ ըլլալ քեզի՛ պէս, —
կրկնեց Հայը, — քու շքեղանքդ եւ քու
անվճատ ու խիզախ դիմապարուելոջ ներ֊
շնչում մը թող ըլլան ինձի, երբ տա֊
րերքդ պան հարուածելու քեզ ու զիս: Ես
կը մնամ այստեղ: Քու՛ զէ՛մ եւ քեզի՛
մերձ: —

= Մնացի՛ր, եթէ կը կարծես թէ
կրնաս ըլլալ ո՛չ միայն ինձի հետ, այլեւ
ինձի պէս...: Հաստատէ՛ կայքդ ու փոր֊
ձէ՛, — պատասխանեց Մասիս՝ թերա֊
հաստ ու հեղնոտ:



Եւ Հայը իր կայքը հաստատեց Մա֊
սիսի ստորոտը:

Եինեց իր Հիւղը եւ մշակեց հողը:
Կատոյցներ բարձրացուց եւ ծաղկե֊
ցուց շրջապատը:

Եւ ամէն անգամ, երբ իր գլուխը կը֊
քցար կամ հոգին ընկճուեցաւ, նայեցաւ
Մասիսին: Եւ կրկին՝ դօտեպնդուեցաւ:
Բայց պայծառ ու կապոյտ երկնա֊
կամարը նաեւ մռայլացաւ:

Ամպեր կուտակուեցան իր վերեւ եւ
կապարեայ գորշը ծածկեց Մասիսը իր
տեսողութենէն:

Եւ արհաւիրքը շուշացաւ:

Մրրիկը ոռնաց իր շուրջ եւ շանթե֊
րը, աղամանդեայ սուրերու նման, կո֊
տրրտուեցան մէզով պարուրուած լան֊
ջերուն վրայ:

Բայց երբ փոթորիկը, արշաւող վո՛ս֊
մակի մը նման, անհետացաւ, հեղեղը
կոտեցաւ, մէջը անդալտացաւ եւ ասմա֊
զուն ու պայծառ երկնակամարին հուպ՝
կրկին՝ յայտնուեցաւ Մասիսը վիթխարի
ու վսեմ, ամրախարիսիս ու անսլլայլլ,
սպիտակ թաղը կատարներուն՝ որպէս
զահակալ, կրկին՝ պայծառացաւ նաեւ
Հայուն մթամած հոգին:

Եւ, վերապտնուած երջանկութենէն
արբոյս, — Քեզի նման, — աղաղակեց՝
հոգիին խորէն բխող հրճուանքով մը եւ
հայեացքը սեւեռած Մասիսի, — դուն
եւ ես կրկին զէ՛մ առ զէ՛մ ու առան֊
ձին...

= Փորձեցի՛ր, — լսուեցաւ ձայնը
Մասիսի, — եւ տեսար, թէ տարբեր
քանդեցին, ինչ որ կատուցեր էիր:

— Բայց եւ մնացի կանգո՛ւն, — գո֊
չեց Հայը՝ հպարտութեան շէշու մը ձայ֊
նին մէջ:

= Առանց նեցուկի ու պաշտպանի՛:
— Ու սնվճատ՝ նաեւ այն ատեն երբ
անտեսանիլի դարձար դուն:

= Ապաւինելով ինչի՞ն՝

— Կամքի՛ս, զոր կ'օթողած եմ մէջս՝
քու պատկերիդ նման:


= Ուրեմն ինձի մերձ եւ իմ զէ՛մ՝
որպէս լե՛ս մը մարդացած, — պատաս֊
խանեց Մասիս:

Եւ անոր ձայնը, որ որոտ մըն էր
ս՛հեղազո՛ւս՝ Հայը բնորոշող, երկա՛ր,
երկա՛ր արձագանգեց ձորերէ՛ ձոր ու
սարերէ՛ սար:

Նոյն պահուն, Հայը ընազդաբար
դարձաւ ետեւ եւ վերացա՛ւ, — Ատո֊
ուած իջեր էր ի դաշտ եւ կ'աղօթէր՝ ի՛ր
խկ կոթիւնը մտապատկերած:

Եւ Հայը եւս, ծնրադի՛ր ու բազկա֊
տարած, աղօթեց՝ իրեն ապաստան ընտ֊
րած հողը սրբափայլ մը նկատելով եւ ա֊
նոր վերեւ դրախտը մտապատկերելով...

Կ. Մ.



ՈՒՂԻ ԿԸ ՓՆՏՈՒՆՔ...

Գրական տաղանայի շրջաններուն՝ զննարտանքը կը սկսին ուղի եւ ուղղութիւն փնտռել, ճիշդ ինչպէս քաղաքական տաղանայի օրերուն՝ ժողովուրդները Մովսէս մը կը փնտռեն, որպէ՛սզի ճկարձիբ ծովքուն միւս կողմը անցընէ զիրենք:

Ուղի կամ ուղղութիւն փնտռելու այս ջանքը պարզապէս տաղանային դո՛ւրստութիւնը կը հաստատէ, որովհետեւ մարդիկ կը փնտռեն մ'չ թէ ինչ՝ որ ունին, այլ ինչ որ չունին: Միայն ճիմար կոյսերն են, որ կը փնտռեն իրենց ունեցածը, դայն անգամ մը կորսնցնելէ ետք:

Վերջին քառասնամեակին՝ մեր գրականութեան մէջ բան մը փոխուեցաւ թէ՛ ըստ ձեւի, թէ՛ ըստ էութեան: Մեր գրողները (խօսքը տաղանդաւոր գրողներու մասին է անշուշտ) իրենց խռովայն Հողիին բոլոր ակերը բացին՝ ոռպելու համար ցեղին Հողեկան անդատանը: Երեսուցիներ հկան եւ վերջամնաց ծերերուն հետ բարեխառնեցին կլիման: Երբեմն սայթաքեցան, բայց

կրկին ոտքի ելան: Յամենայն դէպս, պահաս չըրին իւրը Եռամեծ Սուրբին՝ Մեսրոպի ճմտքի ճրագարաննին մէջ, ինչպէս որ պիտի ըսէր Նարեկայ վանքին մեծաւոր աղօթասացը:

Գերագոյն երջանկութեան թէ յետին անձկութեան մէջ մխիթարութիւն մըն է արուեստը, եւ մեծ մխիթարիչ մըն է արուեստադէտը: Գիտութիւնն ու դիտունը կրնան մեծցնել, երբեմն նաեւ պղտիկցնել ազգերն ու ազգութիւնները, բայց միայն արուեստը եւ միայն արուեստագէտը կրնան հոգեպէս սփոփել եւ վերնային կեանքով ապրեցնել մեզ:

Եթէ միայն դիտուններ ըլլային աշխարհի մէջ, ուղեկորոյս մարդկութիւնը ո՞ւր պիտի երթար փնտռել Էրազ, սփոփանք, վերամբարձ յափշտակութիւն եւ զգայնութեան միւս ստորոգելիները:

Գիտութեան եւ գրականութեան զուգակշիռը ընել չէ իմ դիտումս: Ես ալ կ'ընդունիմ գիտութեան՝ ձեռք բերած գերակշռութիւնը գրականութեան վըրայ, ինչպէս ատիթով մը ըսած եզայ արդէն: Հիմա, այս թռուցիկ ակնարկով,

իմ դիտումսն է ջատագովութիւնը ընել արուեստին եւ գրականութեան: Կ'ուզեմ աւելցնել նաեւ, թէ «Վոստոկ»ը կամ «Ճնմինին» չի կրնար փոխարինել «Ենէական»ը կամ «Համլէթ»ը:

Բայց սկսած ենք խօսիլ, - գոնէ մը տածել, - գրական ուղիի եւ ուղղութեան մասին: Կ'ապրինք ուրեմն գրական տաղանայի շրջան մը կամ նոր միայն կը մտածենք այդ շրջանին մէջ, քանի որ կ'ըզգանք, թէ բան մը, կարեւոր բան մը կը պակսի մեզի:

Ոմանց կարծիքով՝ մեզի պակասածը բան մը չէ, այլ բաննք են:

Կան, որ պակասած այս բանին անունը դրած են զիկալար: «Ձուռեցանք», կ'ըսեն - մեր գրական ճիգը ղեկավարող, մտաւորական սերունդը առաջնորդող մարդիկ: Մեզի պէս՝ մեր գրականութիւնն ալ երբեք առատանեալ բան մը եղաւ:

Այս կարծիքը պաշտպանողները ապահովաբար տատաններ փնտռելու ետեւէ են: Եւ կամ կը փնտռեն մեկնակէտ մը, ուրկէ մեզ նաևը գնեն, եւ նաևաճանդէտ մը, ուր մեզ դիմաւորելու զան նաևազնացութեան գործակալները: Կ'ուզեն թերեւս, որ մեր ձևըքն բռնող եւ ճիւղը Այդիին մէջ մեզ պոստի տանող կարապետներ գտնուին:

Ղեկավար մը կամ ղեկավարներ փնտռող ուղեւորը կը հաստատէ պարզապէս, թէ իր հետեւելիք ճամբուն աշխարհագրութիւնը չէ սորված: Մեր անճարակութիւնը շխտատովանելու կերպ մըն է ասիկա, պատրաստ, գոց սորվելած արդարացում մը, թէ կորսնցուցած ենք նաևան կողմնացոյցը:

Ո՞վ ղեկավարեց Արովեանը: Ո՞վ առաջնորդեց Բաֆֆին: Ո՞վ բունց Պարոնեանի կամ Ջրաքեանի ձեռքէն՝ քաշել սորվեցնելու համար անոնց:

Թէքէեան, Օշական, Ջարենց, Համաստեղ եւ բազում ուրիշներ ուրկէ՞, որմէ՞ առին ինչ որ ունէին կամ ինչ որ չունէին: Իրենց մէջ թէ իրենցմէ զուրս փնտնեցին նաևաղիղը: Կը մոռնա՞նք ու-

րեմն թէ կ'անդիտանանք, որ վարպետները - եւ վարժից պետերն ալ - իրենց թերութիւնները միայն կը փոխանցեն մեզի, իսկ առաջնութիւնները հետերին կը տանին: Կարելի՞ բան է, որ շարուեստ քերթողականներ պատրաստենք կամ գրադիտութեան դասընթացք մը հաստատենք ո՞՞ մը ունենալ սորվեցնելու համար ճանճ կակազողներուն:

Բայց արուեստի մէջ ամէնուն մատչելի սահմանավայր մը չկայ, ինչպէս որ չկայ կարծեմ գրադիտութեան դասագիրք մը, որ մեզի զբիւ սորվեցնէ: Կը խոստովանիմ, որ ես ճիշդ երեք անգամ ծայրէ ծայր կարգացած եմ Միւրան Աքանապի «Գրադիտութիւն»ը, բայց նորէն մնացի նոյն անո՞՞ հետեւակը: Բան շարվեցայ: Ինչո՞ւ. որովհետեւ Աստուած - եւ միայն Աստուած - կը ստեղծէ արուեստագէտը եւ ստեղծելէ ետք՝ կաղապարը կը կտորէ: Նոյն կաղապարով երկու արուեստագէտներ գոյութիւն չունին աշխարհի մէջ: Թափայէլը Թափայէլ մնաց, Ենյապիլը Ենյապիլ մնաց, Պեթհոլինը Պեթհոլին մնաց: Իրենց զոյգը չունեցան երբեք, որովհետեւ քաշուած էին Աստուծոյ ճախարակէն:

Գրագէտը պէտք է ինք կարենայ ննարել իր ոճը, ապա թէ ոչ գոյութեան իրաւունք չունի: Ո՞վ մէկ ղեկավար կըրնայ մեզի տալ մեր չունեցածը կամ մեզմէ աննէլ մեր ունեցածը:

Արհեստը կարելի է սորվիլ եւ սորվեցնել, բայց արուեստը ո՞չ կարելի է սորվիլ, ո՞չ ալ կարելի է սորվեցնել: Զուր չէ, որ ըսուած է, թէ արուեստագէտը չի պատրաստուի, կը ծնի:

•

Կան, որ կ'ըսեն. «Մեզի կը պակսի ո՞չ միայն ղեկավարը, այլեւ գրական քննադատը»:

Ասոնց կարծիքով՝ Սփիւռքի մէջ մենք ո՞չ գրական քննադատ ունինք, ո՞չ ալ, հետեւաբար, գրական քննադատութիւն: Զունինք մանաւանդ Հայրենիքին մէջ, ուր քննադատութիւն ըսուած դիտու-

Թիւնը կամ արուեստը մասամբ բացատրելու ընկերացանութիւն է եւ մեծ մասամբ՝ ընկերաբանութիւն կամ մարքսիզմ: Դուրեանը կամ Տէրեանը ըմբռնելու եւ ըմբռնելի դարձնելու համար հերթով կը միջամտեն Մարքսը, Էնգելսը, Լենինը եւ դասական ու ոչ-դասական մարքսիստները: Այս երանելի մարդիկը ինչ դորձ ունին Դուրեանի «Տրոտսկիզմ»-ին կամ Տէրեանի «Հրաժեշտի դադելը»-ին հետ: Ասանկ բաներու իմ խելքս չի հասնիր:

Ոմանք մեծ, նոյնիսկ վճռական դեր կը վերադրեն քննադատին եւ քննադատութեան: Ես այդ կարծիքէն չեմ: Քըն-նադատին կոչումն է հաստատել կամ ժխտել տաղանդը դրողին մէջ: Կրնայ մատնանշել արժէքին ու արժանիքին ներկայութիւնը կամ բացակայութիւնը արուեստին ու արուեստագէտին մէջ, բայց չի կրնար արժէքներ ստեղծել, այսինքն՝ չեղած բան մը եղած դարձնել կամ եղած բան մը չեղած դարձնել: Քըն-նադատութիւնը Թերեւս ճատեղծագործութիւն մըն է ուրիշ ստեղծագործութեան մը մէջ, ինչպէս որ կ'ըսէր Օսքար Ուայլտ: Բայց անտաղանդը տաղանդաւոր չի կրնար դարձնել: Կը դատէ ու կը մեկնաբանէ ըստ իր հայեցողութեան կամ ըստ ընդունուած - բրբեմն նաեւ չընդունուած - կանոններու: Կը հաստատէ լաւը եւ յոռին, գեղեցիկը եւ ողբերգը: Կը վնասատէ կամ կը պարսաւէ: Լաւագոյն պարագային՝ միջնորոս եւ կլիմայ կ'ընտեղծէ: Եւ ա'յսքան: Պէ՛տք է ըսել, թէ ամէնէն շատ եւ ամէնէն աւելի սխալողները եղած են քննադատները իրենք:

Հեւլէն ժողովուրդը, Քրիստոսէ հինգ դար առաջ, սոսկեղար ստեղծեց, առանց մէկ հատիկ քննադատ ունենալու: Արուեստը կար, բայց արուեստի քննադատը չկար: Թերեւս միակ քննադատն էր այն անանուն կոչակարը, որ Ապեղէսի նկարին մէջ կօշիկի վերաբերեալ դիտողութիւն մը ըրաւ եւ . . . անմահացաւ: Մօտաւորապէս նոյնն է պարագան նաեւ մեզի համար: Հայ ժողովուրդը

նոյնպէս Ռսկեղար ստեղծեց, երբ դեռ ո'չ քննադատ կար մեր մէջ, ո'չ քննադատութիւն:

Իրողութիւնն այն է, որ նախ կը ծնին արուեստի գործերը եւ ապա միայն կը սկսի այդ գործերուն մեկնաբանութիւնը: Կրնայի աւելցնել նաեւ, որ առանց Քրիստոսի եւ իր վարդապետութեան՝ ո'չ «գործք առաքելոց» կրնար գոյութիւն ունենալ, ո'չ ալ նոր Կոստանայն:

Ո'չ մէկ ժողովուրդը կրնայ ծնունդ տալ մեկնաբաններու, երբ չկայ, ըստ ստեղծուած չէ մեկնաբանութեան առարկան: Արուեստն է, որ կը ստեղծէ արուեստի քննադատն է, որ կը ստեղծէ արուեստը:



Կան ուրիշներ, որ կ'ըսեն. «Հայրենի հող, հայրենի երկիր»։ Միակ ու մեծ բառով մը՝ Հայրենիք։ Առանց հայրենիքի՝ զրականութիւնը ապրելու եւ զարգանալու պայմաններ չունի»։

Հակասակ չեմ, բայց մեր փնտուկ ուղածը, ներկայ պարագային, հայրենիք մը չէ, այլ գրական ուղի մըն է, գըրական ուղղութիւն մըն է: Իսկ հայրենիքը ինք իրմով եւ ինք իր մէջ ո'չ ուղի է, ո'չ ուղղութիւն: Մնուցիչ մըն է, մեծ դայեակ մը, բայց ուղի չէ: Հայրենիքները իրենք ալ ուղի փնտուած են ու կը փնտուեն միշտ:

Գրականութիւնը եւս, ինչպէս գիտութիւնը, ինչպէս արուեստը, նոյնքան արտածելի է, որքան ներածելի: Առաւելութիւնը, անշուշտ, անոնց կողմն է, որոնք աւելի շատ կ'արտածեն, քան կը ներածեն: Միևուրբ եւ հայրենիքը թէ՛ կ'արտածեն, թէ՛ կը ներածեն: Բայց հայրենիքն է մթերապահը:

Հայրենիքէն դուրս ապրող գրագէտը ինչո՞ւ չէ - չի՛ կրնար խզել - իր կապերը ո'չ հայրենի հողին, ո'չ ալ այդ հողին վրայ ապրող ժողովուրդին հետ: Մենք բոլորս, նոյնիսկ անկտի մեր կամքէն, մեր մէջ կը կրենք հայրենիքը իբրեւ ե-

բազ եւ իրականութիւն: Չենք ուրանար, թէ հոգը իր մէջ ունի զօրութիւն մը, որ ուրիշ ոչ մէկ բանով կրնայ փոխարինուի: Բայց այս չի նշանակեր, որ տարբեր երկիր բնակող հայը անյուշալի տարր է իր երկրին ու ժողովուրդին համար: Հայրենի հողին վրայ ապրող հայը երբեմն աւելի օտար է, քան օտարութեան մէջ ապրող հայը: Ասիկա կրնայ փարաւտախ մը թուիլ, սակայն վերջապէս փարատախներն ալ ճշմարտութեան բաժին մը ունին իրենց մէջ: Չմտնանք, որ հայրենի ու հայադրող գրականութիւն մը չափուեցաւ բուն իսկ հայ ուղիարհէն դուրս, - Թիֆլիս, Պոլիս, Իզմիր, Վենետիկ: Հայր Ալիշան աւելի լաւ կը ճանչնար Հայաստանը, քան հայաստանցի հայը:

Շատ լաւ կ'ըլլար անշուշտ, որ մենք՝ գուրսի հայերս ալ ազդէինք ներսը, միախումբ, նոյն հողին վրայ, նոյն երկրներին տակ: Բայց նորէն, միախումբ չապրելով հանդերձ, կը շարունակենք արեան գիծով իսկ կապուած մնալ հայրենիքին: Չայն մեզի հետ կը պտրտցնենք եւ մեր մէջ կը կրենք առհասարակեամբ: Ոչ ոք կրնայ այս առհասարակեանը ջնջել մեր արիւնին մէջ, մեր ուզելովը կամ չուզելովը:

Փրանց Վերֆէլ հայկական գիւցադ-նամարտին մէկ դրուագը առաւ իր մեծարժէք գործին՝ «Մուսա լերան քառա-

սուն օրեր»ուն մէջ: Տուաւ ո'չ թէ իբրեւ հայ, այլ իբրեւ հրեայ: Ուիլիլմ Սարոյեան «Մարդկային կատակերգութիւն» մը գրեց ո'չ թէ իբրեւ ամերիկացի, այլ իբրեւ հայ: Երկուքին մէջ ալ կը խօսի ու կը հնչէ ցեղին ձայնը: Ամէն մարդ իր ցեղը կը կրէ իր մէջ. զայն օրօրոցէն կ'առնէ եւ հետը գերեզման կը տանի:

Ես կը հաւատամ, թէ ինչպէս ամէն բանի, նաեւ գրականութեան մէջ, - մա՛ն-նաւանդ գրականութեան մէջ, - նախապայմանը տաղանդն է: Կը հաւատամ նոյնպէս, թէ գրական տաղանդներէն մեզ կրնայ փրկել իր տաղանդին զօրութեամբը դարաւրջան բացող կամ գոցող մա՛րդը միայն: Ա՛ն, որ ոչ թէ ուղի կը փընտոնէ, այլ ուղի կը բանայ: Ոչ թէ ուղղութիւն կ'որոնէ, այլ ուղղութիւն կը գծէ:

Իրական տաղանդը ո'չ առաջնորդի պէտք ունի, ո'չ ղեկավարի, ո'չ քննադատի: Ան իր մէջ ունի արդէն թէ՛ այս, թէ՛ այն: Եւ չի սպասեր, նոյնիսկ թոյլ չի տար, որ ուրիշներ ղեկավարեն զինք կամ ճամբայ բանան իրեն համար, Ուղին ալ, ուղղութիւնն ալ հետը կը բերէ եւ ոչ թէ այլուք կ'որոնէ: Ո՛ւր տաղանդ կայ, հոն նաեւ ուղի կայ: Հոն նաեւ ուղղութիւն կայ:

Ուստի՝ մեր ուղին փնտոնե՞ք այն բացառիկ զօրութեան մէջ, որ կը կոչուի ՏԱՂԱՆԻ:

Բ. ԹԱՇԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(1945 - 1965)

Դ.

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Այս աշխարհամասի դրականության մէջ պէտք է փնտռել այն յատկութիւնները, որոնք կ'արժեւորեն զասական դրականութիւնը՝ հասարակչութիւն եւ իմացականութիւն:

Հարաւային ամերիկացի գրողը չի վերլուծեր, գիւտեր ընելու պէտքը չի գգար: Իրեն համար, գրել կը նշանակէ արտայայտել իրականութիւնը, պատաս մը փրցնել բնութենէն, հատուածներ փոխ առնել աւանդական դիւցազներգութիւններէն: Գրողը կը խօսի իր երկրին անունով, կ'ոգեկոչէ անոր կեանքը, պայքարները, առասպելները, յոյսերը: Ասոնցմով ան կը խորասուզուի արդէն մոզական աշխարհի մը մէջ. - «Այս անհուն տարածութիւններով ծածկուած երկրին մէջ, ուր կանաչութիւնը անշարժ պտղաբերութիւններ կ'ունենայ, ուր սարահարթները ծածկուած են մշուշով ու մետաղեայ լռութիւնով մը, ուր ծովափները կը քրքրան քմբուկի մը մաշկից պէս արեւի մատնահարումներուն տակ, գերբնականը կը գտնուի ամէն բանի մէջ: Իրականութիւնը կը վերցնէ թողբը, կը կազմալուծէ իր ներկայութիւնը մոզական հայելիներով... - կ'ըսէ Պուան Լիսթանսո:

Հարաւային Ամերիկայի երկրները իրենց քաղաքական անկախութիւնը ըսկըսան ստանալ ժԹ. դարուն սկիզբները, երբ տակաւին իրենց դրականութիւնը կը դանդաղէր հերոսական գրականութիւններու:

մու, մանաւանդ սպանիական եւ ֆրանսական գրականութիւններու անմէջական ազդեցութեան տակ:

Գոլումպիացի Պոզէ Ռիվէրա (1889-1928), առաջին հեղինակն է, որ փորձեց թափանցել գինք չըջապատող՝ իրականութեան: Լա Վարսոնի մէջ, ան նկարագրեց ամենի պայքարը Սիբիլիկոններուն, ձգախօսի մարդոց, ընդդէմ կոյս ու անգութ անտառին: Այսպիսով, ան մէջոնց դրաւ նոր աշխարհին գրականութեան յատուկ մեծազոյն թեման. մարտահրաւէրը՝ որ կը կարդայ մարդը ամենի եւ յաղթական բնութեան դէմ: Լա Վարսոնի մէջ կարելի է գտնել տակաւին վիզապաշտական եւ յուզական հետքեր, քայքայեալ անթիւ էջեր, ուր հեղինակը կը վերստեղծէ անգերագանցելիօրէն արեւադարձային անտառներուն կախարհող եւ սպաննող զեղեցկութիւնը եւ սարսափը:

- Մահամերձն իսկ կը փախափի համարելի այն հողը, որուն մէջ պիտի փտի մարմինը: - Ամայութիւն է, քայքայ ոչ ոք ինքզինքը ատնածին կը զգայ. արեւը, հովը, փոքարիկը մեր եզրայրներն են: չեմք վախճար անցնումէ, չեմք անըծելը գամնոք:

Նոր դիւցազներգութիւններու ծրնունը պիտի տար Ռիվէրայի մեծատեսիլ վէպը: Ուրիշ հեղինակներ երգեցին իրենց երկիրներուն ուրոյն դիմադրութիւնը: Ասոնց մէջ ամէնէն տաղանդաւորը պիտի

գառնար Վենեդուկեացի Ռաճալօ Կալէ-
կոս:

Կալէկոս ծնած է Քարաքառ, 1884-
ին: Ան եղած է ուսուցիչ, քաղաքական
դէմք եւ գրող: Գրած է երկվեցեակ մը
վէպեր եւ պատմութեան հաւաքածոներ:
- Իմ գիրքերուն գարծունգութեամբ վայ-
րը արեւադարձային աշխարհն է իր սար-
սազագեցիկ լուսփեամբ եւ իր սրբորգա-
կան առանձնութեամբ, ուր մարդ կը
զգայ, թէ տակաւին ստեղծագործութեան
վեցերորդ օրը չէ աւարտած, որովհետեւ
ստեղծող շունչը տակաւին կը սաւառնի
եռն: Այս անտաշ բնութեան գիրքը կը
պայքարին քաղաքակրթութիւնը եւ բար-
բարութիւնը - ասանդապաշտութիւնը
եւ յառաջդիմութիւնը, ներկան եւ անց-
եալը, եւրոպական գաղափարները եւ
քննիչներուն աստիճանները: Ռեվիւզիայի
ճերտները աւելի նախնական եւ աւելի
ճակատագրապաշտ՝ կը պարտուէին այս
պարքարին մէջ, մինչ Կալէկոսի հերոս-
ները, աւելի գիտակից եւ աւելի լաւ
պատրաստուած իրենց առաջելութեան,
կը յաղթանակեն:

Կալէկոսի ամէնէն ժողովրդական
վէպը կը կոչուի Տոնիա Պարպարա: Կը
պատմէ կեանքը երիտասարդ իրաւարան
Սանթոս Լուչարտոյի, որ վկայականին
տիրանայէ ետք, կ'որոշէ վերադառնալ
իր պապենական կալուածներուն: Ինք
շառուիղն է հողատէր հարուստ ընտա-
նիքի մը, որուն անդամները գրեթէ ան-
հողացած են եղբայրասպան կոտորու-
պատճառաւ: Երբ Սանթոս տէր կը դառ-
նայ իր հողերուն, կը նկատէ, որ կալ-
ւածը կոտորակուած է, եւ իրեն մնա-
ցած է միայն պղտիկ բաժին մը: Վերա-
կացունքը իւրացուցած են կալուածին
մեծ մասը եւ կաշառք ստացած են Տոնիա
Պարպարայէն, որ Լուչարտոներուն ու-
խերիմ հակաակորդուհին է: Տոնիա
պարպարա տարօրինակ կին մըն է՝ կէս
կախարդ, կէս ամազոն, հմայիչ եւ վը-
տանպաւոր: Ան հոմանուհին կը դառնայ
իր հակաակորդներուն, կը կախարդէ
ու կը հրածէ զանոնք, մինչեւ որ տիրա-

նայ անոնց կալուածներուն: Այս կինը
կը խորհրդանշէ վենեդուկեական բնու-
թիւնը, բիրտ, նեղ ու լպիրլ, որուն
հետ շփում ունեցող մարդը, տարուած
իր բնազդներէն, կամաց կամաց կը դառ-
նայ տեսակ մը մարդկային խրտուիտի:
Տոնիա Պարպարա ունեցած է իր տկա-
րութեան պահը: Սանթոսի հօրեղբոր որ-
դիէն ունեցած է աղջիկ գաւակ մը՝ Մա-
րիդէլան, բայց մերժած է զայն տեսնել
ծնած օրէն իսկ, եւ արդէն լքած է ամու-
սինը, Մարիդէլայի հայրը: Անխուսա-
փելի պայքարը կը ծնի Տոնիա Պարպա-
րայի եւ Սանթոսի միջեւ: Այս անպամ
կինը կը պարտուի, եւ Մարիդէլան
յանձնելով Սանթոսին՝ կ'անհետանայ ան-
տառներուն մէջ, մինչ պօս օձ մը, հոր-
թի մը փաթեթուած զայն կը տանի գէպի
պղտոր ճախճախուտները:

Պարհուրներով լեցուն գործ մըն է
այս վէպը: Կը պատկերացնէ քաղաքա-
կրթութեան յաղթանակը, որուն ներկա-
յացուցիչն է Սանթոս, բարբարոսութեան
վրայ, որուն խորհրդանշին է Տոնիա
Պարպարա: Դժուարին յաղթանակ սա-
կայն, որուն համար մարդը պէտք է զըս-
պէ իր մէջ քնացող անասնական կիրքե-
րը:

Անարդար պիտի ըլլար ըսել, որ նոր
սերունդը շառուիղն է այս երկու գրող-
ներուն, որովհետեւ տարբեր է նորերուն
մտեցումը, գրելու ձեւը, լեզուն, բայց
նոյնը կը մնայ թեման, պայքար՝ մար-
դուն եւ բնութեան միջեւ:

Ուրուկուէյցի Էմիլիոս Ամարիմ,
կ'երգէ վամպիրներու կեանքը: Իր Սայ-
լալը վէպին մէջ կը նկարագրէ արկած-
ները խումբ մը պոռնիկներու, որոնք
բնակութիւն հաստատած են սայլակնե-
րուն մէջ, եւ կը շրջին գիւղէ գիւղ, ի-
րենց արհեստը գործադրելու համար:
Այս վէպին միջնորոտը անջնջի է՝ ու-
ճիւր, լպիրլութիւն, թշուառութիւն:

Արժանիքիցի Ալֆրէտօ Վարէլա, իր
Մուք գետը վէպին մէջ կը պատմէ եր-
պա մաթէ, (տեսակ մը թէյ), քաղաքե-
րուն դժոխային կեանքը: Կոյս անտառ-

նեբու բացատնեբուն մէջ կը գտնուի այդ բոյսին բնականայրը: Մարդ էակին համար կեանքը անտանելի է հոն, հետու քաղաքներէ եւ օրէնքի պաշտպանութենէ: Այդ բացատնեբուն մէջ կ'ապրին ու կը պործեն քսաներորդ դարու ճորտերը, սարուկները: Ինչպէ՛ս կարելի է հանդուրժել այս կացութիւնը քաղաքակրթուած երկրի մը մէջ: Այդ դործը դարձնող աւատապետները կը քաշեն օրէնքի ճամբով: Զեռքի տակ ունին ճարպիկ ու անգուժ վերակացուներ, որոնք կը լքեն աղքատ գիւղերը եւ թաղամասերը, եւ դրամ փոխ կու տան անդործ մարդոց, որոնք կը խոտտանան դրամը վերադարձնել, երբ սկսին աշխատիլ: — Բայց մենք ձեզի աշխատանք կրնանք տալ, կ'ընեն մարդու որսորդները, եւ խեղճ գիւղացիներն ու զործաւորները կը փոխադրեն անտանեբուն հեռաւոր անկիւնները, ու կ'արգելափակեն ջամբարներու մէջ: Ամէն կողմ գինեալ պահակներ: Կը սկսին աշխատիլ թիսպարաներու պէս. կը շահին շնչին զուժար մը, որ հասկը կը բաւէ իրենց ուտելիքին, զոր կը դնեն ջամբարի քանթիներն սուղ գինեբով: Անկարող են այս պայմաններուն մէջ վճարելու իրենց փոխ տրուած դրամը: Դատապարտուած են աշխատելու մինչեւ իրենց մահը, եւ մնալ միշտ պարտական: Երբ յուսահատութեան մէկ վայրկեանին ճորտը կը բռնէ փախուստի ճամբան, արգէն մեռած մարդ է, կամ կ'իյնայ պահակի մը դնդակէն, կամ զոհը կ'ըլլայ կոյս անտառի անանցանելի պարիսպին: Մութ գիտը՛ի հերոսը, ճորտ Թամոն Սորէյրան, փոխանակ տեղի տալու յուսահատութեան, կամ պայքար մղելու առանձին, ինչպէ՛ս Սանթոս Լուզարտոն, կը փնտռէ լուծում մը՝ իրականացնելու համայնական ազատագրումը, կազմակերպելով աշխատաւորական զորաւոր ընկերութիւններ:

Փարակուէն ունեցած է իր երգերը յանձնին Ռօա Պաթուի, ծնած՝ 1918-ին: Գրած է Ռքստում տեղեկանքում մէջ պատմուածքներու հաւաքածոն, ուր կը վե-

րագրեցնէ իր երկրին նախնական աշխարհը, անոր մասհոգիէ կախարհաւքը, իր ժողովուրդին կեանքը: — «Կիրքերու երկիր, ար կ'ապրին կարծրասիրտ մարդիկ, որոնք կարծես ծնունդ առած են քոյսերէն»:

Կայ նաև երկրորդ թեմա մը՝ Բարիւրը:

Վենեզուէլացի Միկէլ Օթէլո Սելլա, իր լուսագոյն դործին մէջ՝ Մեքսիկա տուներ, կը գարգացնէ այս նոր թեման: Օրթիկ դիւղաքաղաք մըն է, հարուստ դաշտավայրի մը կեդրոնը, պարտէզներով շքեղատուած: Սակայն քաղաքական կռիւներու պատճառաւ կը սկսի գիւղաքաղաքին անկումը: Բնակիչները կը պակսին, տուները կը վերածուին ակերակներու, պարտէզները կը լքուին, հիւանդութիւն եւ ծանձրոյթ կը տիրէ ամէն կողմ: Սակայն խումբ մը քաջ մարդիկ կառչած կը մնան իրենց սեփականութեան: Սակայն ոչ մէկ յոյս փայլուն ապագայի մը: Ազգայն հիւանդութիւնն է, ճահճատենդը, մահը եւ գերեզմանատան խոտը: Օր մը, սակայն, Օրթիկի բնակիչները ներկայ կ'ըլլան տարօրինակ տեսարանի մը: Երկրին ամէն կողմերէն՝ քաղաքներէն, գիւղերէն եւ անտաներէն հաւաքուած՝ մարդերու եւ կառքերու տարօրինակ կարաւաններ, որոնք կ'անցնին գիւղաքաղաքէն, եւ կ'ուղղուին գէպի արեւելք, դէպի քարելը — «Կիմաստու արիւնը, որ կը ժայթքէր հողէն»... Եւ կ'երթան հիմնել նոր քաղաքներ, հարուստ քաղաքներ, Վենեզուէլայի ապագայ քաղաքները: Եւ Օրթիկի բնակիչները կը լլքեն իրենց պարտէզները, գերեզմանները, եկեղեցին՝ միանալու համար տարօրինակ եւ կենսայորդ կարաւանին:

Սան Տոմէնկցի Խուան Պօշ էր գործերուն մէջ՝ Թագաւորական նամակարանը, Մնուեղի հեքիաթներ, Կուարայի աղջիկը, կը նկարագրէ իր երկրի ժողովուրդին պայքարը, իրականացնելու համար իր երազը:

Փայլօ Ներուստ էր Ռեդիանրակամ երգով կու տար Ամերիկայի մեծագոյն

դիւցաղներգութիւնը: Բայց Քուպացի, Ալէխօ Քարփանթիէր իր Ձաւրբաւ քաժանումը դործով կու տար լատին Ամերիկայի արդի Ողիսականը: Գրքին հերոսը մեծցած եւ ուսում առած է Միացեալ Նահանգներու մէջ: Իրեն պաշտօն կը արուի կադմակերպիլ արշաւանք մը, ուսումնասիրելու համար Օրէնք գետը: Թուժ մը բնկերներով, յոյն ոսկի փնտրուող մը, միսիոնար մը, հնդկուհի մը, կը սկսի արշաւանքը: Նուաբկէլ դէպի դեռտին ահը, կը նշանակէ նաւարկել ներկայէն դէպի հեռուոր անցեալը, դէպի ըստզոնադրծութիւնը: Արու շրջանի հողերուն վրայ կը հանդիպի նուաճող մարդուն, ամուր կառած իր զրիստոնէական հաւատքին: Ծան շրջանի հողերուն վրայ կը հանդիպի վայրի մարդուն, որ կ'ապրի որսալով: Ծախճախուտներու մէջ բոյսերը կը փոխն, սողունները կը շատնան, բայց անպին կայ կոյս բնութիւնը, ուր կ'ապրի մարդը շնորհիւ կախարդանքներու եւ թալիսմաններու, ուր կ'ապրի հընդիկը մըջիւններ որսալով: Աւելի անդին կը հասնի քարէ դարու մարդուն: Հոն կախարդները կը պատմեն Նոյ Նահապետի եւ Պրոմէթէոսի արարքները: Այստեղ հերոսը կրնայ հաստատուիլ, հիմնել քաղաք մը: Եւ առինքնուած այս բնական կեանքէն, կը վերադանէ ուրախութիւնը սիրելու եւ ստեղծագործելու: Բայց պէտք է բաժնուիլ այս եղեմէն, վերադառնալ Նիւ Եորքի ետուն կեանքին, քաղաքակրթութեան եւ անոր կապանքներուն, բայց կարօթը պիտի թունաւորէ իր յիշատակները: Գետը մահացուօրէն վերադարձ է անոր սիրտը:

ՏԻՔՍԱԹՈՐՆԵՐՈՒ ԷՆՏ

Լատին Ամերիկայի երկիրները կը կառավարուէին աիքթաթորներով: Եւրոպացիներուն համար հարաւային Ամերիկայի աիքթաթորը, որ կը ներկայացուէր թատրոններու բեմերուն վրայ՝ բարի, միամտա եւ անխելք անձ մըն էր: Սա-

կայն իրականութիւնը շատ տարբեր էր, որովհետեւ ոչ ոք տեղեակ էր էսթրատա Քապրէրայի մը, Տոքթոր Ծրանսիայի մը եւ Թուան Վիսէնթէ կոմէշի մը կատարած վայրագութիւններուն:

Հասկնալի է, որ այս թեման նիւթ հայթայթած ըլլայ մեծագոյն վիպասաններու: Ալէխօ Քարփանթիէր, Այս աշխարհի քաղաքաւարութիւնը վէպին մէջ կը պատմէ իրական կեանքը, սեւամորթ Հոնրի Քրիսթոֆի, որ խոհարարացու էր Սէն Տոմէնկի մէջ, Ըմբոստանալով Փրանսացի կառավարիչին դէմ, ինքզինք թաղաւոր հռչակեց, իր անունով դրամ տպեց, եւ իր բերդին շուրջ շինել տուաւ դղեակ մը՝ Վէրսայի նմանող: Սակայն, իսկական բռնակալ մը ըլլալով, ատելի դարձաւ իր ժողովուրդի աչքին: Գիշեր մը, իր հպատակները ոտքի ելան, պաշարեցին դղեակը եւ հալածեցին իրենց նախկին հերոսը: Քրիսթոֆ առանձին մընալով, անձնապահ եղաւ իր դղեակի բոցերուն մէջ: Ալէխօ իր պատմութիւնը կը խառնէ աւանդութիւններ, առասպելներ, ատուածներ, ծնած՝ սեւերու երեւակայութեան մէջ: Իր հերոսը հրէշ մըն է, բայց շէյքսպիրեան հրէշ մը, տեսակ մը դերասան իրական առամայի մը մէջ:

Միքէլ Աթուրբաս, իր Պարսի Նախագահ վէպին մէջ, մանրամասնօրէն կը պատմէ առօրեայ կեանքը աիքթաթոր էսթրատա Քապրէրայի: Գործին վրայ կը տիրէ սարսափի եւ մղձաւանջի մթնոլորտ մը: Թշուառութիւն փողոցներու մէջ, տանջանք, ստեւանդում, եւ սրտերու մէջ անհուն ատելութիւն:

ՎԱՐՄՐԱՄՈՐԹ ՀՆԻԿՆԵՐՈՒ ԹԵՄԱՆ

Իր մահէն քանի մը օր առաջ, Թուան Մոնթալվօ հետեւեալը կը գրէր Էլ Էսփիէթաւոր թերթին մէջ.— Եթէ գրիչս լացնելու կարողութիւնը ունեմար, պիտի գրէի գիրք մը Հնիհիվ վերնագրով, եւ պիտի լացնէի ամբողջ մարդկութիւնը:.. Ալսիտէս Արկուէնտա, երեսուն տարի

վերջ, պիտի իրականացնէր իր նախորդին փափաքը, հրատարակելով իր Պղինձէ ցեղը անուն վկայը, եւ ամբողջ Ամերիկայի ուշադրութիւնը պիտի կեդրոնացնէր իր վրայ:

Ըսել չէ որ Հնդիկը ամբողջովին բացակայ էր Հարաւ Ամերիկեան գրականութենէն: Քրոնովորոնքն սկսեալ մինչեւ ժ.թ. դարուն վերջերը, միշտ ալ Հնդիկը կարեւոր տեղ բռնած է վկայութեամբ կամ ուսումնասիրութիւններու մէջ: Բայց միշտ կը ներկայանար իբրեւ բացասական տիպար մը, վայրենի, զինեմոլ, արիւնհարու, մէկ խօսքով տեսակ մը վնասակար անասուն, արժանի միայն մեռնելու:

Պղինձէ ցեղը վկայով, Արկուէտաս, Հնդիկին կու տայ բուն իսկ իր դիմագիծը: Մարդ մը՝ որ ունի իր յատկութիւնները, իր կիրքերը, մարդ մը՝ որ ստորնացած է, եւ իր տէրերուն դէմ կը տածէ միայն արհամարհանք: Առաջին անգամ ըլլալով, այս զիբրքին մէջ, Հնդիկը կը կատարէ չլիսաւոր դերը, իսկական հերոսն է վկային:

Ուրիշ վկայասաններ Հետեւեցան Արկուէտասի օրինակին: Սիբո Ալէկիէա, իր գործերուն մէջ կ'ապրեցնէ Հնդիկ համայնքները, որոնք հաստատուած են Մարանիոն գետի ափերուն, իր Ոսկի օձը, Անված շուները եւ Ընդարձակ Ե Աշխարհը վկայերուն մէջ:

Իճագա ժարս, իր Հնդիկներու փոսք, գործին մէջ կ'ըմբոստանայ Հնդիկ աշխատաւորին սարկական վիճակին դէմ, իսկական ստրուկ, զոր կարելի է մահուամբ պատժել, առանց որ երկրին օրէնքները միջամտեն զինքը պաշտպանելու համար:

Կամաց կամաց այս թեման կը ծառայէ իբր զէնք ընկերային եւ քաղաքական տիրող ուժերուն դէմ: Միկէլ Աթուրիաս իր գործին մէջ կ'ուսումնասիրէ Հնդիկին հողերանութիւնը: Հնդիկը, կ'ըսէ, բարի, երազուն եւ աշխատասէր անձ մըն է՝ ունի ընտանեկան զօրաւոր զգացում եւ կ'ապրի ինքնիւր մէջ: Մեծ

հողատէրերը զայն բաժնեցին իր միջավայրէն, իր եգիպտացորհի դաշտերէն, եւ զայն վերածեցին ծփացող սրճատի մը: Հնդիկին համար պայքարը բնութեան դէմ չէ, այլ ճերմակին դէմ, ընկերութեան դէմ, այն յոյսով որ թերեւս օր մը անկէ պիտի ստանայ իր արժանապատուութիւնը:

Հարաւային Ամերիկայի գրողներուն գործերը, ընդհանրապէս վկայութիւններ են, ազդելու համար իրենց միջավայրին վրայ: Սակայն, կան հեղինակներ, որոնք առանց անտեսելու իրենց ցամաքամասին ինդիւիզները, կը ջանան ընդլայնել իրենց հայեցակէտը, եւ չըլլալ միայն վկայներ: Իւրացուցած ըլլալով տեղական եւ եւրոպական մշակոյթները, կը ջանան համարել այս երկուքը՝ տալու համար միջազգային, մտաւորական եւ նրբանշակ գործեր: Յիշե՛ք. Չիլիցի բանաստեղծուհի Կապրիէլա Միսթրալը (նուպէլեան ժրջանակաւոր 1935ին), եւ բանաստեղծուհի ժորժ Անորատէ Էբուաթորցին եւ Էուժէնիօ Ֆլորիթ Էուպացին: Վիպասաններուն մէջ. Փերուցի Վէնթուրա Կարսիա Գալտիբոնը, ժորժ Լուիս Արժանութիցի, եւ Մարիանօ Փրեզոն Սլաս Վենզուէլացին:

ՊՐԱՁԻԼԻԱ

Գրական առաջին յեղափոխութիւնը տեղի ունեցաւ այս երկրին մէջ 1914-էն ետք: Արդիականութիւնը սկսաւ տիրել բանաստեղծութեան մէջ, Հարաւային չըջանները. իսկ գաւառականութիւնը՝ վկային մէջ, հիւսիսային չըջանները: Սակայն, այս երկու դպրոցներն ալ, որոնք կը ջանային պոնել իրենց երկրին իսկութիւնը, կը բաւականային տալ անոր նըկարչազեղ եւ տարօրինակ երեւոյթները: 1939-ի մօտերը, Շմիթ կը գրէ՝ Այլեւս չեմ ուզեր գրադիլ Պրազիլիայով, չեմ ուզեր ամար ուշադրաւորութիւնը, անարկարչութիւնը:

Այդ չըջանին կը սկսին նոր շարժում-

ներ: Ժամանակն է այլևս վերաշինութեան, Գրականութիւնը կը յառաջդիմէ, կը զբողի ընկերային եւ ճարտարարուեստական զարգացումով: Երկրաշափներու եւ ճարտարագէտներու գրականութիւն մըն է: Բանաստեղծութեան մէջ մուտք կը գործեն տարօրինակ պատկերներու համադրութիւնը, հիմարը, հնդիկ կամ սեւամորթ քնարերգութիւնը, որ կամաց կամաց տեղի կու տան թեքնիք փնտրատուներու, ձեւի ճաշակին, հաւասարակշռութեան:

Վիլիսիուս Տէ Մորաէս, իր Օրփէո Նէկրօ վէպին մէջ կը համագրէ այս երկու ուղղութիւնները: Լէտօ Իվէ ունի պատկերներու եւ կէտայթի մեծ գիտակցութիւն, սենի լայն շունչ:

Երիտասարդ վիպասանները եւ բանաստեղծները խմբուած են երկու պարբերականներու շուրջ. Օրփէո որ լոյս կը տեսնէ Ռիօ Տէ Ժանէյրօյի մէջ, եւ Քյուպի Տէ Փոնէզիա, Սան-Բաւլօ: Հոս ալ թեմաները երկու տեսակ են. քարերու անպատը, իր մացառներով, եւ քարէ աշտարակները, որոնք մեծ ոտաններն են իրենց ծուխներով եւ թշուառութիւններով:

Սերունդներու հակամարտութիւնը երեւան կու գայ թեմաներու տարբերութեան մէջ եւ մանաւանդ գործածուած զբական սեռին մէջ: Հիները աւելի վէպեր կը գրէին. նորերը կը գրեն աւելի նորավէպեր եւ պատմուածքներ:

Վէպը սակայն կ'ըստենակէ իր ընթացքը: Այլեւս չի զբողի գաւառական

նիւթերով, այլ քաղաքներով, ինչպէս ըրած էր Պրազիլիոյ մեծագոյն վիպասանը՝ Մաշասօ տէ Ասիս, որ ապրած է ԺԹ. դարուն սկիզբները, երբ կը ծնէին մեծ քաղաքները: Ասոնք հոգեբանական վէպեր են: Նոյնը կը պատահի հիմա, երբ քաղաքները կ'ըլլան հսկայ ոտաններ: Այլեւս մարդիկ չեն ուտամասերէր իր իրենց պատկանած զասակարգերու տուեալներով, այլ իբր մարդկային էակ, որոնց հոգիներուն մէջ տեղի կ'ունենան պայքարներ, առամաներ, ուր հրեշտակը եւ սատանան կը մենամարտին: Արտաքին աշխարհը կ'անտեսուի եւ կը խորացուի ներքին աշխարհը:

Ժամս կիմարաւս Ռօսա ամէնէն արժէքաւոր գրողն է ներկայ սերունդին: Ունի տարօրինակ ոճ մը եւ հարուստ բանասիրութիւն: Ինք իր գործերուն մէջ կը խտացնէ երկու թեմաները, որովհետեւ Պրազիլիան միայն ճարտարագետներու երկիրը չէ, հսկայ քաղաքներու երկիրը չէ, այլ նաեւ անտառներու եւ խաչնարածներու երկիր: Հին սերունդին պէս չի նկարագրեր քարքարուտ անպատը՝ այլ զայն կը վերստեղծէ ներքին մենախօսութեան մը կախարչանքներով, ճարտարակաւի մը բծախնդրութեամբ:

Պրազիլիական իսկական թատրոնը ծնունդ կ'առնէ 1945-ին, ո՛չ թէ պաշտօնական սրահներուն մէջ, այլ թատերասէրներու խմբաւորումներուն, կամ նոյն իսկ ուսանողական թատերախումբերուն շնորհիւ:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐՈՒՏԵԱՆ

(Շար.)

ԵՂ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

**ՕՍՄԱՆՑԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՆՋԸ
Ե Ի
ԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ (*)**

Ա.

Այսպէս, ուրեմն, Իթթիհատի օսմանցիական ղեկավարները, ոչ թուրք յեղափոխական տարրերու գործակցութեամբ եւ իրենց յինաբան ունենալով սուլթանական գահին սպառնացող Բուճէիի բանակ, տէր դարձան սահմանադրական կառավարութեան: Ու թէեւ, սուլթին տարին լլրացած, Սուլթան Համիտ Հրապարակ թափեց շէրիաքնիներու ամբողջ, վերստին տէր դառնալու համար իր միահեծան իշխանութեան, սակայն շնորհիւ Բուճէիի բանակին գործնական միջամտութեան, յետաջրջական շարժումը չուտով զսպունեցաւ եւ այս անգամ Համիտ Բ. գահընկէց ըլլալով աքսորուեցաւ Սեյանիկ (*): Իսկ մենք տեսնե՞ք արդէն որ այդ օրերէն սարգին, չուրջ տասը տարի, Իթթիհատը իր ձեռքը պահեց (զրբթէ անընդհատ) երկրի քաղաքական ղեկը՝ իբրեւ մէտքաւար (կնքապահ, կնքակիր) ունենալով անհատ

տականութենէ բոլորովին թափուր սուլթան մը, որ պատրաստ էր կնքելու իրեն ներկայացուած ամէն որոշմանդիր՝ ալ չորէն շոշորթցած իր գլուխով անհաղորդ մնալով պալատէն դուրս տեղի ունեցող պետական կեանքի բոլոր իրադարձութիւններուն:

Արդ՝ Իթթիհատը, երկրի պետական ղեկը ձեռք առելէ ետք, քիչ մը շուտ սկսաւ իր զինուորական վերաբերումը փոխելու երկրի ոչթուրք տարրերուն հանդէպ: Շատ շուտ սկսաւ զանգատել թէ այդ տարրերը պատրաստակամութիւն չէին յայտնել օսմանցիութեան յարելու: Իսկ Իթթիհատի զաւանական ատալապարութիւնը նշող սա եզրը — օսմանցիութիւն — սրբան ալ տժգոյն ու անորոշ թուի, երկրի բաղադրիչ տարրերուն համաձուլումը կ'ենթադրէր հարկաւ: Եւ այդ համաձուլումը տեղի պիտի չունենար, անշուշտ, Հայուն կամ Արաբին տիպարով, թէեւ Իթթիհատի ղեկավարները անտեղի խոհեմութեամբ մը տանէ մը

(*) Ամենք որ հետաքրքիր են տեղի մանրամասն ծագումը իմենք ունենալու օսմանցիականութեան եւ թուրքականութեան մասին, քող դիմեն Զարեանի շՄ. Ա. Թուրանիային: Մենք հաս այդ գրքին հիմնական փաստերն ու ծանօթութիւնները միայն կ'օգտագործենք՝ Յոյց տալու համար քուրճ ազգային — քաղաքական մը — տածադրեան հարկաւորը եւ ատով իսկ քացատրելու համար մեր կրած երկուամ տղերը եւ մեր ներկայ հայրենիքին սպանացող վազուան վտանգը:

(**) Յոյց տալու համար Իթթիհատի ղեկավարներուն մարդկային նկարագիրը — քուրքի

նկարագիր անշուշտ — յիշեմք որ յետաջրջական շարժման առաջին օրերուն, երբ իրենց կեանքը ստալ վտանգի ենթակայ էր, ամենք ապաստան փնտնեցին հայ քաղաքական ղեկավարներին, քունք ապահով բախտոցներու մէջ պահեցին զամենք միմեծի Բուճէիի բանակին երեսունք ու տահմադրական կառավարութեան վերաբաւտաւորը: Հայ ղեկավարներուն այս ազատապնդան գլուխը պիտի աւելին քուրքի անայայլ իրզմնտանով:

լուռ էին այդ կէտին վրայ: Օսմանցիացում պարզապէս կը նշանակէր քրէացում, ինչպէս արդէն ցոյց կու տար Իթթիհատի գործնական վերաբերումը եւ ինչպէս շատ չանցած պիտի պարզուէր նաեւ ղեկավարներու հրապարակային արտայայտութիւններով: Իթթիհատը հետամուտ էր Թուրքիայի քրքանցիւնը ամեն գնով: Այլապէս օրուան ղեկավարները այնքան ալ միամիտ չէին սպասելու համար որ սուլթանական Թուրքիոյ դարւոր բռնակալութեան տակ խոչտանգուած ոչթուրք տարրերը յանկարծական հոգեփոխութեամբ մը յարէին Իթթիհատի օսմանեան Թուրքիային՝ իբրեւ իրենց հարազատ հայրենիքին: Ի՞նչ ըրած էին այդպիսի սպասում մը արդարացնելու համար: Իթթիհատի սահմանադրական կեզծիքով ի՞նչ փոխուած էր միապետական Թուրքիոյ վարչական եւ ընկերային կեանքի պայմաններէն: Թէ ինչ էին այդ պայմանները եւ փաստօրէն ինչ փոխուած էր անոնցմէ՝ Թուրք մտաւորականը թող վկայէ:

Եւրոպայի եւ Արեւելքի ժողովուրդներուն անձնապէս ծանօթ Թուրք մտաւորական մը, Թիւճճարղատէ Իպրահիմ Ղիւրի, Ա. Համաշխարհային պատերազմի նախօրեակին հրատարակած է «Անփոփոխութիւն» (Եւրոպականացում) անուն գիրք մը, որ սրացաւ այլ դաժան իրատեսութեամբ մը կը ներկայացնէ Թուրք ժողովուրդի ընկերային - պետական կեանքին դանազան երեսները՝ տարածուելով անշուշտ մինչեւ դրքին հրատարակութեան թուականը, այսինքն երբ Իթթիհատը 6-7 տարիներէ ի վեր իշխանութեան տէր էր արդէն: Այս գիրքը՝ ծայրէ ծայր անողոք պարսաւազէր մըն է Թուրքիոյ հասցէին, եթէ անկէ զեղչնը տեղ-տեղ ցանուած ներքողական տողերը Թուրքիոյ աշխարհակալական շրջանի պետական մարդոց մասին՝ իբրեւ իմաստուն եւ արդար ղեկավարներու (սուլթաններ, վէզիրներ), մանաւանդ որ այդ ժլատ տողերը կը թուին ներսածական տուրքը ըլլալ հեղինակի յետապայ մեղադրանքներուն, Հարկ է քանի

մը սեղմուած մէջբերումներով (*) զէթ մտածք ծանօթանալ մեր մտաւորականութեան ընդհանրապէս անծանօթ մտացած այս գրքին բովանդակութեանը, որուն վրայ թուրքին հասցէին աւելցնելիք նոր պարտաւանք մը հաղիւ թէ ունեցած ըլլայ... հայ մարդը:

Ըստ հեղինակի ախտանշումին՝ Թուրքիոյ գլխուն կեած ըստր աղէտներուն հիմնական պատճառը Թուրքին յամառ ասիացիութիւնն է (բառը գործածելով իբրեւ հոմանիշ խաւարամտութեան, քաղաքակրթական հեղուցութեան): «Թուրքին մեծազոյն յանցանքը Եւրոպայի մէջ բոլորովին ասիացի մնացած ըլլալն է: Կարծէք թէ Եւրոպայի վրայ անպատակութեան ելած էին, իրենց գրաւած հողերուն կառչելով յհաստատուեցան, ընդարձակ երկիրներու վրայ վրան դրին ու նստան»: Այդ ասիականութեան երեսնէն Թուրքիոյ կեանքին բոլոր երեսները տեւական շիջումի մը ենթակայ են. «Մեր ոյժը, անունը, փառքը, պատիւը, անկախութիւնը, ազգութիւնը, կեանքը, գոյութիւնը՝ ամէն ինչը տեւապէս շիջելու վրայ է: Դարերով մեր տիրապետութեան տակ մնացած երկիրներէն կը քառուինք ատանց հետք մը ձգած ըլլալու. (ինչպէս թէ ատանց հետք մը ձգած ըլլալու, հապա ետեւ թողուած աւերակները): Հեղինակին բացատրութեամբ ասիական այս յետամնացութեան պատճառ դարձած են առաջին շրջանի իմաստուն եւ առաջինի պետական ղեկավարներուն յաջորդած տգէտ ու մոլեռանդ տարրեր. «Իրենց գահին վրայ հեղուցութիւններու մէջ իրան՝ զաղափարականութենէ զուրկ թաղաւորներ, տգէտ եպարզոսներ, ամէն կարգի բարենորոգում եւ յառաջիմութիւն շերտաքին հակառակ դունող մոլեռանդ շէյխ-իւլ-իսլամներ, հազար տարուան հնութիւն ունեցող սնամէջ զրքերով գլուխին ուռեցուցած անմիտ, անզգամ, պատուախնդրութենէ զուրկ

(*) Հարկ չեմ տեսնը մեր մէջբերումները գրին էլիբում յաջորդական կարգովը առաջ:

հոճանկեր»։ Այս տարրերով հարկաւ երկրին մէջ պիտի տիրէր «հազար տարի առաջ Արարիոյ եւ Իրանի մէջ գործադրուող վարչական եղանակ մը»։ Իսկ ասոր հետեւումը. «Երկրագործութիւն, արհեստ, առեւտուր չունինք, ամէն կողմ աւերակներու կոյտեր, ժողովուրդը երեք հազար տարի առաջուան իր կերպարանքով հազար տարի առաջուան կենցաղ մը կ'ապրէր, կարգ ու կանոնի մասին դադարիտը չունի, վաղուան մասին չի մտածուր, դադարիտը եւ զգացումէ, մեծ մասամբ նոյնիսկ բարոյականութենէ զուրկ թշուառական զանգուած մը, որ միշտ պատրաստ է սեղ փոխելու»։ Այս կացութեամբ ի՞նչպէս կարելի էր դոյտութիւն պահել Եւրոպայի զարթօնքին ու զարգացումին դիմաց, հարց կու տայ հեղինակը։ Հարկաւ այնպէս, ինչպէս տակաւին կը պահէին իրենց մնացած հողերուն վրայ. «Թուրքերը իրենց նախնիքին թողօններովը (իրենց աշխարհականութեան չըջնէն ժառանգ մնացած աւարներուն կ'ակնարկէ անշուշտ. — Ե. Տ.) եւ քրիստոնեայ ժողովուրդներուն աշխատանքին արդիւնքովը կ'ապրին»։

Ահա թէ ինչ զապնուազարմ ժողովուրդի մը մէջ միաժուլուելու պիտի փութային Օսմ. Թուրքիայի ոչ-թուրք տարրերը (եւ անոնց մէջ քրիստոնեայ ժողովուրդները) ըստ Իթիթիւտի պահանջին։

Չկարծուի սակայն թէ օսմ. պետութիւնը բոլորովին անմասն մնացած էր եւրոպական քաղաքակրթութեան բարեքներէն։ Ինչպէս հեղինակը դիտել կու տայ, ասիական երկիրներուն մէջ թուրքերան է որ ամէնէն առաջ ընդունած է եւրոպական կարգերն ու քաղաքակրթական կազմակերպութիւնները։ Իսկ հարցը կը տարբերի երբ կարգը կու գայ ընդունուած օրէնքներու եւ սկզբունքներու գործադրութեան։ «Այն ստեղծելու էր սեռնէնք թէ զէջ ընդօրինակուած եւրոպական հաստատութենէ մը ներս տիրողը արեւելեան կեանքն է, գործեր վարելու ասիական եղանակը. Եւրոպայի պաշտօնական հաստատութիւններուն մէջ դիտուած ժիւր գործունէութեան փոխարէն

ճուլութիւն, գործի դիւրացման փոխարէն դժուարացում, արագութեան փոխարէն դանդաղութիւն, կարգ-կանոնի փոխարէն անկարգութիւն եւ խառնակութիւն, արդարութեան փոխարէն անիրաւութիւն, այսինքն բոլոր այն թեթուութիւնները, որոնք կառավարութիւն մը ներքնապէս եւ արտաքնապէս վարկարկ կ'ընեն...»։

Եւ ահա, դարձեալ, թէ ի՞նչ «պատուարժան» պետութիւն մըն էր, որ առանցքը պիտի դառնար երկրի այլապէս տարրերու քաղաքական միութեան։

Իսկ երբ, պետական կեանքի սապայմաններէն դժգոհ, քրիստոնեայ հրապարակները ապստամբեցան, ի՞նչպէս վարուեցաւ թուրքը.

«Իսկ երբ մեզմէ ուժացող քրիստոնեայ տարրերը ուրիշ ազգերու դրուստներովն ու պաշտպանութեամբը իրենց լուծէն (պոյունտուրադան) ազատագրուելու աշխատեցան, թուրքերը առանց այս ապստամբութիւններուն, այս ազգային շարժումներուն ներքին արտաքինելու, միշտ ուժով եւ բռնութեամբ (չուվիլիթլէ, զորպալուզլա) զանոնք մարելու աշխատեցան»։

Իսկ Իթիթիւտական դեկավարները անդիտակ էին արդեօք իրենց երկրին պետական կեանքի սպայմաններուն եւ չէին դիտեր թէ թուրք պետութիւնը որեւէ գրաւիչ կողմ չունէր ոչ-թուրք տարրերուն համար. այնքան ահա էին ընկերային կեանքի երեւոյթներուն նկատմամբ եւ չէին կրնար հասկնալ թէ երկրին քրիստոնեայ հրապարակները, իրենց մշակութային անբաղդատելի գերազանցութեամբ, նախնական ժողովուրդի մը ստամոքսին մէջ մարտուելիք պատաններ չէին։ Գիտելիքն, կը հասկնային։ Իսկ եթէ կը հզնէին թուրքիոյ անբաղձալի կացութեան պատասխանատուութիւնը վերագրել ոչ-թուրք տարրերու, մասնաւորաբար քրիստոնեաներու կեցուածքին, ստիկա կեղծիք մըն էր արդարացնելու համար թուրքիան բռնի թրջացնելու (ի հարկին՝ ընդդիմացող քրիստոնեայ տարրերուն բնաջնջումովը) ի-

րենց թաքուն մտադրութիւնն ու դործունելութիւնը, որ շատ շանցած Հրապարակային պիտի դառնար: Ահա թէ ինչ կը գրէ ուրիշ թուրք մտաւորական մը, Ահմէտ Էմին, Նիւ-Յորքի Գոլըմպիա համալսարանին ներկայացուած իր սոքթոքայի թէզին մէջ. «Կոյր եւ յարձակողական կայսերականութիւն մը եղաւ տիրական շարժիչը Իթթիհատի քաղաքականութեան: Օսմանցիութիւն եւ միութիւն թուրքիայի ընկելութեան բոլոր տարրերուն ստանց ցնդի եւ դաւանանքի խտրութեան եւ նման խօսքեր կը կրկնուէին դեռ, բայց անոնք այլեւս չէին նշանակեր որ տարբեր տարբերը պիտի միանային ընդհանուր եւ չեզոք գետնի վրայ, փոխադարձ զոհողութիւններով, իբրեւ Օսմկայսութեան հաւասար իրաւատէր քաղաքացիներ. այլ կը նշանակէին պարզապէս թէ պիտի կու տրուէին, ծուլուէին ոչ-թուրք տարրերը, ի հարկին բռնի միջոցներով: - Մ. Ա. Թուրանիա»:

Իթթիհատի իշխանութեան առաջին օրերուն իսկ այս քաղաքականութեան ամենէն շուրջիւն արտայայտութիւնը եղաւ Կիլիկիոյ ջարդը, որուն Հրապարակային դերակատարը տեղին ժողովուրդն էր անշուշտ, բայց որուն յայտնի կամ պաշտօնի կերպով իրենց լրացուցիչ մասնակցութիւնը բերին նաեւ օրուան կառավարութեան կողմէ ուղարկուած «զօպիշ» ուժերը: Հարկաւ պատասխանատուութիւնը ի վերջոյ դիւրին էր նետել նոր դահլնիկ սուլթանին եւ իրեն համակիր յատուրլուկան տարրերու վզին, երեւոյթները համոզիչ էին այս վերագրումին համար: Բայց ի՞նչպէս բացատրել Իթթիհատի ամենէն ազգեցիկ պետերէն սոքթ. Նազըմի յայտարարութիւնը այն օրերուն, երբ քսան հազար զոհերու արիւնը դեռ չէր չորցած. «Պետութիւնը պէտք է տարածեթօրէն թուրք ըլլայ. օտար տարրերու գոյութիւնը պատրուակ է եւրոպական միջամտութեան, պէտք է բռնի թրքացնել զանոնք» (Մ. Ա. Թուրանիա):

Նոր բռնատիրութեամբ հին կացութիւնը տեսականացնող այս ներքին քա-

ղաքականութեամբ Իթթիհատական դեկաւարութիւնը հարկաւ աւելի պիտի լայնցնէր թուրքին եւ քրիստոնէայ տարրերուն միջեւ դոյութիւն ունեցող բացը: Այդ քաղաքականութեան հետեւանքն են 1911-12-ի մակեդոնական ապստամբութիւնները: Բայց այդ քաղաքականութիւնը օրուան դեկաւարներուն համար աւելի նպաստաւոր պիտի չըլլար նաեւ միւս լիմ տարրերուն վերաբերմամբ՝ հակառակ, այս վերջիները շոյելու համար, օսմանցիութեան զուգահեռաբար խաղցուած իսլամականութեան կեղծիքին: Դարձեալ խոսվութիւններ յառաջ պիտի գային Պաղեստինի եւ արևելքիներու չըրջանին մէջ, Իրաքի եւ մանաւանդ Եմէնի մէջ:

Իթթիհատի դաւանած օսմանցիականութիւնը, սահմանադրութեան յաջորդող ստանլին տարիներուն իսկ, իսլամականութեան եւ թիւրքեթիւթեան խառնուրդով այլասերած, անակաւանալու վերայ էր արդէն փաստերու ուժին առջև:

Ճ

Բայց օսմանցիականութիւնը սնանկութեան առաջնորդողը պիտի ըլլար, մանաւանդ համաթուրանական դաւանանքը:

Մենք տեսնք որ Թուրքիան երկարատեւ անտարբեր մնաց ազգային - քաղաքական այդ նոր վարդապետութեան հանդէպ՝ հակառակ անով իրեն տրուած պատուարեր դերին ու դիրքին: Անտարբեր մնաց ո՛չ միայն իր սուլթանական կառավարութեամբ, որ համեմատական էր եւ համիտեան ըժժիմին տակ ազատ ասպարէզ չէր թողուր այլ վաղափարներու քարոզին, այլ նաեւ արտասահման ապաստանած իր մտաւորականութեամբ, որ իր դեռ չփորձուած օսմանցիական վաղափարաբանութեամբ ընդհանրապէս համակիր վերաբերում չունէր թուրանական տեսութեան հանդէպ, աւելին՝ արհամարհանք ունէր անոր հանդէպ: Եւ զարմանալի պիտի չթուի ասիկա, երբ նկատի ունենանք որ թանցիմութեան չըրջանի մտաւորական սերունդը տակաւին

որոշ գաղափար իսկ չունէր իր ցեղային ծագման մասին: Չարեւանդ կը յիշէ որ մտնար արեւելադէտ եւ մասնաւորաբար թրքադէտ Արմինիոս Վամբէրի 1858-ին Պոլիս այցելելով երբ օրուան մտաւորական պէյ-էֆէնտիներուն խօսք բացած է իրենց թուրանական ծագման մասին, այս վերջինները վրդովուցով բացառանշած են. «Բնայց դուք մտաւորաբար մեզ չէք դասակցեր Բրքդըզներու եւ թաթարիայի անոպայ վաշկատուններուն հետ»: Եւ եթէ նկատի ունենանք նաեւ որ 80-ական թուականներու թուրք մտաւորականութեան իմացական աշխարհն ալ ազգային պատմական ծանօթութիւններու շատ լայն գետին մը չունէր տակաւին, հասկնալի կը դառնայ թէ ինչո՞ւ 900-ական թուականներու թուրք մտաւորականութիւնը անընտել կը մնար թուրանական գաղափարներուն, թէ ինչո՞ւ Ալի Բէքմալները արհամարհանքով կը խնդային Եւստուֆ Աբուրբաններու տեսութիւններուն, թուրանական դաւանանքի «ցնորական» յաւակնութիւններուն վրայ: Բայց «վերջին խնդացողը լուս կը խնդայ» կ'ըսէ առածը. իսկ վերջին խնդացողները Աբուրբանները պիտի ըլլային:

••

1908-1909-ի սահմանադրութիւնը, թուրքիոյ զաղաքական իշխանութիւնը օսմանցիական իթթիհատին յանձնելով հանդերձ, ասպարէզ կը բանար ամէն տեսակի գաղափարական քարոզութեան համար: Օգտուելով ստեղծուած նպատաւոր պայմաններէն՝ թուրքիոյ մայրաքաղաքը (Պոլիս) կը փութային կովկասցի ամէնէն յայտնի բանթուրանիստ գործիչները, որոնք, շնորհիւ իրենց խելացի եւ եռանդուն գործունէութեան, ջանք մը տարուան ընթացքին գաղափարական լայն նուաճումներ պիտի կատարէին երկրի ղեկավար շրջանակներուն մէջ:

Ի՞նչ կ'ըսէին այս մարդիկը:
Մենք ասկէ առաջ ընդհանուր կերպով մը բնորոշեցինք անոնց զաղաքա-

կան դաւանանքը: Անոնք կ'առաջադրէին ազատագրել օտար տիրապետութեան տակ ինկած թուրանցի ժողովուրդները եւ բոլոր թուրանական ժողովուրդներու տարածման ներկայ սահմաններով ստեղծել անոնց զաղաքական միութիւնը՝ Միացեալ Թուրանիան: Տեսանք նաեւ որ անոնք այս առաջադրութեան իրագործումը կարելի կը գտնէին ղեկավար դերով անկախ թուրքիոյ, որ միանշա՞տայն պէտք է առանցքը դառնար կազմելիք համաթուրանական միութեան: Արդ՝ հարկ է ջիշ մը աւելի պարզարտանել զաղաքական սա վարչապետութիւնը:

Միացեալ անկախ Թուրանիայի սահմանային տարողութիւնը ջիշ մը շատ առաձգական է տեսարանէ տեսարան: Թաթար բանթուրանիստներու ախորժակը շատ բաց է ընդհանրապէս: Անոնք սպաւազայ թուրանիտն կը տարածեն Ախոյ մեծագոյն մասին եւ Եւրոպայի այն երկիրներուն վրայ, ուր թուրանցիներ հաստատուած են, եւ նոյնիսկ, ըստ աշխարհագրական յարմարութեան, այնպիսի երկիրներու վրայ, ուր թէեւ հաշուի առնուելիք թուրանցի զանդուածներ չկան, բայց որոնք անցեալէն պահած պէտք է ըլլան թուրանցի ասպատակներու այցելութեան զբաղցր յիշատակն ու երախտիքը: Իրենց զաղաքագիտական իրատեսութեամբ աւելի զգաստ են՝ հարցին գործնական շահագրգռութեամբ մօտեցող թուրք բանթուրանիտ տեսաբանները: Անոնց ամէնէն յայտնի գէմքն է Չըլալէօք Ալի (ծագումով քիւրտ), որ իբրեւ թէ զիտական ճշգրտութեամբ սահմանելով թուրանական աշխարհը՝ անկէ դուրս կը ձգէ Ուրալ-Ալթայիան ընտանիքին պատկանող ցեղային մեծ միութիւններ (մոնղոլներ, Փիլիներ, հոներ եւ այլն) եւ զայն կը սահմանափակէ «մէկ լեզուաբանական - ցեղաբանական խումբ» կազմող քաթար եւ օղուզ ցեղախումբերու բռնած երկրամասով. «Թուրան» թրքական այդ ցեղերուն ընդհանուր անունն է: Թրքական դանազան ճիւղերը ընդպրկող մեծապոյն թրքական

աշխարհով կը սահմանափակուի Թուրանիան» :

Բանթուրանիստ տեսարանները ընդհանրապէս համաձայն են որ այսպէս սահմանուած Թուրանէն ներս ինկած բոլոր ցեղերը, հատուածական ինչ անուն ալ ունեցած ըլլան, կոչուին Բուրք, եւ ասկէ մեկնելով՝ այդ ժողովուրդներուն ազատագրութեան եւ միութեան ձգտող շարժումն ալ կը կոչեն քանթարքիզմ փոխանակ քանթարանիզմի :

Բայց, ըստ իր ցեղաբանական դիտութեան կամ ըստ գործնական յարմարութեան Թուրանը այսպէս սահմանափակելէ ետք իսկ, Ձըյա Կէօք Ալի անոր ամբողջական նուաճումը իբրեւ անմիջականորէն հետապնդելի նպատակ չառաջադրեք քուրանիստներն : Ասոր անմիջական առաջադրութիւնը պէտք է ըլլայ օղուզ ցեղախումբին պատկանող թուրք-թիւրքմէն ժողովուրդներուն ազատագրութիւնն ու ազգային-քաղաքական միութիւնը կամ, ուրիշ խօսքով, անկախ Օղուզիստանի կազմութիւնը. «Թուրքիա, Ազրպէյճան, Պարսկական Ասորպատական եւ Խուվարիզմ պիտի կազմեն վաղուայ Օղուզիստանը» — Մ.Ա. Թուրանիա» : Թուրանիայի ամբողջական ազատագրութիւնն ու միութիւնը հետաւոր նպատակ մը կը մնայ տակաւին, որ անկայն շահագրգռուող ժողովուրդներուն համար զազափարական խանդավառութեան զսպանակ մըն է միշտ ըլլալով միանգամայն քաղաքականապէս օղտազործելի ուժ մը :

Կը նկատէ՞ք, սակայն, որ Թուրանական դաւանանքի քաղաքական ծրարներն տարողութիւնը շահեկանութենէ զուրկ է մեզի համար : Այդ ծրարները լայն բռնուած ըլլայ թէ նեղ՝ անոր զործադրութեամբ մեր երկրին ու ժողովուրդին համար ստեղծուելիք կացութիւնը նոյնը պիտի ըլլար միշտ, քանի որ հայկական աշխարհը ամբողջապէս կ'իյնայ այդ դաւանանքին ամէնէն զհա-

մետն առաջադրութեան իսկ սահմաններէն ներս :

Մեզի համար շահեկանութենէ զուրկ է նաեւ բանթուրանիստ մտաւորականներու միջեւ վիճելի այն հարցը թէ ինչպիսի ընկերային — քաղաքական դրութիւն մը պիտի ունենայ ազատագրուած Թուրանիան կամ Օղուզիստանը, անիկա ազգային — պետական համաձոյլ միութիւն մը պիտի ներկայացնէ թէ Թուրանական ուրոյն քաղաքական միութիւններու համադաշնակցութիւն մը : Շահեկանութենէ զուրկ է՝ որովհետեւ, այսպէս թէ այնպէս, բան մը չի փոխուիր Թուրանական նոր աշխարհակալութեան ճամբուն վրայ ինկած մեր երկրի ճակատագրէն :

Բայց մեզի համար շահեկան էր ճանշցած ըլլալ եւ այսօր ալ շահեկան կը մնայ ճանշնալ զազափարական այն շարժումը, որ պիտի նախորդէր թուրք ժողովուրդի ազգային դիտակցութեան եւ թուրք ղեկավարներու քաղաքական գործունէութեան նոր օրանքախմբին : Այդ շարժումը, որ կոչուած էր Թուրանական դաւանանքի ազգային — քաղաքական առաջադրութիւններու հետապնդման հոգեբանական պատրաստութեանը, կոչուեցաւ Թիւրքիզմ կամ Թիւրքմիզմ : Թուրանական դաւանանքի այս նախապատրաստական շրջանին էր որ Պոլիս ու Սեյանիկ փութացող Թաթար բանթուրանիստները վճռական նուաճումներ պիտի կատարէին Թուրք ղեկավար ասորբերու մտայնութեան մէջ օգտուելով սահմանադրական ազատութենէն ու միանգամայն սահմանադրութեան յաջորդող բանի մը տարիներու քաղաքական իրադարձութիւններէն : Պէտք է ճանշնանք այդ շարժումը՝ բացատրելու համար մեր մօտիկ անցեալի եղբրական զէպքերը եւ կարենալ նախատեսելու համար վաղուան պատահականութիւնները :

Ե. Տ.

«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ»...

ԹՂԹԻ ՎՐԱՅ

(ձայնաստեղծական երգերի ժանր)

Ա.

Խորհրդային կուլուրդ վարչակարգի պայմաններում ճշգրտվում էր բարեկամությունը արտայայտությունը շարաշար շահագործող բազմաանգամ արտայայտություններից մէկն է: Նրա տեղը իրականում հետապնդում է սոսկ բուն իրականությունը կրծկելու եւ ներքին ու արտաքին աշխարհին ապակողմնորոշելու նպատակ, բայց ոչ մի դէպքում չի կարելի այն համարել իրերի վերահսկման համապատասխան արտացոլում: Իրականությունը լուրջանք ընթանում է ի՛ր ճանապարհով, իսկ պետական քարոզչությունը մենաշնորհալ խիզախութեամբ ծառայում է ամէն ինչի հնազանդ թղթի վրայ, ինքնազուլեմ վճիռներ արձակելով:

«Ժողովուրդների բարեկամությունը» ծառայում է ոչ միայն որպէս ի յուսալից սնամէջ նշանախօսք կուսակցապետական պաշտօնական ճառարարների «յաւուր պատանդ» ելոյթներում, ոչ միայն քարոզչական բեմերի կողմից օգտագործելու է հանրային կեանքի դեմոկրատիկ ամառայինը որեւէ պատրաստի ներկայութեամբ լցնելու նպատակով, այլեւ նոյնիսկ «քննութեան» ու «պատկերազարդման» առարկայ է դառնում լուրջ տեսք ունեցող պատմագիտական, գրականագիտական եւ այլ կարգի համապատասխան մասնագիտական աշխատություններում, հրատման էլ ուղղակի «լոգոսարդ» դեր կատարելով՝ բուն աշ-

խատությունը տեղ հասցնելու համար...

«Ժողովուրդների բարեկամություն» արտայայտությունը դժբախտաբար ուժեղացնում է լինում պետական ազգամիջեան քաղաքականության ելուէջներով: Դա երբեմն, պարագաների համաձայն, փոխարինում է պանդան խրատիլակային «համարժեքներով», որպէսզի որոշ ժամանակից լետոյ վերադառնա հրատարակ նետուի նոր թափով: Բայց ըստ էության միշտ էլ օրակարգի վրայ է, քանզի տիրող վարչակարգը տառնց աղբյուրի զգրգրակին, «սխալեցուցիչ» պատգամների՝ ուղղակի չի կարող գոյություն ունենալ: Մարդկանց զանազան ընդթի լողուններով կերակրելը մինչեւ հիմա էլ բնորոշ է խորհրդային հասարակական բարքերին:

Իւրաքանչիւր խելահաս մարդու համար զարմնիք չէ, թէ ինչ է նշանակում բարեկամությունը առհասարակ: Միեւնոյն է, դա լինի անհատների թէ հասարականությունների միջեւ: Նոյնիսկ առանց համապատասխան բարոյագիտական կամ հասարակագիտական գրականութիւն կարգալու, առօրեայ փորձից էլ կարելի է հասնել այն ստուգուած եզրակացութեան, որ կեանքում օգտին, քմահաճ, կուրորէն ինքնանպատակ բարեկամություն գոյութիւն չունի եւ չի կարող իսկապէս գոյութիւն ունենալ: Նրան հասնելու համար պէտք է հերթական շատ ու շատ փուլերից անցնել: Պէտք է որ լինեն հոգեբանական ու կեն-

սական նպաստաւոր նախադրեանքեր եւ միշտ չէ որ «կամենալը կարենալ է» : Հետեւապէս, «ժողովուրդներէ բարեկամութեան» մասին խօսելն էլ անպայման պէտք է ունենայ իրական հիմք եւ վաւերական քննութիւն : Պէտք է պարզ լինի, թէ ինչն է արդէն իրական եւ ինչը միայն ցանկալի :

Եթէ խորհրդային պայմաններում «ժողովուրդներէ բարեկամութեան» հարցը առաջ քաշուէր որպէս մի հանրօգուտ նպատակ, որին պէտք է զիտակցօրէն ձգտել եւ հասնել, — դա կը լինէր միանգամայն հասկանալի : Բայց այդ զէպքում առաջին խօսքը կը պատկանէր դերանով շահագրգռուած բուն ժողովուրդներին եւ ոչ թէ վերապահ եւ ստորակարգ իշխանաւորներին : Այդ զէպքում հարկ կը լինէր հետեւողականօրէն զբաղուել նաեւ տուեալ ժողովուրդներէ իսկական բարեկամութեանը հասնելու վստահելի ճանապարհներ որոնելով : Մինչդեռ իրերէ կացութիւնն այլ է՝ մարդկանց անպայման «վերելից ազատագրելու», «վերելից երջանկութիւն բաշխելու» մարմաջը իշխանաւորներին չի լքում նաեւ այս ասպարէզում : «ժողովուրդներէ բարեկամութիւնը» պաշտօնապէս արդէն համարուած է անվիճելիօրէն նուաճուած փաստ, թէ եւ անհասկանալի պատճառներով միշտ էլ կարիք է զգացուած նորից ու նորից հանդիսաւոր յայտարարութիւններով վերահսակել այդ նշանախօսքը, սաստել անընդհատ վերածնունդ բազմաթիւ անհնազանդներն ու թերահաւատներին : Միտածանակ ամէն տեսակ ջանքեր են թափուած, որպէսզի ընդհանրապէս Միութեան ժողովուրդներէ այսօրուայ կարծեցեալ բարեկամութիւնը երեւայ իր «խոր հնութեամբ», ծագում աննի «գարբի խորքից» : Պատմագիտական զանազան աշխատութիւններում հարեւան կամ ոչ-հարեւան ժողովուրդներէ միջեւ անցեալում զօրութիւն ունեցած տեսական կամ պատահական ամէն տեսակ կապերը եւ յարաբերութիւնները ներկայացուած են դերազանցապէս «բարեկամութեան» ցու-

ցանակի տակ, յաճախ խեղաթիւրելով այս կամ այն իրողութեան պատմական տեղն ու դերը եւ նշանակութիւնը :

Բոլոր ժողովուրդներն էլ, կասկած չկայ, իրենց պատմութեան ընթացքում այս կամ այն չափով մշտական կամ ժամանակաւոր կապեր ու յարաբերութիւններ են ունեցել միւս ժողովուրդներէ հետ, ներգործել եւ ազդուել, պայթարել եւ հաշտուել, տիրել, եւ տիրուել, զործակցել, միջնորդել, զգուշացել եւ այլն : Այդ յարաբերութիւններէ ընթացքում իր տեղն է ունեցել եւ բարեկամութիւնը : Այդ ամէնը հնարաւոր զիտական բարեխղճութեամբ արձանագրելը, դասակարգելն ու իմաստաւորելը միայն եւ միայն շնորհակալութեան արժանի դորդ կարող է համարուել : Բայց երբ պատմական ու այժմէական անխտիր ամէն մի իրողութիւն հետեւողականօրէն գուրաւորուած է կանխակալ միտումներով, ննթարկուած շահախնդիք նկատառումներէ, — կացութիւնը փոխուած է հիմնովին եւ պահանջում աշխուշ զգաստութիւն նրանցից, ովքեր չեն ուզում կամովին զոհ դառնալ պատմա-քարոզչական նպատակաւոր նենգափոխումներէ :

«ժողովուրդներէ բարեկամութեան» նիւթը կուսակցա-պետական ըմբռնումով արծարծուած է խորհրդային բոլոր երկրներում : Պարզ է, որ Հայաստանը ոչ մի դէպքում չի կարող միայնակ բացառութիւն կազմել : Պաշտօնական ու դադարաբախտական համաժողովներում, լրացրական սիւնակներում եւ զբաղաբան զբաղիտութեան» ուսուցման մեծ ու փոքր հաւաքոյթներում՝ բարեկամութիւնն էլ իր որոշակի տեղն ունի : Այստեղ դրանցով ըստ էութեան չլիտի զբաղուենք : Մեզ հետաքրքրում են բացառապէս Հայաստանեան այն հրատարակութիւնները, որոնք հրատարակ են հանում որեւէ զիտական հիմնարկութեան կամ առհասարակ զիտական պիտակով եւ որոնց մէջ այսպէս թէ այնպէս արտացոլուած է տիրող իշխանութեան կողմից արձատարուող հանրա-

պարտադիր մտայնութիւնը՝ մերկապարանց քարոզչականից մի քիչ տարբեր մեկով եւ մակարդակով: «Ժողովուրդներէ բարեկամութեանը» նուիրուել են յատուկ աշխատութիւններ կամ էլ այդ նշանախօսքը այս կամ այն դրքում հարկուում է հարեւանցիօրէն կամ առանձին շեշտով՝ որոշակի առիթներով: Աշխատութիւնները վերաբերում են հայ եւ դանազան այլ ժողովուրդներէ անցեալ եւ ներկայ փոխյարաբերութիւններին: Մեզ համար կարեւորը ներկան է, այսօրուայ կացութիւնն ու դործունէութիւնը, բայց ամէն անգամ պիտի անդրադառնանք նաեւ անցեալին, որովհետեւ խորհրդային պայմաններում սովորաբար անցեալն էլ ծառայեցում է ներկայումս հետապնդուող նպատակներին: Անկարելի է ժողովուրդներէ փոխյարաբերութիւնները պատկերացնել՝ առանց նրանց պատմական ամբողջութիւնը աչքի առնելու ունենալու: Յամենայն դէպս, առեւտր ղէպքում շուրջուող նիւթին մօտենում ենք այսօրուայ դիրքերից եւ այն դիրքում այսօրուայ իրողութիւններէ անհրաժեշտաբար:

Բ.

«Բարեկամութեանը» նուիրուած դրականութեան առիւծի բաժինը, բնականաբար, վերաբերում է «աւագ եղբորը»՝ ուսեւ ազգին: Հայ մտաւորականներէ աշխատութիւններում հայ-ուս յարաբերութիւններէ հարցը քննութեան առնելը նորութիւն չէ: Հայերը մասնաւոր պատճառներ են ունեցել եւ ունեն դրանով զբաղուելու: Նախախորհրդային շրջանում էլ բազմաթիւ գրքեր են լոյս տեսել այդ առիւծի: Եւ քանի որ այդ գրքերը հրատարակուում էին ուսական կայսերական դրաններէ թոյլտուութեամբ, առանց այլեւայլութեան կրում էին ուսանալիստ ընդթ: Այնուամենայնիւ նրանց մէջ աստիճանաբար կուտակուում էր փաստական հարուստ նիւթ, որը պիտանի կարող է լինել այսօր եւ միշտ՝ որպէս գիտական շտապ:

Այսօր, Արեւելեան Հայաստանի վերջին մէկ ու կէս դարի քաղաքական, տնտեսական եւ մշակութային պատմութիւնը ուսումնասիրելու հետ միասին, ինքնաբերաբար հարկ է լինում անդրադառնալ նաեւ հայ-ուս յարաբերութիւններին, բարեկամութեան ապացոյցներ փնտռելու դիտաւորութեամբ: Այսպէս, տնտեսագէտներ Մաշիկ Գուլանեանի, Սարգիս Զուրաբեանի, Յովհաննէս Թումանեանի, Մուշեղ Աղոնցի եւ ուրիշներէ պատմա-տնտեսագիտական աշխատութիւններում պատշաճ չափով խօսուում է նաեւ ցարական ժամանակաշրջանի տնտեսական քաղաքականութեան հանդուսներէ եւ կիրառութեան մասին: Պատմաբաններ Մկրտիչ Ներսիսեանի, Վարդան Պարսամեանի, Վահան Թևոնճու, Աբգար Յովհաննիսեանի պատմա-հասարակագիտական աշխատութիւններում, հայաստանեան ազգային իրականութեան զուգընթաց, մշտապէս ներկայ է եւ ուսական ընդհանուր իրականութիւնը: Այդ առումով մասնաւոր տեղ են ընում ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանի ուսումնասիրութիւնները: Բայց ամէնից շատ մշակութային պատմութիւնն է, որ արտացոլում է հայ-ուս յարաբերութիւններէ ծաւալն ու ընդթը: Գրականագիտական նշանակալից կամ անշան ուսումնասիրութիւններ են գրել Գուրգէն Յովհաննիսեանը («Թուահայ գրական կապերը 19-20-րդ դարերում» երկատոր աշխատութիւնը), Արսէն Տէրտէրեանը, Յովիկ Մելիքեանը, Թուսէթ Յովհաննիսեանը, Կամսար Գլուրիպորեանը, Զուարթ Ղուկասեանը, Սարգիս Արեւելեանը («Հայ մամուլը եւ ցարական դրաններէ») - ուսեւրէն) եւ շատ ու շատ ուրիշները:

Բարեկամութեան գաղափարը շեշտելու համար լրագրող Աշոտ Արզումանեանը իր ժամանակին պատրաստել է «ԲԱՊԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» վերնագրով մի ժողովածու, որը մի քանի անգամ արդէն վերահրատարակուել է հայերէն եւ ուսեւրէն, նորանոր լրացումներով: Այդ ժողովածուում սովորաբար զետեղուում

են յօդուածներ, ակնարկներ, ուսումնասիրութիւններ, յիշողութիւններ եւ նամակներ՝ «Հայ եւ ռուս ժողովուրդների մասին»։ Ժողովածուն իր բնոյթով մեծածաւալ ու պատկերազարդ սեղանի գիրք է, հրատցում է զանազան տեղերից հաւաքած ուղղակի վկայութիւններ։ Իսկ վերոյիշեալ միւս Հեղինակների աշխատութիւնները՝ նուիրուած են այս կամ այն առանձին նիւթի, սահմանափակ շառաւիղով։

Ինքնուրոյն տեղ է բռնում Զաւէն Գրիգորեանի «Հայ եւ ռուս ժողովուրդների դարուոր բարեկամութիւնը» (1960 թ.) գրեթէ 600 էջանոց գիրքը, ոչ թէ իր գիտական արժէքով, այլ նիւթի զատմական լայն ընդգրկմամբ։ Հեղինակը, հրատարակչների ասելով, ցոյց է տալիս, զոր հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ տնտեսական, կուլտուրական, ռազմական կապերը եւ բարեկամութիւնը սկիզբ է առել կիեւեան պետութեան ժամանակներից եւ զնալով խորացել, ծաւալուել ու ամրապնդուել է։ Ուրեմն, տրուած է հարցի ամփոփ պատմութիւնը զսկզբից մինչեւ մեր օրերը։ Երբ աչքի առնել ենք բերում Հայ-ռուս յարաբերութիւնների գրեթէ հազարամեայ պատմութիւնը, տեսնում ենք, որ սկզբում մինչեւ 18-րդ դարը կապերը սահմանափակուած են տնտեսական բնագաւառում։ Հայաստանից հայրենական դաղթականների խմբերը եւ ապա առեւտրականները ու պաստան են զտնում ռուսական կամ մերձակայ քաղաքներում։ 18-րդ դարից մեւաւորուած են քաղաքական ու ռազմական կապերը եւ միայն աւելի ուշ՝ մշակութային շրջաններն են սկսում։

Որ հայերի ու ռուսների միջեւ դարեր շարունակ տնտեսական կապեր են եղել, որ պատմական որոշ շրջանում յուսահատութեան եզրը հասած հայերը իրենց աչքերը հիւսիս են յառել փրկութիւն հայելով, միեւնոյն ժամանակ ռազմա-քաղաքական գործակցութիւն ցոյց տալով, - արդէն վաղուց յայտնի

անհերքելի իրողութիւն է։ Բայց Գրիգորեանը այդ թուրք կնքում է միանշանակ զբարեկամութիւն» անունով։ Մինչդեռ պատմութիւնը առատ փաստերով վկայում է, որ բարեկամութիւնը, զոյութիւն ունենալու գէպքում, միշտ էլ համարեա միակողմանի է եղել, իսկ հարաւ իջնողը, կացութեան տրամաբանութեամբ, իր սեփական նպատակներն է հետապնդել, որոնք շատ յաճախ ուղղակի հակասել են հայկական նոյնիսկ ամենահամեստ ակնկալութիւններին։ Գրիգորեանը, անշուշտ, միւս ընդեր նման ձեռքին պատրաստի ունի «երկու Ռուսաստանի» լենինեան դրոյթը։ Ըստ այդ դրոյթի՝ «ամէն ազգի մէջ երկու ազգ կայ», այդ թւում եւ ռուս ազգի մէջ։ Եղել է տիրոջները ազգը եւ աշխատաւորութիւնը։

Առաջինը ծաւալապաշտական եւ շահագործողական քաղաքականութիւն է վարել, իսկ երկրորդը անկաշառ բարեկամութիւն սպասել... Եթէ այդ տրամաբանութեամբ դատենք, ապա ինչո՞ւ ամէն ազգի մէջ կայ միայն «երկու ազգ», եւ ոչ թէ 12 կամ 102 եւ աւելի։ Իւրաքանչիւր ազգ ունի իր շերտաւորումները, բայց ոչ անպայման երկու բեւեռներով, ինչպէս որ ուզում են հաստատանել լենինին թութակաբար կրկնողները։

Զարմանալին բնաւ այն չէ, որ հայերի ու ռուսների դարաւոր շփումների ընթացքում որոշ թուով ուսաներ հայերին համակրել եւ բարեկամ են եղել։ Զարմանալին այն է, որ դրանք, հսկայական ժողովրդի թուի համեմատութեամբ, շատ քիչ, նոյնիսկ աննշան են եղել։ Կարող են աւարկել, թէ երբ մի ժողովուրդ ինքն է դառնում ճորտական վիճակում, էլ ի՞նչ բարեկամութիւն կամ օժանդակութիւն կարելի է սպասել նրանից։ Անշուշտ, անիմաստ բան է խեղճ ու կրակ ստրուկից օղնութիւն տկնկալել, իսկ ճորտատիրական Ռուսաստանը դարեր շարունակ իրաւազուրկ զանգուածներին ինքնամփոփ աշխարհ էր։ Բայց այդ գէպքում էլ առհասարակ կարիք չկայ խօսելու «Հայ եւ ռուս ժողովուրդ»

ների դարաւոր բարեկամութեանց մասին: Կարելի է, ցանկանալու զէջըում, ուրիշ մեակերպում գտնել, հարցին ուրիշ տեսանկիւնից մտնել, բայց տնհիմն արտայայտութիւններ չհնարել: Ռուսաստանի երկնից սպասուող դերը հայերի համար չխաղաց նաեւ հետագայում, երբ շկար ոչ ճորտատիրութիւն, ոչ էլ որեւէ այլ հանրային-իրաւական կապանք: Մատեների վրայ կարելի է հաշուել արդիւնաւէտ հայաստանութիւն ցուցաբերած նշանաւոր ուսանիւններ:

Այդ սահմաններէ մարդկանց շարքում կարելի է յիշատակել աշխարհահռչակ դորաւար Ալեքսանդր Մուկրորովին եւ գրող-թատերադիր ու դիւանագէտ Ալեքսանդր Գրիբոեդովին: Առաջինը շատ լաւ յարաբերութիւններ ունէր հայերի հետ եւ հոգածութեամբ վարեց հայերի անվտանգ տեղափոխութիւնը Արիւմից Դոնի մերձակայքը: (Ի դէպ, ոմանք համոզուած են, թէ նրա մայրը հայուհի էր՝ Մանուկովա): Իսկ երկրորդը Չեմպորէն նպաստեց հայերի ներգաղթին՝ Պարսկաստանից դէպի Հայաստան: Բայց այս մարդիկ էլ իրենք արդէն համոզուած մարդասէրներ էին եւ իրենց արարքը խորքով դուռ մարդասիրական էր: Հետագայում մի քանի այլ գրականագէտներ Հետաքրքրուեցին հայ կեանքով, աւելի կամ պակաս շարժով ուսումնասիրեցին հայոց պատմութիւնն ու մշակութիւնը եւ ներկայացրին ուսանիւններ: Նրանց թիւն էլ շատ չէ: Յիշատակելի են Սերգէյ Գլինկան, Եակով Պոլոնսկին, Եկատերինա Նեկրասովան, Իւրի Վեկտրովսկին եւ վերջապէս Վալերի Բրիւսովն ու Մաքսիմ Գորբին, ինչպէս եւ Սերգէյ Գորոդեցկին: Չենք կասկածում, որ դրանցից բացի ուրիշներն էլ որեւէ ստիժով ցուցաբերել են իրենց համակրանքը հայութեան նկատմամբ, բայց ի՞նչ օգուտ, երբ նրանց մայրը հանրութեան չի հասել եւ գործի չի վերածուել:

Գրիգորեանը իր դրբում յատուկ տեղ է տալիս ոռու գեկարբիտներին, որոնք 1825 թ. Դեկտեմբերի 14-ի նշանաւոր ըմբոստութիւնից յետոյ կախա-

ղանի դատապարտուեցին, աշտրուեցին կամ աստիճանադրուեցին եւ ուղարկուեցին գործող զօրամասեր, որպէս շարքային զինուորներ: Նրանցից շատերը եղան եւ Հայաստանում, մարտնչեցին, իսկ ոմանք էլ պատմութեանը աւանդեցին հայերի նկատմամբ համակարանքով չի իրենց յուշագրութիւնները: Անչուշտ, յուզիչ է գեկարբիտների սերնդի պատմութիւնը եւ ուշագրաւ: Բայց նրանց պատահաբար Հայաստանում գտնուելը դուռ պատմական հետաքրքրութիւն ներկայացնող առանձին փոտո է եւ ոչ թէ օրդանական բարեկամութեան համարաբար առհասարակ չեմքեր չըկան:

Գրիգորեանի գիրքը մեծ մասամբ առատ է փաստական տուեալներով: Ցարական ժամանակաշրջանին վերաբերող ոչ-բոլոր դիտողութիւններն են, որ վիճելի են: Բայց վերջին գլխում, որը կրում է գէշալ եւ առաւ ժողովուրդների բարեկամութիւնը լենինեան ինտերնացիոնալիզմի դրօշի ներքոյ՝ վերնադիրը, սկսում է իսկական ջարդչական խեղկատակութիւնը: Եթէ մինչ այդ շեշտը դրում էր «Ռուսաստանի միակ ուշալուծ» լինելու պատմական փաստի վրայ, այնուհետեւ, կոմունիստական շարժման երեւան գալու կապակցութեամբ, «ռուսական օրէնտացիան» փառաբանում է բոլոր կողմերից, անվերապահօրէն: «Ռուս պրոլետարիատը» հռչակում է հայ ժողովրդի «բնական, յուսալի եւ հզօր դաշնակից ու ազատարար»: Գրքի շարագրանքի ոճն էլ է փոխուում, դառնում տաղտկալի, քանի որ հասնում ենք նախախորհրդային բոլշևիկեան գործունէութեանը, Հայաստանի խորհրդայնացմանը, անցած 40 տարիներին եւ անխուսափելի «պայծառ ապագային»: Վկայակըչում են մի շարք մեծանուն հայերի արտայայտութիւններ ի նպաստ Ռուսաստանի: Այսպէս, Միքայէլ Նալբանդեանն ասում էր. «Ռուսիոյ ազատութիւնը, ընդհանուր մարդկութեան ապաստութեան վերաբերութեամբ, մեծ

խորհուրդ ունի: Յովհաննէս Քուճանեանը ասում էր. «Մեր ապագան, ինչպէս միշտ ասել եմ եւ դուք էլ զիտէք, կապուած է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան ազատ – էնքան լաւ, թէ մեզ համար, թէ աշխարհքի»: Այդ վկայակոչումների ժամանակ ակընյայտորէն մտապէտում է, որ նրանք եւ շատ ու շատ ուրիշները նկատի ունէին միայն եւ միայն բաղձալի ԱԶՍՏ Ռուսաստանը եւ ոչ թէ այսօրուայ ծանօթ միակուսակցական, ամբողջատիրական, կայսերա-ծաւալապաշտական Ռուսաստանը, որոշ տեսակէտից ցարականին շատ բանով պերազանցող:

Դրիգորեանը ջանում է ապացուցել, թէ այսօր հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութիւնը արտայայտուած է քաղաքական, ռազմական, տնտեսական եւ մշակութային բոլոր բնագաւառներում: Իսկ ի՞նչ քաղաքական բարեկամութեան մասին կարող է խօսք լինել, երբ օրը ցերեկով գործադրուած է ամբողջ աշխարհին յայտնի ազգաձուլման քաղաքականութիւն, երբ պարզապէս թըլուով ուժեղի կամքն է տիրում: Ի՞նչ արժէք ունի այն ռազմական համադրմանկցութիւնը, երբ 1937 թուից ի վեր այլևս գոյութիւն չունի Հայկական թէկուզ եւ խորհրդային ինքնուրոյն բանակը, իսկ հայ վիճուորներն ու զինուորականները ցանուած են Ռուսաստանի անծայրածիր տարածութիւնների վրայ, գործնականում դատապարտուելով ազգայնօրէն աստիճանաբար կորչելու: Տնտեսական նուստումներն էլ բնաւ չեն տեղաւորուած քարեկամութեան» շրջանակում: Աւելին. տնտեսական զկազրկութիւնը փոխանակութիւնը իր հերթին նըպաստում է միայն աստիճանական ու անդիմադրելի ռուսացման քաղաքականութեանը: Նոյնը տեղի է ունենում եւ

զգիտական կադրերի փոխանակութեան» ասպարէզում: Հանրայայտ է կրթական գործի վիճակը: Թէեւ գոյութիւն ունի դպրոցական ծաւալուն ցանց, Հայկական դպրոցների ուսումնական ծրագրերն ու դասագրքերը հիմնականում ստացւում են, որոշ բացառութիւններով, Ռուսաստանից: Այնտեղից էին ամէն տարի, մանաւանդ առաջներում, Հարեւրաւոր վատահիլի ուսուցիչներ ուղարկւում՝ ռուսաց լեզուն եւ առեականութիւնը Հայաստանում տարածելու համար: Այժմ էլ շարունակուած է այդ սովորութիւնը: Իսկ Ռուսաստանի հողում ժողովուրդների բարեկամութիւնը արտայայտուած է նրանում, որ այնտեղ Հայերը պարզապէս զրկուած են մայրենի լեզու սովորելու տարրական հնարաւորութիւնից: Տարիներ առաջ ահա թէ ինչ էր ասում ռուստովամերձ Հայկական Զաւրը չեւչի դպրոցի ուսուցիչներից մէկը (տես «ՆԱՐՈՂՆԱՅԻ ՕՐԲԱԶՁՈՎԱՆՆԻՒՄ» ամսագիր, թիւ 13, 1961 թ., Մոսկուա).— «Մեր շրջանի Հայկական դպրոցները արդէն երկու տարի է ինչ պարպում են նոր ուսումնական ծրագրով. ուսուցումը տարւում է ռուսաց լեզուով, իսկ մայրենին աւանդում է որպէս առարկայ: Մենք հնարաւորութիւն ենք տալիս եօթնամեայ երեխային Առաջին դասարանից ուսումնասիրելու միայն ռուսաց լեզու, իսկ երկրորդ դասարանից մտնենք մայրենի լեզուից»: Այս մէջբերումն արեցինք որպէս նմոյշ՝ ընդհանուր պատկերը կազմելու համար: Իրական պատկերն այդ է եւ ոչ թէ «ժողովուրդների բարեկամութեան» շինծու զգաւորման զիւլը» թղթի վրայ:

1. ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 1)



ԵՒԳԵՆԻ ԵՒՏՈՒՇԵՆԿՕ

ՆԱՄԱԿ՝ ՃՈՆ ԾԹԱՅՆՊԵՔԻ

Սիրելի ձոն,
Հանենք մեր բանկոնը, ինչպես առաջ :
Եւ պարպենք ուխտիի եւ վտտեայի մեր
գաւաքները
Մեր կիներուն խոժոռ նայումքին տակ :

Դուն չեմ փոխուած,
Գիւզացիի ծանր մարմնով,
Հովէն ու ալֆալէն կարծրացած մորթով,
Թայկայի փայտահասի մորուֆով
Եւ ձկնորսի խորամանկ ժպիտով :
Դուն ծանօթ ես անպայման որտի՞նք բոլոր
քակարդներուն :

Հոս՝ Ռուսիայ մէջ,
Դիտումնաւոր ու կարծր անկեղծու-
քեամբ մը,

Դուն, խորամանկ ծեր գայլ,
Մեզի ըսիր քրէկ,

- Ի՞նչ կեցեր էք, երիտասարդ գայլեր,
ցոյց տուէք ձեր ակառանքը :
Ապա, ննչոզ լուսքեան մէջ,
Դուն սպասեցիր :

Այն ատեն, դեռատի աղջկան մը կողմը
դառնալով,

Հարցուցիր -
«Ինչո՞ւ տխուր ես,
«Տաւդ պատմէ ծերունի ձանիւն» :
Եւ չարաննի պզտիկ Թաթարը, նշածու
աչքերով,

Քեզի պատասխանեց -
«Տխուր եմ, պարոն Սթայնպէֆ,
«Որովհետեւ ռուսիկանութիւնը ձեռքէս
առաւ վարորդի արտօնագիրս» :

ձոն Սթայնպէֆ, սիրելի ձոն,
Քեզ կը սիրենք, որովհետեւ դուն
չոզոտըք չես :
Եւ չեմ ուզեր, այս նամակը գրելով
քեզի,

Ամբարտաւան եւ կեղծ շեշտ մը տանել :
Բարեհամբոյր սիրելի ձոն,
Ինձի չ'իյնար դաս տալ քեզի :
Տակաւին շատ բան ունիմ սարվելիք,
Ու սարվելիք՝ քեզմէ :

Բայց դո՛ւն մեզի սարվեցուցիր
Լուռ չմնալ :
Կը համարանկիմ քեզի ըսել, ձոն
Սթայնպէֆ,

Որ մենք լուռ չենք մնար :
Ու հիմա, լսէ՛ զիս -
Մենք հպարտ ենք մեր երկրով :

Բայց, մի՛ վախճար,
Մեր հպարտութիւնը բանաւոր է :
Մեր սեփական փտածներուն - ամէն
տեսակը կայ -
Ցոյց կու տանք մեր ակառանքը :
Եւ, հաւատացէ՛ք, ոչ քէ խնդալու
համար :
Երբեմն, գիտեմ, անոնք կաքի ակառանք
են,

Ակառանք, որ չեն խածներ :
Բայց կը հարուածենք կեղտոտները
ակառայով
Եւ մեր ակառանքը կը կարծրանան :

Պէտք է խածնել, ճո՛ւն :
Որպէսզի ակառները կարծրանան :



Այլ հեղինակներու «ցաւաւան ողկոյզները»
Միշտ առաջատար դիրքի վրայ են :
Բայց կրնա՞յ ըլլալ արդեօք որ քաւ
«ողկոյզներդ»

Անցեալին պատկանին :
Դուսն որ միշտ ցոյց տուած ես, քէ կրնաս
լսել

Մեր դարուն ձայնը,
Զե՞ս լսեր հեռուէն վիեթնամը,
Կանչերու ամբոյսը,
Որ եղբգնուտներուն մէջէն,
Նիւ ետքէն Մոսկուա,
Օգնութիւն կը կանչէ : Երեխայի կանչեր
«Մա՛յր, մա՛յր», կը մրմնջեն :

Մինչ քաւ սիրելի շունդ՝ Զարլին
Տախտակաւածը կը քերէ :
Բայց դուն, սիրելի ճան,
Սարսափի չե՞ս մատնուիր
Այն պահուն, երբ օգաշունները քոնչի
կ'առնեն

Երեխաները ուրակածելու
Իրենց օգանաւին մէջ գուցէ միտսին
Տանելով Զարլի շունը :

Այս օրերուն, ո՛հ, ձմեռը մեր ողբերուն –
Ոչ ոք իրաւունք ունի իր անկիւնին մէջ
Հանդարտ մնալու :
Եթէ քաղաքական մարդիկը կը ստեն,
Իրաւունք չունին քաղաքականութեան
մասին խօսելու,
«Բայց, – պիտի ըսես, –
«Ինչո՞ւ քաղաքականութեամբ զբաղիլ,
«Քաղաքականութիւնը, շատ լաւ գիտենք,
պղծութիւն է» :

Ո՛չ, ճան, ան քաղաքիւն է եւ պատիւ,
Երբ կը խօսի սրտին եւ մտքին :
Աշխարհի մէջ այսօր ոչ մէկ բան այլեւս
անձնական է,

Պայքարով ոնէ՛ մարդ լաւ մարդ է :
Ու ահաւասիկ որ կ'օվէլ, բանաստեղծնե-
րուն ամէնէն անձնականը,
Կը պատուէ Սպիտակ Տան հրատիրագիրը :

Ճանն Պաւլոս անշուշտ պայքարող մը չէ,
Ան քաւ կողմիդ վտիտ աղջիկ մըն է :
Զե՞ս լսել վիեթնամի իր երգը,
Ուր կ'արձագանգէ մայրերուն կանչը :
Անշուշտ դուք տէրն էք ձեր ծրագիրնե-
րուն,
Բայց սա ծուխը, որ կաւ գայ մեզի
անտաներէն,

Կակարդ չի՞ գոցեր արդեօք :
Ու չե՞ս լսեր Պոպ Տայլանը,
Միակ զաւակդ խոպտու կիթառով
Կ'անիծէ վարպետները պատելագրին :
Զե՛ս ուզեր, սիրելի ճան,
Ամբարտաւան ու կեղծ շեշտ մը առնել
Ու այդպէսով՝ նմանիլ ոմանց :

Բայց ըսէ ինձի, սիրելի՛ ճան,
Արդեօք մեր օրերուն շատ բարի՞
դարձած ես :

Լաւ հասկցիր զիս,
Այս տողերը, որ կը գրեմ,
Ազատտ խաղեր չեն :

Պարզապէս չեմ կրնար լուս մնալ :
Այո՛, մե՛նք երիտասարդ գայլեր ենք,
Իսկ դու՛ն՝ մեծ գայլ :
Ուրեմն ցոյց տուր ակառներդ,
Ճանի՛ն ակառները :

Ինձի համար զինադուլ չէ եղած եւ
պիտի չըլլայ,

Ես երիտասարդ գայլ մըն եմ
Եւ ոչ քէ եզ :
Ճան Սթայնպէք,
Հետեւեցայ խորհուրդիդ .

Երիտասարդ գայլը, որ ես եմ,
ցոյց կ'աւ տայ քեզի ակառները :

ԵԻԳԵՆԻ ԵԻՏՈՒՇԵՆԿՈ

ԵՐԿՈՒ ԳԱՅԼԵՐ...

Վիեթնամի պատերազմը տակաւին կը շարունակէ վոյջովի մարդկութիւնը: Սպառնալիք, արիւն, արցունք գուր կ'անցնին: Կողմերը կը պահեն իրենց կարծրութիւնը եւ մղձաւանջը կը սաստկանայ օրէ օր:

Այս տագնապը, բնական է, պիտի անդրադառնար ճանե գրագետներու գրչին վրայ: Բազմաթիւ գրագետներ արտայայտուեցան այդ մասին, բայց յատկանշականը եղաւ բանաստեղծ Եւուաշենկոյի եւ գրագէտ Սքայնպէյի փոխանակած մասնակներու պարագան: Երկու մասնակներ եւ տրամագծօրէն մերիտէ երկու մտայնութիւն:

«Մտալինի ժառանգորդները» ձաղկազ երիտասարդ գայլը, կը թափ, թէ բաւական չափ ժառանգած է Մտալինին, շէտ մեզի հետ կամ մեզի դէմքի ոգիով շարունակ ակառայ ցոյց կու տայ, իսկ ծեր գայլը, առանց խուճապի մտահուելու կը քննէ կացութիւնը, ու պատասխանատուութեամբ կը մտնայ այդ ցաստ եացքին: Բանաստեղծ Եւուաշենկոյն կողմի մը մարդն է, իսկ գրագէտ Սքայնպէյը կեցած է իր կողմէն վեր ու զիմացի կողմէն վեր, ու մտքդիպի խզմտաճէ մերկայացնող գրագէտի քարթը կայունով կը մտնայ երեւոյթներուն: Գայլերու կռիւ է, ու գայլերու կռիւին մէջ ծերերը չեն սր կը պարտուին ընդհանրապէս:



ՃՈՆ ՍԹԷՅՆՊԷՐ

ՆԱՄԱԿ ԵՒՏՈՒՅԵՆԿՈՅԻ

Շատ սիրելի ժենիւ,

Կարդացի հատուածներ քերթուածէք, որ արտասպառած էր Նիւ Եարք թայմսի մէջ: Ձեզ կընար դատել թարգմանութեան արժէքն ու հարգատուութիւնը, բայց ուրախ եմ այն յարգանքին համար, որ ցոյց կու տաս ինծի հանդէպ:

Բանաստեղծութեանդ մէջ, ինձէ կը պահանջես ծառանալ Վիեթնամի պատերազմին դէմ: Գիտես, թէ որ աստիճան կ'ատեն պատերազմը, բայց Վիեթնամի պատերազմին հանդէպ կը տածեն մասնատր եւ անձնական ատելութիւն մը: Ի՞նչ եմ Ձինստանի կողմէ ներշնչուած այս պատերազմին: Ձկայ ամերիկացի մը, որ համախո ըլլայ անոր: Բայց, շատ սիրելի բարեկամ, կ'ուզես, որ ես դատապարտեմ այդ պատերազմին կէսը, - կէսը՝ որ մերն է: Քեզմէ թախանձա-

զին կը խնդրեմ միանալ ինծի՝ դատապարտելու համար ամբողջութիւնը:

Ատահաբար չեմ խորհիր, թէ մեր օղորտունը թողէ կ'առնեն՝ ճերեխաները ոմբակոծելու» համար. կամ մենք ուուր եւ պատերազմական իրեղէն կը զրկենք հոն, անմեղ քաղաքացիներու դէմ զործածելու համար:

Վիեթնամը 1953-ի արեւելիս Պերլինը չէ, ոչ ալ 1956-ի Պուտափէշտը կամ 1959-ի Քիպէթը:

Ինծի չափ դուն ալ դիտես, թէ մենք կը ոմբակոծենք քարիւղի մթերանոցները, փոխադրական միջոցները եւ այն մեր զաւակները սպաննելու համար: Ու գուցէ դուն ինձմէ յաւ դիտես, թէ ուրիշ՝ կու դան ալ զէնքերը եւ ալ զարիւղը: Անոնց վրայ չինարէն կամ ուսերէն դրուած է:

Կը յուսամ, պիտես նաեւ, որ եթէ զէնքի ալ առաջումները չըլլային, մենք Վիեթնամ պիտի չզտնուէինք: Եթէ եղածը վիեթնամեան ժողովուրդին զանազան հատուածները իրարու հակադրող ներքին կռիւ մը ըլլար, անկասկած ալ երկիրը պիտի չըլլայինք: Բայց պարսպան ալ չէ. դուն ալ զքան միամիտ չես ատիկա անգիտանալու համար:

Այս պատերազմը զործն է նախազահ Մասի, որ զայն յղացած է եւ կը վարէ քուխներու ետին: Այս պատերազմը կը մղուի ըստ Փեքինի խորհուրդներուն եւ մահացու զէնքերով շնահանօրէն կը մատակարարուի զայն նիւթող օտարներու կողմէ: Բարեկամ, ա՛յս եւս դատապար-

տենք, բայց նաեւ աւելի հեռուն երթանք: Միասին կիրարկենք աւելի ազդու ծրագիր մը, քան պարզ ամբաստանութիւն մը:

Գեղմէ կը խնդրեմ ի գործ դնել ամբողջ ազդեցութիւնդ, որ շատ մեծ է, համոզելու համար Հայրենակիցներդ եւ ձեր կառավարութիւնը ու նաեւ բոլոր անոնք, որ խորհուրդ կ'առնեն Խորհրդային Միութենէն, որպէսզի դադրի Հիւսիսային Վիեթնամի վրայով կատարուած մահուան զէնքերուն տարանցումը, որ կոչուած է զործածուելու Հարուին դէմ:

Գալով ինծի, ամբողջ կարելիս կ'ընեմ, համոզելու համար կառավարութիւնս, որ Հարաւային Վիեթնամէն քաշէ իր զօրքերն ու զէնքերը, հոն ձգելով միայն դրամ եւ վերաշինութեան օգնող սպասարկութիւններ: Ու դիտես, ժենիա, որ եթէ դուն կարենաս քու պարտականութիւնդ կատարել, ես անմիջապէս եւ ինքնաբերաբար կը կատարեմ ի՛մ պարտականութիւնս:

Բայց ատիկա նոյնիսկ անհրաժեշտ չէ պատերազմը կեցնելու համար: Եթէ կարողանաս համոզել Հիւսիս-Վիեթնամը, որ բարեմտօրէն յօժարի բանակցելու, ոմբակոծումները վրայկենարար կանգ կ'առնեն: Թնդանօթները կը լռեն եւ մեր սիրելի զաւակները տուն կը դառնան: Այսքան պարզ է, սիրելի բարեկամ, կը վստահեցնեմ քեզ, այսքան պարզ: Կը յուսամ օր մը Հանդիպել քեզի եւ շնորհալի կնիքը՝ Կալիային:

ՃՈՆ ՍԹՈՒՆՊԷՐ



ՀԱՏՁԵՆՏԻՐ

(ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐԵԱՆ)

ՄԵԼԱՏՆ, 1966

Ուրախութեամբ ու նսեւ... վախճումը զըրազմանաստուանին կը վերցնեմ կապոյտ ու ճերմակ այս նասորը: Յաղթանակի կոթո՞ղ մը, թէ՛ շիրմագար մը կը տանի՞մ տուն: «Ո՞ղջ» է երկրորդ այնպիսի մարտն առաջ յայտնուող եւ անոր ընթացքին իրազորմուող ճերմաման յուսաբացի նամակի թանաստեղծը, թէ՛ «մահացած» ի սպառ...

Որովհետեւ՝ սկզբնական շրջանին (1937-էն սկսեալ) որոշ չափով ինքնայատուկ խառնուածք, ուրիշներէ զատորոշուող սն, քնարական քեջութիւն եւ երաժշտական հասկացողութիւն ցուցաբերող այս «երթողը» երկար տարիներէ ի վեր բանաստեղծի իր դէմքը պահած է թաւրոնի վարդուրի ետին, առանց քերթողական իր վատասակը լրացնելու, ծանրացնելու մասնազուլթեան: Գրական իր կոչումը, թէ՛ զրականութեան հակոտնեայ շահագրգռութիւններ տարած են զինք թեմին:

Հասորին առաջին մասը տրամադրուած է հայրենիքին, անոր բնութեան ու հողին վրայ նոր աչք բացող մարդուն, հայրենական պատերազմի արձագանգներուն եւ մանկական այնպիսի երգերուն: Էլ առ էլ, ու իրարու հետեւ կը տողանցեն այդ քերթուածները, հանդիսազրելով զիրենք արուեստի ճակատամարտի դաշտը նեւտողին նուանման եւ յաղթանակի կարեւորութիւնները:

Անկէ բանէ առաջ՝ ՖՖշալար Քնարակիր մըն է Գուրգէն Բորեան, անկասկած: Բայց հազիւ աչքը բացած, իր ու շուրջի մարդոց հոգիներու խորհուրդն ու խորութիւնները քաղաքեմած՝ վաղուհաս պատերազմը եկաւ հաւանարար դիմաւոր պատասխանատուն, որ այս քերթողը լքէ քաղցրահնչիւն իր քնարը եւ սկսի փշիչ

կռուի պղծէ փոզ, որպէս գայտարի մի տրուադուր:

Սակայն տարբային վտարկումները, արեան հեղեղները եւ վատոյի ծուխի ամպտղայտերը անհաղորդ են իր խառնուածքին: Ու պատերազմի օրերուն՝ դարձեալ Զինուորի արտէն դէպի հայրենի տունը, իր վերադարձին սպասող մայրը, օրորոցի մէջ հօր յիշատակով քնացող մանուկը ծորող կարօտն է որ յաջողութիւններու տոկոս մը աւելցնել կու տայ քերթողին, քնարական իր վաստակին վրայ:

Գուրգէն Բորեանի հայրենասիրութիւնը կը ասրբերի սովետահայ բազմաթիւ այլ բանաստեղծներու հայրենասիրութենէն այն բանով որ՝ հայրենի շէղ ընութեան մէջ ինք խոնդափառ է նոր մարդով, նոր սերունդով: Կայիերը իզամ է անցնելին հետ, ու ապագան կը գիտէ Կորմիր Ասողի սուղութեամբ միայն:

Ասկէ կը բխի թերեւս մանուկներու հանդէպ իր սերն ու խանգապատանքը, դառնալով զուլայ այն սկնադրերը, որ իրմէ մեր նորագոյն գրականութեան կը բերէ՝ մանկական բանաստեղծութիւններու յաջողագոյններէն մի քանին:

Գայ սակայն շուրջ մը, որ կամայ թէ ազամայ մտացութեան կու տայ Գուրգէն Բորեան, արահետ մը որ սակայն աստղապսակ բարձունքներու կրնայ տանիլ քնարակիր մը: Որ կը քակուի մարդկային հողի խորերէն, կը կարէ անշուշտ կեանքի տարածութիւնները, կը դողայ անխմանալի գեղեցկութիւններու, անչափելի արտմութիւններու հանդիպումին եւ կ'ընդհուղի արեւոտ մը, ժամանակէ խողակը պատասանի, նիւթի (սիւթէ) էութեան զարկերով դաշուտրուած ու երաժշտականացած, որ կը համակէ ընթերցողը իր անհորիզոն տարազով եւ տարած խորհուրդով: Կը դառնայ վերացական գեղեցկութիւն եւ քաղցրահունչ երաժշտութիւն՝ մեկնելով կեանքի զոյականութենէն:

1937 թուին՝ Վնուսները Արշալոյսային դողարիկ բանաստեղծութեամբ Գուրգէն Բորեան դուած էր այդ ուղին եւ 1965 թուին լոյս ընեա-

յամ շնորհակցութեամբ զերթուածով կը թուի թէ չէ մոռցած զայն: Բայց ափսոս որ այս երկու թուականները իրարմէ բաժնող ժամանակակիցներն չստ զիչ անգամ հետեւած է անոր:

Տեղ ժը կը գրէ ինք ինքնազատահ:

«Ամէն անգամ, երբ գրիչը իմ ձեռքում
 Նրդ կմ գրոււմ, միտք եմ անում, անքնում,
 Թում է թէ մի գլգլամ աւ մտքուր
 Ջիմը տունակ է իմ սրտի մէջ խոխոբում»:

Կը թուի իրեն, բայց ընթերցողին՝ ոչ մէկտ, զժրտաբար: Այն պահուած երբ անը- շընչուած բանաստեղծը հարաւորով կը հպի զնոր զարձակ իր սրտի լարերուն՝ ընթերցողը կը զգայ իր սրտին մէջ ալ զիչլան ասուակին հոտումը, ու անոր շինջ հայելին կը զոգզոգանէ իր ալ հո- ղիին ցուանկարը:

Շուր այն է որ՝ բանաստեղծութեան հան- ղէպ անհրաժեշտ խոր հաստքը, անչեղ հետե- ւողականութիւնը կը զսկսի բանաստեղծներու մէջ հոյիին մէջ իր սեղը ունենալու մէկէ տակի փաստը ցոյց տուած այս գերթողին:

Կեանքի մէջ որքան կ'ուզէ պաշտամունք թող ունենայ կարմրածափ զրօշին հանդէպ, ե- թէ այդ է իր համարումը:

Այլ ոք կրնայ տրդիչի իրեն որ հայրենիքի գովերգութեան աւ համարզին մասնակցի եր- բեմն, առանց պարտականութիւն սեպիլու, ու բովհետու մասնաւորաբար Յովհաննէս Շիրազի եւ Պարոյր Սեւակի պէտք եղածէն աւելի իրենց ու- ժերը կը սպասեն արդէն այդ բեմին վրայ: Մա- նուանը որ Գուրգէն Բորեան արժանաւորապէս իր լուսան ձգած է այդ զանձարանին մէջ՝ Վե- բովհանի Մուսրէրը խորագրանդակ իր գերթուա- ծով:

Իրեն համար, ամէն բանէ աւելի, բանաս- տեղծութիւնն է զերբի հողը արդաստուրժան, զո՛ւտ, հարուխ բանաստեղծութիւնը:

Կը կարծենք որ միշտեւ հիմա տուած յա- շողութեան արդարացիները կրնայ վերածել վերը- նական յաղթանակներու, եթէ չըրածնու շտայ այն ուղիին, որ թերեւս զիչ ժողովրդական, զիչ հաստեղծութիւն, բայց անցնելով Արշալոյսի Մաքի- ներաւ կանայ լուսէն, մազլիով ժայռոտ բար- ձունքները՝ կը ստանի անձանութեան կապոյտ կատարներուն:

Յ. Գ.

ՍՈՍԻՆԵՐԸ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Սվաւում եմ սոսիները
 Սաւիկ-փոսիկ,
 Սասիները երազում եմ
 Առտի եզրին,
 Ի՞նչ եմ խօսում, ինչ եմ ասում
 Այս մտք յաւիմ,
 Սո՛ւս... խում եմ երգը նրանց
 Լոյսի մասին...

Սվաւում եմ սոսիները
 Առտի եզրին
 Շնչում եմ այդպէս յուշիկ
 Արշալոյսին,
 Տերեւները փսփսում եմ,
 Ի՞նչ անւոյ է,
 Փսփսում եմ, սգումում եմ
 Բացուող լոյսին:
 Սոսիները բացուող լոյսին,
 Սո՛ւս... խում եմ
 Սիրոյ մասին...

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՒԸ

Աչնամ համու դիմաց կանգնել է մերկ կնիք...
 Կանգնել, օրօրում է, տխուր նրբում է նա:
 Մերկ է կնիք... միայն մի տեսիլի վերջին
 Ամուր, ամուր գրկել ալ կտալի է նրան:
 Ու բում է, թէ ծեր անտառը հողմանք,
 Որ համուն է տուել տերեւները բոլոր,
 Հասալում է, կանչում այս տեսիլի համար,
 Որ փարուել է ճօրը այնպէս տխրագործ...
 Այս տեսիլի, որ կեանք ալ տար է անձնում
 Անգամ իրեն վերջին, վերջին, վերջին շնչում...

ՆՐԱԺԵՏ

Վերբի մման բացուած մի մխացող ուղի,
 Մշտններում կորած մի ճամապարհ...
 Մրճած երկինք ալ հող... Եւ արտասուող ուղի...
 Եւ կարտից խանձուած մի տապալար:
 Մի լիտապար՝
 Նման արծաթի կտորած քեւի,
 Ուսին՝ լացից քրքուած օեւ յափնչի:
 Մրճնացող մի դաշտ՝ ակաջի ինչ-որ կանչի
 Եւ հեռացող, մարդ մի ճամապարհ...

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐԵԱՆ



Յունիստոյի Հրատարակութեամբ՝
Լոնտոնի մէջ լոյս տեսած է ամերիկահայ
զբոջ Լեւոն Ջ. Սիւրճեանի անգլիերէնի
վերածած Վասմայ ծանրքը:

Նոյն Հրատարակչականը երազրած
է լոյս ընծայել Սիւրճեանի կատարած
միւս թարգմանութիւնը՝ «Հայ ժողովուրդ-
դէ Հեջիաթները»: Իսկ Իտալիոյ Հրատար-
ակչականներէն մէկը մօտ ատենէն եւ
400 հազար տպագրանակով Հրատարակ պի-
տի հանէ նոյն հեղինակին Հանրածանօթ
զորքը՝ «Տեղի կը Հարցնեմ, Տիկիները եւ
Պարօնները»:

Վասմայ ծանրքու Հրատարակու-
թեան առիթով, Լոնտոնի «Փայնզ» թեր-
թը իջ գրական յանդիւնածին մէջ հետեւ-
եալ տողերով ողջունած է Սիւրճեանի
աշխատանքը: Հետաքրքրական է նաեւ
նոյն թերթին կարծիքը, Տեղ-Ղուկասեանի
Հրատարակած Հեջիաթներու Հաւաքածո-
յին մասին:

«Գ. Սիւրճեան, իր պատմական հիւանայի
ներածանկանին մէջ կը նշէ, թէ Վասմայ ծանրքը
միայն թերթէ թերթ անցնելու է մինչեւ 1870-
ական թուականները, երբ Գարեգին Եպիսկոպոս
Սրուճանեանց առաջին անգամ գտաւ եւ հրա-
տարակից մերկայ փոփոխակը...»

Մենք պարզազօյն ուրուագիծը առիճք
լայնորէն խնամուած եւ մանրամասնուած դիւ-
ցազնավիպին, ինքնուրոյն սոճով ու ռեփակում
յուզաշխարհով օժտուած է ձոն, երբեմն չիմ կը-
տակարանէն եւ երբեմն ալ արարական Հագարու-
մէկ Գիշերներէն պատահական արձագանգներ
կան: Օրեմերգութիւններէն ումամբ, որով կը սկսի
ամէն դրուագ, եւ երգերն ումամբ շատ յագիշ
են, մասնաւորաբար Գաւթի հրատեղաի խօսքը
իւր հայրնիքին: Ուրիշ մտեր կրնան շին մը
անկերթք բարի...»

Թարգմանութիւնը կատարուած է ամերիկ-
եան անգլիերէնով, որ շին մը տարրտի տպաւո-
րութիւն կը բողու անգլիացի ընթերցողին վը-
րայ...: Սմէն պարագայի մէջ, երկատիրութիւնը
աշագրտու նուաճում մըն է եւ մեր երեսակայա-
քեան առջեւ կը բամայ տարօրինակ, ձողցումց
ու շքեղ աշխարհ մը:

Ուշագրտու է նաեւ սիկիմ Ղուկասեան —
Վիլլայի հրատարակած ժողովրդային կեֆիաք-
ներու հաւաքածոն, որ իր ընտրածին իսկ առ-
շինէն նաւագ միասնական գործ մըն է, աւր ամ-
փոփուած են աներկիտայ համայններու առ-
ջին եւ երկրորդ սերունդներուն կողմէ պատմը-
ւած պատմամերը: Օգտակար նոյնպեմնի մը
մէջ ուրուագծած են այդ համայններուն գար-
գացման եւ Հայաստանի պատմութիւնը՝ Գրի-
տաւտ ասաց Գ. դարէն սկսեալ: Հեֆիարմերը
գեղունկ ատորայ կեանքէ դրուագներ կը ներ-
կայացնեն եւ կենդանի պատկերներու տմրողա-
կան եկտօ մը կը ցուցնեն:

Հաւաքածոն պատշաճօրէն դասաւորուած է
եւ օժտուած խնամուած ներքերով, յանուած-
ներով եւ բազդատական ուտամնախրութեամբ,
դրգապատճառներու մտքն տկնարկներով իւայլն:
Կարճ ալ գրաւիշ նկարագրութիւններ յանի այն
աններու մտքն, որոնցմէ առնուած են կեֆիաք-
ները: Գիրքին ընթերցումը հանկի է եւ պտտօ
է յուտայ, որ սիկիմ Ղուկասեան — Վիլլու աւրիշ
հատար մըն ալ պիտի հրատարակէ իր հաւաքած
նոյնպատմամներուն, հաննուկներուն եւ ալ
նրիքերու մասին:

Կղճարներ

«Ապացուցելու համար բանաստեղծական շեշտուած անհատականութիւնների բացակայութիւնը բերենք մի օրինակ».

ԱՄՐԱՆ ԳԻՇԵՐ

Ես ձեր տան ճամբան դեռ չեմ մտացել,
Ու երբեք, երբեք այն չեմ մտածայ,
Այդ ճամբան կարծես առուակ է դարձել
Ու սրտիս մէջ է ակունքը նրա:

Իջել է ամբամ քովիչ մի գիշեր,
Շուշանի բայր է հանդերձից գալիս,
Բարբաժած անոս կարօտ ու յաշիբ
Ինչ-որ քոչուսն է քփերում լալիս:

Լուսինը երկչուտ կարապի նման
Անպերի լեռվ մեղմորէն սահեց,
Ջորաւար մի ձեռք անոսն ու անձայն
Սրկնային քանի լոյսերը վառեց:

Հարագատ աշխարհ՝ ազրիւր ու առու,
Որտա ու անձրեւ ու ցիւք ծիածան,
Ու հիմա կանգնած այս հեռու հեռուս
Կարօտիս քեռակ երամներ ոնցան:

Ու եթէ այս մէջբերումից յետոյ Սերո Անտոնեանի նման վերջում կրկնենք առաջին քառատողը, կը զաննայ ոչ վրաս մի ոտանաւոր, որի՝ Քուսանեանին բառափոխելով՝

Ամէն տաղում տասն են վանկերը
Ու դեռ՝ աղբատ չեն քուրմ յանգերը...

Ընդհանրապէս գրողատական յողուածում նման երկար մէջբերում մի՛ բանաստեղծից չի խրախուսում եւ կարիք չկայ, սակայն մենք թող շուրջ մեզ այս շոտայութիւնը այնքան, որքան վերեւ բերուած չորս քառուկները պատկանում են ո՛չ թէ մէկ, այլ չորս բանաստեղծների գրչին: Անհատաւոր է, բայց փաստ է: Առաջին քառուկը պատկանում է Մուրէն Ուշակեանին, երկրորդը՝ Սերո Անտոնեանին, երրորդը՝ Մկրտիչ Գրիգորեանին, իսկ չորրորդ քառուկը մենք վերցրեցինք Սիմոն Յովհաննիսեանի գրքոյկից...

Ի՞նչ է ապացուցում այս՝ այսպէս կոչուած գրանաստեղծական մոնոտոմը: Մի՛ բան. այն, ինչ կոչուում է բանաստեղծական շեշտուած անհատականութեան բացակայութիւն, առանց որի՝ շեշտուած անհատականութեան՝ խօսք չի կարող լինել ո՛չ բանի, ո՛չ ստեղծագործութեան մասին»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱ

Մեր արտադրած այս Հետաքրքրական «մոնոտոմը» կը պատկանի միշտ Հետաքրքիր ու Հետաքրքրական Մահարիին:

Իր լափածոյ եւ արձակ գրականութեան կողքին՝ աւելորդ է բռնել, որ Մահարին դէժը է նաեւ քննադատական մարզին մէջ, պաշտօնական քննադատներուն համազօր եւ երբեմն աւելի ու՛ մեղ խօսք ունի եւ տաղնապ:

Ահագանդի շէտ մը ունի Հասարակարգի գրողներու Եւրոպայի համաժողովարի նախօրէին իր գրած ու քովի «մոնոտոմը» բովանդակող գրութիւնը: Արդարեւ, ու՛ շարունակ է Մահարիի «մոնոտոմը», որ է զեպ, մեզի յիշեցուց նման սմին ուրիշ մոնոտոմ մը, որ կատարուած էր սակէ եօթ-ութը ասրիներ առաջ, սովետահայ բանաստեղծութեան նուիրուած դասախօսութեան մը ընթացքին: Դասախօսը կարգաց իր մոնոտոմը ու սրահը խելօք-խելօք մտիկ ըրաւ: Դասախօսը յայտնեց զուգահեճք ու սրահը ցնցուեցաւ: Դուք կը զտնէք այդ մոնոտոմը այս էջին վրայ: Երկու այս մոնոտոմերը ունին միայն պզտիկ տարբերութիւն մը իրարմէ, մինչ Մահարիինը կազմուած է նոր հրատարակութեան տղոց թոթովանքներէն, միւսը, ընդհակառակն, իր մէջ կը հարուէ եօթը ասրերը չոր-

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՆԴՈՒՄ

ԿԱՆ ՄՈՆՏԱԺ

Մանկերու հրապարակ իշխանները,
Էլենիներն լուսեղ եւ ստալի-
նաբաց անդուշ հարկատուներին
մինչեւ ետ'ը նորերը:

Իբ կարճ, այլ շատ Ծանօթ
աւ շատ յատկանշական մէկ ու-
րելի դրութեան մէջ՝ Մահարին
ժատը նոյն վէրջին վրայ զեն-
լով, բանաստեղծական շեշտուած
անհատականութիւններու ըստ-
հարութեանը շեշտելով՝ կը գը-
րէր.— «Գալիւք սերունդները կա-
րող են մեզ հաւատել ի մի եւ
բոլորիս տալ մի անուն-ագգա-
նուն.— Սուսանմարտի Բմբուլ-
բլբուլեան.—

Կարգացէջ շորս տարբեր սե-
րունդի պատկանող ութը տար-
րեր բանաստեղծներու, ութը
տարբեր բանաստեղծութիւննե-
րէն կազմուած քովի ժողովուրդ
ու այն աստեղ զիբութեամբ կը
ըմբռնէջ Մահարիի Սուսանա-
բուլ Բմբուլբլբուլեան տաղնա-
պը:

Աւելորդ է այս ժառանգ եր-
կար խօսել: Այս ժառանգ շատ
խօսուած է արդէն: Կուզէինք
աւելցնել միայն, որ Մահարիի
փոքրը ազդու փոքր մըն է, ու
մենք վստահ ենք, որ եման
հարուածները աւելի արդիւնա-
ւէտ կը դարձնեն գրականութիւ-
նը, զան քաղցրախօս քաղցրեկ-
ներու քաղցրական քաղցրեկ-
րը:

Հովն ինձ ուզեկից՝ շրջում եմ հպարտ
իմ հայրենական ազատ դաշտերով,
Սարից մինչեւ սար փռուել է մի արտ՝
Որպէս ոսկեշող այեծածան ծով:

Կամչում են ձորերն ու ջրերը ինձ,
վառ ծաղիկներն են չորս կողմից բուրում,
Եւ ես անսահման, անյագ կարօտից
Մունկի եմ գալիս եւ հողն համբուրում:

Իմ սուքերիս տակ, անտակ անդնում,
Գետն է շառայում ձայներով վայրի,
Նրա շառայն է իմ շուրջը թնդում,
Ու սրճագանգուում խորքերում այրի:

Ծաղկի բաժակը արծաթով էր լի,
Ճերմակ թերթերն են յուլումեով ցողած,
Թաց ձորայանցի կաժանով մեղիկ
Եզնիկն է փայտել՝ հետքերը թօղած:

Յուզում է սիրտս մի անուշ կարօտ՝
Երբ որ անցնում եմ անտառի փեշով,
Թոււմ է, թէ դու նստած ես ինձ մօտ
Ու համբուրում է մեզ գեփիւտը գով:

Տեսնում եմ կրկին լոյսով ողորդած
Մեր գեղատեսիլ դաշտն Արարատեան,
Ծեր նահապետին՝ ամպերին թիկնած,
Ճակատին շաղը յաւիտեանութեան:

Ուզում եմ նորից տեսնել ու զգալ,
վերապրել նորից իմ կեանքը անցած,
Թէ հեշտ եմ անցել, թէ դժուար անգտմ,
Հիմա ամէն ինչ թոււմ է պայծառ:

Այն, ինչքան լաւ է ապրել ու սիրել
Այս խոր երկնքի, այս աստղերի տակ,
Այս չնաշխարհիկ կեանքին նուիրել
Երգ ու երգանք, աւիւն ու վաստակ:

POUR TOI MON AMOUR

Je suis allé au marché aux oiseaux
Et j'ai acheté des oiseaux
Pour toi
mon amour

Je suis allé au marché aux fleurs
Et j'ai acheté des fleurs
Pour toi
mon amour

Je suis allé au marché à la ferraille
Et j'ai acheté des chaînes
De lourdes chaînes
Pour toi
mon amour

Et puis je suis allé au marché aux esclaves
Et je t'ai cherchée
Mais je ne t'ai pas trouvée
mon amour.

ՔԵՋ ՀԱՄԱՐ, ԻՄ ԱԵՐ

Ես գնացի բոլորանոցի շուկա
Եւ քոյուններ գնեցի
Քեզ համար,
Իմ սէր

Ես գնացի ծաղիկների շուկա
Եւ ծաղիկներ գնեցի
Քեզ համար,
Իմ սէր

Ես գնացի դարբինների շուկա
Եւ շորաներ գնեցի,
Ծանր շորաներ
Քեզ համար,
Իմ սէր

Յետոյ գնացի ստրուկների շուկա
Եւ քեզ փնտնեցի,
Բայց քեզ չգտայ,
Իմ սէր:

Վերջերս, Հայաստանի մէջ, բաւական թիւով գրքոյկներ լոյս տեսան, որոնք նպատակ ունին հայ ընթերցողին ծանոթացնելու միջազգային հայակ վայելող ժամանակակից գրողները:

Այդ գրքոյկներէն մէկը կազմուած է Փրանսացի բանաստեղծ Ժաք Փրէվէրի երեք հատորներէն եւ կը բաղկանայ Յէ էշերէ: Քերթուածները Քարգամանծ ու Հեղինակը ներկայացուցած է Փրանսական արդի գրականութեան ծանօթ Ալեքսանտր Թոփչեան:

Քարգամանջական արուեստը դիւրին արուեստ չէ եւ Հեղինակի մը հաւատարմի մեայը գծուարագործ ինքիներէն մէկն է Քարգամանջին: Թոփչեան ընդհանրապէս պահած է հարազատութիւնը, բայց երբեմն կամայական վերաբերում ցոյց տուած է գործին հանդէպ: Մեր տուած երկու նմոյշները բաւարար չափով կը վկայեն կատարած ուշադրանքին նկատմամբ յայտնուած կարեւորներուն մասին: Առաջինը լաւ է բոլոր մեծանշան: Երկրորդը լաւ չէ սակայն: Տեղին չեն Թոփչեանի կատարած զեղչերն ու ոտուածները: Սովորական բաներ յապաւելը քննադատի գործ է, Քարգամանջի գործ չէ: Մնաց որ, ճնայնաբաններն բուն արժէքը մարդիկ կը գտնեն իր սովորական, անհրաժեշտ բաներ ըսելուն մէջ: Յրանայինք մեզի շափ դիտեն խոտութեան արժէքը արուեստին մէջ, բայց հոյն արժեքաբանքով չեն մտնուար Փրէվէրին, կը մտնեն անոր տարբեր անկիւնէ մը: Սովորական խորք մը կրնայ ունենալ այս քերթուածը, բայց փաստ է, որ Փրանսացիները անց առած են անոր իրենց լեզուին յատկացուած արդի գոտարբերուն մէջ: Այս պիտու՞մ բան մը կը նշանակէ: Հաւատարմի մեծ ընթերցողներուն...


DEJEUNER DU MATIN

Il a mis le café
 Dans la tasse
 Il a mis le lait
 Dans la tasse de café
 Il a mis le sucre
 Dans le café au lait
 Avec la petite cuiller
 Il a tourné
 Il a bu le café au lait
 Et il a reposé la tasse
 Sans me parler
 Il a allumé
 Une cigarette
 Il a fait des ronds
 Avec la fumée
 Il a mis les cendres
 Dans le cendrier
 Sans me parler
 Sans me regarder
 Il s'est levé
 Il a mis
 Son chapeau sur sa tête
 Il a mis
 Son manteau de pluie
 Parce qu'il pleuvait
 Et il est parti
 Sous la pluie
 Sans une parole
 Sans me regarder
 Et moi j'ai pris
 Ma tête dans ma main
 Et j'ai pleuré.

Jacques Prévert

ՆԱԽԱՃԱՇ


Նա սաւ սարճը
 աւաւ կարբ
 շաբարբ
 խառնեց դգալսվ
 իմեց
 դաստրկ բաժողը իր սեղում բազեց
 Աձիսս
 աւաւ ծխախտը
 ծխի օգակներ բազեց
 մոխրամանուք մոխիր բազեց
 Աձիսս
 ստանց հայելու
 աւաւ գլխարկը
 տնճրեւաթիկնոցը
 որովհետեւ ամօրեւ էր գալիս
 Աձիսս
 ստանց իճճ հայելու
 գնաց ամօրեւի սակ
 հակ ես
 գլուխս առաւ ճեւեթիս մէջ
 աւ լացեցի:



Քանդակագործութեան այս նմուշը, որ կը կրէ «Լիբանանցի ընկեր» անունը, գործն է ասպարէզին նախնուած երկտասարդ արուեստագէտ Եւզինէ Նիփիճեանին:

1982-ին Պէյրութի Վալլըրի ֆէկաշի մէջ իր ստալին ջուշանդէտը սալէ ետք՝ Եփրեմեան մեկնեցաւ Փարիզ, ու Գեղարուեստից վարժարանին մէջ հետեւեցաւ նկարչութեան եւ քանդակագործութեան: Ուսանողական տարիներու ընթացքին, Եփրեմեան մասնակցեցաւ զանազան ջուշանդէտներու, իսկ այս Մալիսին ՎՔլապ տէ 4-Վանշի մէջ տուաւ Փարիզի իջ ստալին ջուշանդէտը, լաթն հետաքրքրութիւն ստեղծելով շուրջը:

Քանդակագործունէին այժմ կը գործուի Պէյրութ եւ կը պատրաստուի ընթացիկ ամսոյն տալ նոր ջուշանդէտ մը:



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՄԱՍՏԵԱԿ

Նիւ Եսբէի Հայ Գրականութեան Բարեկամներու Միութիւնը. այս վերջերս բոլորած է իր հիմնադրութեան տասնամեակը: Այս ուրախ առիթով, Միութեան վարչախումբը որոշած է յառաջիկայ Հոկտեմբեր 16-ին մեծ հաջկերոյց մը կազմակերպել Նիւ-Եսբէի Սքեյքլը Հիլքըմ սրահոյի շէնք սրահին մէջ, պատշաճ յայտագրով:

Հայ Գրականութեան Բարեկամներու Միութիւնը, ամերիկահայ տաճկեմ գործունեայ մշակութային Միութիւնն է: Իր հիմնադրութենէն ի վեր՝ հաւատած է բազմաեւրոպայեան հայերէն եկեղեցիներու առաջնորդութեանը և զանազան արհեստագործական կազմակերպութեանը: Ամերիկայի գրականութեան զարգացմանը և միութիւններուն:

Նմանապէս՝ կազմակերպած է բազմաթիւ դասախօսութիւններ, իստիլու հրատարակելով ամերիկահայ ծանօթ գրողներ, մտաւարականներ և արուեստագէտներ: Կազմակերպած է նաև արտոյ գրագէտներու յոյնիսկան կամուրջներ եւ հանգուցիկ գրողներու և մտաւարականներու նուիրում յիշատակի երկունք:

ՏԱՂԱՆԿԱՒՈՐ ԶՈՒԹԱԿԱԼԱՐ
ՍԱՐԳՍԻՍ ԽԱՐՏԱԿԱՆ

Լիբանանահայ տաղանդաւոր լուսակահար Սարգիս Խարտական, Յունիսի վերջերքը, Նիւ Եսբէի մէջ, փայլուն յաջողութեամբ աւարտած է Հոյակաւոր վարպետ իման Գալստեանի լուսակալի կատարելագործման դասընթացը, ստանալով բարձրագոյն նիշը և արժանանալով մասնաւոր գնահատանքի: Նմանապէս վկայուած է ժողովուրդային «Պէտլըր Կիւրթի» տիպոգրաֆ ու բարձր նիշերով: Խարտականի բացառիկ կարողութիւնները գնահատելով՝ իման Գալստեան զօրն յանձնարարած է անոր համար իր անձնական համարակցութեամբ անձնական օգնութիւններ և հարկեր զանազան հարկերով:

Բարձր և ամերիկեան համարաւոր «ՍԵՐՍԵՆ Սինֆոնի Օրգանիզացիոն, ուր ընդունուած է որպէս առաջին լուսակահար: Ան դասախօս պետի ըլլայ նաև «Պոսթիլ Քոնսերվատորի» Կիւրթի Նրաժշտանոցին:

Տաղանդաւոր արուեստագէտը՝ որ ներկայիս 26 տարեկան է, Պէտլըրի Գեղարուեստից վարժարանը աւարտելէ ետք, մեկնած է Փարիզ, վեց ամիս ետք, անցած է Տանըմարգու և Երեք տարի աշակերտած՝ անուանի վրոֆեսէոր Թիւմաիի՝ արժանանալով բարձր գնահատանքի: Փրոֆեսէորէն ստիպուած է նաև կոր աղիւղով նըւազիլը, որուն զապանիքին տիրացողները մասի վրայ կը համբուին այսօր:

1960-ին, Տանըմարգայի Արքայական Պալատին մէջ փայլուն նուագահանդէս մը տալով՝ արժանացած է բացառիկ պատիւներու: Տանըմարգիան Թերթերը այդ տարիէն զբաղուած են:

Կերակներ կ'ելլէին տաղանդաւոր լուսակահարին մասնակցելով: Խարտականի հիշելիք տաղանդին միայն է իր անհամեմատ հոտերն ու շարունակական կորովը, որ մը աշխարհահայտն լուսակահար մը կ'ընայ ըլլալը:

Նոյն տարուան Մայիսին, Խարտական Պէտլըրի երթալով՝ Ամերիկեան Համալսարանի Տեքսէսի մէջ յաջող նուագահանդէս մը տալու է միայնի Թունց Բոյնին է նպատակ:

1961-ի Մայիսին, Խարտական շարք մը նուագահանդէսներ պիտի տայ Պոլսոյ, Աթէնքի և Պէտլըրի մէջ:

Տաղանդաւոր լուսակահարին երաժշտական ուսման ծախքերը տարիներով հոգացած է ազնուատիրու և հարասէր տանըմարգայի տիկին Գունգայի:

ԱՆՈՒԱՆԻ ԵՐԳՉՈՒՂԻ ՌՈԶԻ ԱՐՄԷՆ
ՊԱՐՍԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Պարսկաստանի կարեւորագոյն կոստանուսթիւններէն Բոնեպ փախլաիի հրատարակ, Երկրորդ անգամ ըլլալով, Փրոմեսանայ անուանի երգչուհի Ռոզի Արմէն, Թեհրանի մէջ, Օգոստոս 15-էն 22, բազմաթիւ երգահանդէսներ տալու է: Ներկայ եզոյ գեղարուեստներ հոծ կաւարակութիւնը, յամեղապա ծախքերով, անգամ մը ևս իր անվերապահ գեղատեսնէք յայտնած է շնորհակի հայ արուեստագիտուհիին:

Թող Արմեն հրապարակի վրայ ունի 9 սկստական, որովհետև ամեն անկի սպասած է «Արցունքները», Վոս սեկուկէս միլիոն: Մոս օրէն, երկու մոր սկստական եւս հրապարակ պիտի համէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԷՏ Վ. ԿՈՐՏՈՆԻ
ԳԻՐՔԸ ԱՊՐԵՆԻՆԷՆ

«Կեանքի Կանաչ Արեւ», «Զմրուխտակիր Ասպար», եւ «Բոսորաւոր Յայանութիւնը» ֆրանսերէն լեզուով գրուած երեք յարկանշական վեպերուն «հղինակը»՝ Վիկտոր Կորտոն (բուն անունով Վալերա՛ Կարաւան, վանեցի, այժմ ֆրանսահայաստակ) ուրախութեամբ ողջունած է իր առաջին գիրքին «Կեանքի Կանաչ Արեւը» սպաներէն թարգմանութիւնը:

Վանի Նորաշէն եւ Երամեան վարժարաններու, Թիֆլիսի Ներսիսեան վարժարանի (1918), Թոստովի թեմական դպրոցի (1920) եւ Խոթանպուլի Կեղրոնականի (1922) այս նախկին անը՝ 1928-ին է որ Հաստատուած է Ֆրանսա եւ Հեռտեւած գիւղատնտեսութեան, ապա ֆիլոսոփայութեան եւ գեղարվեստութեան՝ Սորբոնի մէջ:

Եղած է գինուոր, ծառանկցած է գիժագրական շարժումին՝ Վիկտոր Կորտոն անունով: Գնահատուած է Պատուայ լեգէոնի Ասպետ - Պատերազմական Խաչ, Գիժագրականութեան շքանշաններով: Տիպրան Գիժագրական Հեռ ֆրանսերէնի թարգմանած է (1984) Դ. Գիժագրական «Վարդանանքը»:

Եւ Սու Վերտէ տէ լա Վիտա՞ գիրքը քանի մը շարքիցն սպասած է, ճիշդ գերմաներէն թարգմանութեան նման՝ Ի Ջոնցերիս (1984):

ՋՈՒԹԱՆԱԿԱՐ ԼԵՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Միճեափոխ Միճօրնի նուագախումբի առաջին ջութակահարն է Հերի Գրիգորեան, եղբայրը՝ Երածշտագէտ-խմբավար Թուրէն Գրիգորեան:

Ծնած է Թարիգ: Աւարտել է իւր թեմական երաժշտանոցը, իբրեւ մեմանուագող թեմականի Միճօրնի մէջ ընդունուած է:

Ամերիկայի Հարվըրտ համալսարանի կից, Լոնկի Սթալ սով Միուզիէ հաստատութեան մէջ չորս տարի ուսանել է եւս, վկայուած է պատուաբեր յիշատակութեամբ: Ապա, Պոսթըմի Համալսարանէն ստացած է Մէլքսեբբեր տիպոգր:

Իր առած նաւագանձը տեղափոխ անթոլ, ամերիկեան քերթերու երաժշտական քննադատներ գնահատուած յիշատակած են իր կարգութիւնները:

Ջութակի ուսուցիչ Միճեափոխի Հափիմա երաժշտանոցին մէջ, Հերի Գրիգորեանին առաջարկուած է ստանձնել զեկավարութիւնը Սթոլ սեմնկային նուագախումբին:

ՏՈՒԹ. ԱՐՔԻՆ ԱՐՔԻՆԵԱՆԷ
ՆՎԱՐՆԵՐՈՒ ՀԱՌԱՔԱՄՈՅԻՆ
ՅՈՒՅԱԳՐՈՒԹԻՆԷ

Նի. Երզնէ պետական Համալսարանի կալուածէն մէջ ցուցադրուած են Տոգթ. Արքին Արքիսեանի անձնական Հաւաքածոյին մաս կազմող նկարներու շուրջ 174 թաւաններ, որոնք կը ներկայացնեն Վեզթոր Հիւրոյն սկսեալ մինչեւ ասանին ներդրող-քանակորդ գորու ֆրանսական գրողներու նկարները:

Տոգթ. Արքիսեան տարիներ շարունակ Եղած է Նի-Երզնէ «Պարթ Գալէն» ֆրանսերէնի ուսուցիչ:

ՋՈՐՄ ՀԱՅԵՐ՝ ԸՆԿԵՐՈՒԹԱՆԱԿԱՆ
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԷՋ

Էպիտանի մէջ վերջերս գումարուած ընկերարանական միջազգային համագումարին մասնակցած են չորս Հայեր: Միացեալ Նահանգներէն՝ ընկերարանութեան քառասուն տոգթ. Վալերա Տարեան եւ Հայաստանէն՝ երեք հայ մասնագէտներ:

